Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Արձակ, Ուղեգրություն, Ակնարկ
13+

# Շիրվանզադե
# Պատերազմի վայրում

**1.**

1914 թվականի նոյեմբերի կեսն էր, երբ Թիֆլիսից դուրս եկանք: Մեր փոքրիկ ճամփորդությունը գծել էինք այսպես. գնալ Էջմիածին և Իգդիրի վրայով անցնել Բայազեդի շրջանը, այդտեղից Ալաշկերտի հովիտը, հետո Բասեն և Դելի-Բաբայի ու Խորասանի վրայով գնալ Ձիվին: Այսպիսով, մենք կարծում էինք, գծելով մի աղեղնաձև ուղի, այցելել բոլոր այն վայրերը, որոնց գրավել էին ռուսական զորքերը, և տեսնել պատերազմի բեմը:

Մենք ունեինք մի որոշ հանձնարարություն, որ բավական բարդ ու պատասխանատու էր: Գնում էինք թեև սիրով, բայց հոգեպես ճնշված: Եթե արդարև մեր լսածները ստույգ են, անկասկած հայ ժողովրդի պատիվը վտանգի է ենթարկված, կարող է պատահել, որ ջուրը նետվի մի դատ, որի համար արյունաքամ է եղել գրեթե ամբողջ հայությունը: Գանգատներն ու դժգոհությունները եկել էին այնպիսի անձերից, որոնց ստիպված էինք հավատալ: Այն ժամանակ ոչ միայն այդ անձինք, այլև մենք չգիտեինք, որ չար լուրն արդյունք է հայ ժողովրդի ազգային ինքնասիրության ու պատվարժանության դեմ գործող տարրերի բանսարկության: Եվ մենը մտածում էինք, եթե այդ չար լուրը համառորեն շարունակվի ու տարածվի և մեր կողմից ջանքեր չգործադրվեն նրա առաջն առնելու, հազար գլխանի հրեշը կկատարի իր վատթար դերը, մեզ կմնա միայն ողբալ իրերի վիճակը:

Իսկ չար լուրը հետևյալն էր. թե ռուսական բանակի մեջ գտնվող հայ շարքային զինվորները, իրենց մարմնին այս կամ այն թեթև վնաս տալով, ձևանում են վիրավոր՝ կռվի դաշտից անամոթաբար փախչելու համար, թե սահմանագլխի հայ գյուղերը

նրանց պատսպարում են, թե հայերն առհասարակ գողանում են, թալանում և այլն և այլն:

Այսպես թե այնպես, մեր մտատանջությունը մեծ էր, հոգեկան վիճակն անտանելի:

Մեր խումբը բաղկացած էր չորս հոգուց, մի հոգևորականից (Մեսրոբ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան) և երեք աշխարհականից (Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունց, բանաստեղծ Հովհաննես Թումանյան և ես), էջմիածնում մեզ միացան Խորեն եպիսկոպոս Մուրադբեգյանը և Երևանի ապագա քաղաքագլուխ Սմբատ Խաչատրյանցը:

Մի գիշեր էջմիածնում անցկացնելով, առավոտյան կառքերով ուղևորվեցինք Իգդիր, ավելի ճիշտ կլիներ ասել մտանք Կովկասյան աշխարհահռչակ տիղմի մեջ: Այո, պետք է արժանավոր հարկը տալ Երևանյան նահանգի ադմինիստրացիային, որ տարիների ընթացքում զարմանալի տաղանդ է գործադրել երկրի ճանապարհները ճամփորդների համար կատարելապես կորստաբեր դարձնելու համար:

Ընդամենը 36 վերստ է էջմիածնից մինչև Իգդիր, և այդ տարածությունը մենք անցանք յոթ ժամում: Գոհ էինք, որ մեր կառքերը չթաղվեցին թանձր տիղմի մեջ, մենք ստիպված չեղանք ճանապարհը ոտքով կտրել: Նման դժբախտություն ունեցել էին մեզնից առաջ ճամփորդները:

Մութ մառախուղային ցուրտ ու խոնավ երեկո էր, երբ մենք մտանք Իգդիր կոչված ճահիճը: Իջևանեցինք տեղացի վաճառական պ. Արշակ Հակոբյանի մաքուր և ընդարձակ բնակարանում: Դա մի հաճելի սյուրպրիզ էր մեզ համար, որովհետև գիտեինք, որ Իգդիրում բոլոր «հյուրանոցները» և մասնավոր բնակարանները վարձված են օֆիցերներից:

Եկան մեզ հետ տեսնվելու տեղական մի քանի մտավորականներ և հաղորդեցին շատ հետաքրքրական նորություններ ռուս բանակի հաղթական շարժման և մերձավոր թուրքահայերի կացության մասին:

Հայեր ենք. կարճ խոսել չգիտենք, ուստի մեր «շտապ» զրույցն ու վիճաբանությունները տևեցին մինչև ուշ գիշեր:

Հազիվ պառկել էինք, երբ ամեն կողմից լսվեց շների ոռնոց: Մի բան, որին չեն դիմանում իմ ներվերը մանկությունից սկսած:

Առավոտյան այցելության եկան նախկին դերասան և այժմ պահեստի պրապորշչիկ Շահխաթունին: Նա հայտնեց մեզ, թե գեներալ Օգանովսկին պատրաստ է մեզ ընդունելու, երբ կամենանք: Հարկավ, շտապեցինք օգտվել հրավերից, քանի որ շատ բան էր կախված գեներալի ընդունելությունից:

Բարեբախտաբար, Իգդիրում կառքեր կային, այլապես չգիտեմ ինչպես պետք է անցնեինք մի արշին ցեխով ծածկված փողոցները: Քսանուչորս տարի առաջ ամառվա վերջերին ես մի անգամ եղել էի Իգդիրում և նրա ընդարձակ ծառազարդ փողոցներն ինձ վրա լավ տպավորություն էին թողել: Այս անգամ ես հիասթափվեցի:

Ընդունելությունը գեներալ Օգանովսկու կողմից եղավ սիրալիր: Դա մի բարեհամբույր, կայտառ և եռանդուն ծերունի էր, որի աշխատասիրության մասին նրա ստորադրյալները խոսում էին հիացմամբ: Նա գիտե իր դիմացին ի մեջ զարթեցնել համակրանք դեպի իր անձնավորությունը իր խելացի, մարդասեր դատողություններով: Շատ ուրախացավ, երբ իմացավ, թե ինչ նպատակով ենք

պատերազմի դաշտը գնում, խոստացավ իր աջակցությունը և իսկույն կարգադրեց, որ թիկնապահ Շահխաթունին ուղեկցի մեզ մինչև Արծափ՝ տասը կազակների հետ:

Խոսք բացվեց մեր կամավորների վերաբերմամբ: Հարկավոր էր իմանալ հեղինակավոր զինվորականի կարծի որ հայի զինվորական ձիրքի մասին:

— Գիտե՞ք,— ասաց գեներալը, ժպտալով, — պատերազմի դաշտում առաջնության դափնին պատկանում է, իհարկե, կանոնավոր զորքին և առանձնապես հետևակ զորքին: Այնտեղ կան գիտություն, կարգապահություն, փորձառություն, վերջապես թնդանոթներ, գնդացիրներ և այլն: Դրանցով է, որ մենք պետք է հաղթենք մեր թշնամուն: Ինչ վերաբերվում է կամավորներին, նրանք ևս ունեն իրենց դերը, որ, իհարկե, նույնպես կարևոր է: Այդ դերն է գլխավորապես երկրի հետազոտությունը և թշնամու դիրքերի որոշումը: Այս տեսակետից ահա ես գնահատում եմ հայ կամավորական խմբերի մասնակցությունը. նրանք ճանաչում են թշնամի երկրի բոլոր անկյունները, գիտեն լեզու, ծանոթ են տեղական պայմաններին: Ես առանձնապես գնահատում եմ Անդրանիկին իբրև ամենից ավելի փորձառու խմբապետի: Եթե մեզ հարկավոր լինի արշավել դեպի Վան, անկասկած նա կկատարի որոշ դեր:

Խոսակցության ամբողջ ժամանակ ներկա էր և զորաբանակի շտաբի գլխավոր գեներալ Լ.-ն: Նա ոչինչ չասաց և մնաց լուռ մինչև վերջը: Միայն նրա սառը դեմքն արտահայտում էր ինչ-որ տարակուսանք, որ համենայն դեպս խրախուսիչ չէր մեզ համար և մեզ ևս տարակուսանքի մեջ էր գցում... Ինձ համար պարզ է, որ այդ մարդը մտքում արհամարում է մեր կամավորական խմբերը:

Վերադարձանք մեր ժամանակավոր կացարանը և կես ժամ անցած ընդունեցինք գեներալ Օ.- կու փոխայցելությունը: Այս անգամ խոսակցությունն ավելի մտերմական եղավ: Ուրախ եմ շեշտել, որ մեր եպիսկոպոսները, չնայելով իրանց անփորձությանը, կարողացան բավական քաղաքագիտական տակտ ցույց տալ և, կարծես, գրավեցին գեներալի հավատն ու համակրանքը: Այդ էլ մի բան է:

— Ես հայերին համակրում եմ անկեղծ,— ասաց ի միջի այլոց գեներալը,— կփափագեի, որ այս անգամ ձեր թուրքահայ եղբայրների խնդիրը վերջապես լուծվեր: Գիտե՞ք, իմ արյան մեջ էլ մի քիչ «Կարապետ» կա:

Երեկոյան մեզ հրավիրեցին այցելել հայ կամավորների կացարանը:

Այնտեղ մենք տեսանք մոտ հարյուր հոգի, որ պիտի շուտով գնային մեր խմբերից մեկին միանալու: Կային անբեղ, անմորուս ուսանողներ, կային կյանքի դառնությունները փորձած արհեստավորներ ու բանվորներ: Կային անձինք, որ առաջին անգամը չէր, որ գնում էին պատերազմի դաշտը: Դրանք նախկին զինվորներ էին: Տեսա երկար ու սև մորուքով մեկին, որի կուրծքը զարդարված էր մի քանի շքանշաններով:

— Ե՞րբ է ստացել նա այդ շքանշանները,— հարցրի ես մեզ ուղեկցողներից մեկին:

— Ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ:

— Իսկ այն մյո՞ւսը:

— Նա նույնպես:

Տեսա մի հաղթանդամ ռուս երիտասարդ, որ հասակով ամենից բարձր էր: Ճանաչեցի: Դա բավական հայտնի օպերետային երգիչ Վոլգինն էր: Նա արդեն եղել էր

պատերազմի դաշտում Ավստրիայի կողմերում և այժմ եկել մտել է հայ կամավորների շարքը:

— Ի՞նչն է բերել ձեզ այստեղ, — հարցրի ես ռուսին:

— Գաղափարը: Փափագում եմ ծառայել մի փոքրիկ տառապյալ ժողովրդի ազատության գործին:

Այնտեղ էր նաև ուսանողուհի օր. Սաթենիկ Պողոսյանը կամավորի զգեստով, բայց թևին կապած սանիտարի ժապավեն:

Դա մեկն էր գթության այն քույրերից, որոնք մի ամիս անցած պիտի անակնկալ ընկնեին թուրքերի ձեռքը Սարիղամիշի մոտ №2-րդ սանիտարական գնացքի հետ և ազատվեին մի քանի օր կյանքի և մահու մեջ տառապելուց հետո:

— Գնում եմ կարողությանս չափ տառապյալների ցավը թեթևացնելու,— ասում էր համեստ օրիորդը,— երջանիկ կլինեմ, եթե կարողանամ գոնե մի վիրավորի վերքը կապել:

Տարբեր լեզվով էին խոսում նրա ուսանողական ընկերուհիներ Եվգինե և Մարիա Ռախմանովաները: Դրանցից մեկն օրիորդ էր, մյուսը տիկին, որ գնում էր իր ամուսնու՝ Կարպ Սերգեևիչ Ռախմանովի հետ: Նրանք ուղղակի ասում էին, թե գնում են կռվելու ինչպես հասարակ զինվորներ: Եվ անչափ վշտացած էին, որ գեներալ Օգանովսկին թույլտվություն չի տալիս նրանց գնալու իբրև զինվորներ: Նրանք խնդրում էին մեր միջամտությունը, բայց մենք ևս անհարմար էինք համարում նրանց գնալը:

— Մենք որոշել ենք գնալ և անպատճառ գնալու ենք,— ասում էին նրանք գրականորեն,— թեկուզ ձերբակալեն մեզ:

Արդարև երեք շաբաթ անցած, երբ մենք վերադառնում էինք Ալաշկերտի հովտից՝ նրանց հանդիպեցինք Ղարա-Քիլիսեում կամավորների նույն խմբի հետ: Նրանք եկել էին այնտեղ ոտքով՝ անցնելով մոտ հարյուր երեսուն վերստ ճանապարհ ձյունապատ լեռներով և ձորերով: Եվ դարձյալ ոգևորված էին, առողջ, կայտառ և անհամբեր ձգտում էին դեպի պատերազմի վայրերը: Եվ նրանց ոգևորությունը միանգամայն անկեղծ էր, միանգամայն զուրկ կանացի սեթևեթությունից: Ահա ինչու անհնարին, նույնիսկ մեղք էր դիմադրել նրանց վեհ ցանկությանը և, կարծեմ, այլևս ոչ ոք չէր դիմադրում:

Իսկ մեզ մնում էր միայն հիանալ ռուս կնոջ հոգու կորովով և սրտի ընդարձակությամբ:

## II

Իգդիրում մնացինք երկու գիշեր: Նոյեմբերի 19-ին հազիվ զարթնել էինք, երբ եկավ Շահխաթունին՝ մեզ ավետելու, թե գեներալը անթել հեռագրով լուր է ստացել, որ Անդրանիկի հարյուրյակներից մեկն երկարատև ճակատամարտից հետո կարողացել է փառավորապես գրավել Ղոթուր անունով ինչ-որ կարևոր դիրք թուրք-պարսկական սահմանում, սպանել ու վիրավորել է մոտ հարյուր թուրք ու քրդեր և վերցրել է 200-ից ավելի գերիներ:

Երկինքը պարզվել էր: Ուշ աշնանային պայծառ արեգակը մեզ տրամադրում էր շուտով ճանապարհ ընկնելու: Վախենում էինք եղանակը վատանա, և մենք լեռներում ընկնեինք բուք ու բորանի բերանը:

Նախընթաց երեկո խնդրել էինք, որ մեզ համար գնվեն ինը ձի, յոթը հեծնելու, երկուսը բեռնակիր: Բերեցին մի շարք յաբուներ, մեկը մյուսից ողորմելի: Ինչ արած, ստիպված էինք վատագույնների մեջ ընտրել վատերը: Տեղական բոլոր քիչ թե շատ պիտանի ձիերը վերցրել էին զորքերը: Սկսվեց առևտրի ձանձրալի սակարկությունը, որ ինձ համար միշտ անտանելի է եղել և որ հայը գիտե դարձնել միանգամայն զազրելի: Մարդիկ չէին խնայում ոչ իրենց ժամանակը և ոչ իրենց ներվերը մի քանի ռուբլու համար միևնույն բանը քառասուն անգամ կրկնելու: Մի կողմը չափազանց էր պարսավում, մյուսն արդեն շատ անամոթաբար էր գովաբանում իր ապրանքը: Համենայն դեպս տեսարանը շատ հեռու էր գեղեցիկ լինելուց:

Այսպես թե այնպես, առևտուրը կայացավ: Խաբողները եղան վաճառողները: Քոսոտ ձիերը գնվեցին իրենց արժեքից ավելի գներով: Այնուհետև մեջ ընկավ թամքերի խնդիրը: Նույն սակարկությունը, գոռում-գոչյունները, դեսուդեն վազվզելը, տեղացիների միմյանց մեղադրելը հազիվ թե ոչ քրեական հանցանքների մեջ և այլն:

Այդ էլ տևեց մի ամբողջ ժամ:

Վերջապես, ճանապարհ ընկանք կազակների համբերությունը սպառելուց հետո:

Քրդական փոքրահասակ ձիերը մինչև իրենց որովայնը խրվեցին նոսր ցեխի մեջ և կեղտոտ ջրի շիթերը բարձրացան մինչև մեր ուսերը: Կարծեմ մեր թափորը պիտի բավական կոմիկական լիներ Ավետիս Ահարոնյանցի ծննդավայրի համար:

Ինձ թվաց, որ իմ երիվարը, տեսնելով իմ ձեռքում մտրակի փոխարեն քաղաքային ջենտլմենի բարակ ձեռնափայտ, իսկույն ըմբռնեց, որ վտիտ մեջքի վրա նստողն անփորձ մեկն է: Արդարև, կյանքումս ընդամենը երկրորդ անգամն էի ձիով ճամփորդում: Եվ խելացի կենդանին դրականապես որոշեց կառավարվելու փոխարեն կառավարել: Եվ ես ամենայն սիրով հպատակվեցի նրա կամքին, թույլ տալով նրան անել, ինչ որ խելքը կտրում է: Իսկ նա նախ և առաջ բարվոք համարեց մի քանի րոպե առաջ վազել և այնուհետև ետ մնաց մինչև վերջը…

## III

Հույս ունեի, որ գյուղաքաղաքից դուրս գալով մենք կազատվենք ցեխի հանքերից: Ի՜նչ մոլորություն: Շուտով նոսր տիղմը փոխվեց թանձրին: Մեր ձիերի ընթացքը քանի գնաց, այնքան ավելի ու ավելի դանդաղացավ:

Պատահեցինք պատերազմական մթերքներ կրող ուղտերի անվերջ շարանների և մեր դրությունն ավելի բարդացավ: Բիբլիական կենդանիները իրանց երկար ոտներով կտրում էի ճանապարհի ամբողջ լայնությունը: Մեր փոքրիկ ձիերը հերոսական ճիգեր էին անում նրանց լայն թաթերի տակ ճխրտվելու համար:

Բայց խեղճ վիթխարիներ: նրանք իրենց ծանր բեռների տակ տնքում էին, արձակելով բարձր հառաչանքներ և թուր տարածելով աջ ու ձախ: Նրանց երկար պարանոցները ձգվել էին տարածության մեջ, ինչպես կաղնիների ծուռ կոճղերը, և սև դունչերը ցցվել էին դեպի երկինք: Կարծես, ապաբախտ արարածները բողոքում էին աստծու դեմ, որ այնքան դաժան է եղել իրանց վերաբերմամբ: Մերթ ընդ մերթ ավելի անհամբերները վրդոհվում էին այնպես, որ կտրում էին իրանց միմյանց շղթայող սլարանը և ճանապարհից դուրս վազում, գոռալով: Այն ժամանակ սկսվում էր նրանց տերերի տանջանքը: Որպիսի դաժանակիր աշխատանք էր հարկավոր ըմբոստներին նորից շարքի մեջ մտցնելու համար:

Մեր առաջնորդը, որ մի երիտասարդ հայ կամավոր էր, երևի, ձանձրանալով ուղտերի վտանգավոր հարևանությունից, կամ գուցե կամենալով ցույց տալ մեզ իր վարպետությունը, ճանապարհից շեղվեց դեպի աջ: Մեր եպիսկոպոսները հետևեցին նրան, մենք ևս կազակների հետ:

Զուր խեղճ Շահխաթունին բողոքեց և աղաղակեց, խնդրելով ետ դառնալ, մեր սրբազանները չվախեցան նրան լսել և, մտրակելով իրանց նժույգներին, արշավեցին առաջ: Երևի հափշտակվել էին կանաչազարդ տափարակի համեմատական զորությամբ:

Ինչ արած, ստիպված էինք նրանց հետևելու, որպեսզի չանջատվենք միմյանցից, ի նկատի ունենալով մերձեցող իրիկնային խավարը:

Շուտով զգացինք մեր առաջնորդի սխալը և շատ դառն: Ընկանք ճահիճների մեջ, Օրգովի այն պատմական ճահիճների, ուր, ըստ ավանդության, հին ժամանակներում կարավաններ և զորքեր են կործանվել:

Սկզբում դեռ ոչինչ, մեր ձիերը քայլում էին բավական ազատ: Բայց հետզհետե ճահիճը խորանում էր, և մեր դրությունը ավելի ու ավելի վտանգավոր դառնում:

Դժբախտաբար, մութն արդեն սկսվել էր, և մենք գրեթե ոչինչ չէինք տեսնում: Գոնե ես ոչինչ չէի նշմարում, բացի ճահիճների նենգավոր մակերևույթից և հեռավոր ձյունապատ լեռների կաթնագույն սիլուետներից:

Վերադառնալ այլևս անկարելի էր: Հույս ունեինք, առաջ գնալով, դուրս գալ տիղմի միջից: Բայց հանկարծ մեր ձիերը կանգ առան, չկարողանալով շարժվել ոչ առաջ և ոչ ետ:

Մենք արդեն ցրվել էինք զանազան կողմեր: Կազակները չքացել էին, մնում էր Շահխաթունին: Հետևից լսեցի Հովհաննես Թումանյանի ձայնը:

— Հազիվ թե այս ձիերը կարողանան մեզ դուրս բերել այստեղից,— ասում էր նա:

Նայեցի ետ: Նա արդեն իր ձիու հետ երկու անգամ ընկել էր ու վեր կացել: Այժմ կանգնած էր ցեխաթաթախ երիվարի քով մի ձեռով բռնած նրա սանձը, մյուսով իր կրկնակոշիկները: Հետո զգացի, թե նա որքան խելոք է վարվել այդ թանկագին ոտնամաններն այնպիսի խնամքով պահելով: Ես իմ կրկնակոշիկներից մեկը թողեցի ճահճի մեջ և հետո շատ ու շատ տուժեցի, երբ ստիպված էի քայլել սառույցների վրա:

— Թը՛ը՛լփ— լսեցի առջևից մի փափուկ ձայն: Նայեցի. Ներսիսյան դպրոցի տեսուչ պ. Խունունցն էր, որ իր ձիու հետ մեղմիկ ընկավ կողքի վրա:

— Յոսիֆ Նիկիտիչ, ի՞նչ պատահեց,— հարցրի ես, կարծելով, որ մարդը պիտի խեղդվի, չկարողանալով ազատվել ձիու տակից:

— Ոչինչ,— պատասխանեց պատկառելի մանկավարժը ամենայն անդորրությամբ և իսկույն ոտքի ելավ իր ձիու հետ:

Կարծում էի, որ գոնե ես կազատվեմ փորձանքից: Չեղավ: Մի քանի վայրկյան ևս, և ահա իմ ձին էլ դողդողաց, փռշտաց ու թավալվեց նույնպես իր ձախ կողքի վրա: Իմ անկումը ոչ մի ցավ չպատճառեց ինձ: Զարմացա անգամ, որ կարողացա այնպես արագ ոտքի ելնել և ձիուս էլ բարձրացնել:

Պարզ էր, որ մեր դրությունը և՛ ծիծաղելի էր, և՛ տրագիկական: Բայց ես վրդովված էի մինչև հոգուս խորքը մեզ առաջնորդող կամավորի և մանավանդ երկու եպիսկոպոսների ֆանֆարոնությունից: Կարծես, հենց մեր գլուխներին էր վիճակված նրանց դալլաքությունը փորձելու:

Ետ նայեցի և ի՞նչ տեսնեմ: Հովհաննես Թումանյանը կախարդական գավազանի հարվածով ճահճի միջից դուրս է կանչել մի նոր նժույգ և վրեն փառավորապես նստել ու մյուս ձիու սանձը բռնել: Նախանձս շարժվեց:

— Այդ ձին ո՞րտեղից գտար, Հովհաննես,— հարցրի ես զարմացած և վրդովմունքս մոռանալով:

— Ի՞նչ ձի:

— Այ, որի վրա նստած ես:

— Տակիս ձի չկա, կողքիս է:

Տարօրինակ իլյուզիա: Դուրս եկավ, որ մեր բանաստեղծը բարձրացել է երկու պինդ ցեխակույտերի վրա, որպեսզի ավելի չապականի Սամսոն Հարությունյանի միջնադարյան մուշտակը:

Մեզ մնում էր մի կերպ քայլել ոտքով: Բայց որ կողմը — չգիտեինք:

Մեզ հետ միասին ճահիճ էր ընկել ուղտերի մի ամբողջ կարավան: Եվ դա մեր դրությունն ավելի դժվարացնում էր, վասնզի մթության մեջ դժվար չէր ընկնել ուղտերի ոտքերի տակ: Ոչ մեր խնդիրը, ո՛չ սպառնալիքը և ո՛չ դրամի խոստումը չէին ազդում ուղտապանների վրա, որ մեզ ցույց տան մի ելք: Նրանք զբաղված էին իրենց ցավով.

Ինձ թվում էր, որ մինչև լույս պիտի մնայինք ճահճի մեջ և, ես մտածում էի, թե ինչպես պիտի դիմանանք գորտերի վիճակին: Խոնավությունն արդեն թափանցել էր մինչև ոսկորներիս ծուծը:

Բարեբախտաբար Շահխաթունու ձին իր բարձրության և ամրության շնորհիվ չէր ընկել: Նա առաջ գնաց: Մենք հետևեցինք նրան:

...Եվ այդպես, մոտ երեք քառորդ ժամ խավարի մեջ դեգերելուց հետո, դուրս եկանք ինչ-որ դաշտավայր: Ձայն տվեցինք, լապտերը վառեցինք, և մեկ-մեկու հետևից եկան մեր մյուս ընկերները: Եկան նաև կազակները: Շահխաթունին մեկ-մեկ կանչեց նրանց թվահամարները: Մեկը պակասեց: Մի ուրիշի ուղարկեց նրան գտնելու, նա էլ կորավ:

Վերջապես ամենքը ժողովվեցին: Հայտնվեց, որ բոլորին պատահել է մեր դժբախտությունը: Բոլորին, բացի Խորեն եպիսկոպոսից, որի բախտը վիճակել էր մեր ձիերի մեջ ամենադիմացկունն ու ամուրը:

Ցուրտը սաստկացավ, երբ սկսեցինք ելնել Օրգովի բարձունքը: Այժմ ճանապարհը չոր էր, վասնզի երկիրը սառել էր: Քրդական ձիերը մի առանձին ընդունակություն ունեն քայլելու սառցապատ տեղերում: Իմ փոքրիկ ձին սառած քարքարոտն անցնում էր կատարյալ մարդկային զգուշությամբ, ինձ տանելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ և երբեմն ճանապարհից շեղվելով:

Իմ թաղիքյա երկայնավիզ կոշիկները մինչև ծայրը լցվել էին ջրով, և ոտքերս նրանց մեջ լողում էին բադերի պես: Բայց մրսելուց երկյուղ չունեի: Մտածում էի միայն

ընկերներիս մասին: Բարեբախտաբար նրանցից և ոչ մեկը բամբակի և փետուրների մեջ չէր ծնված ու սնված:

Հասանք Օրգով: Գյուղ է թե ինչ— չգիտեմ, բայց վերջին ռուս կայարանն է: Այնուհետև սկսվում է Չինգիլի բարձրավանդակը և ապա Թուրքիան:

Ռուս օֆիցերները մեզ ընդունեցին այնքան սիրալիր, որքան թույլ էր տալիս իրենց վիճակը: Զարմացան, որ մենք ճահիճների միջից դուրս ենք եկել առանց կորստի:

— Եթե մի փոքր էլ առաջ շարժվեիք,— ասաց մեկը նրանցից,— պիտի հանդիպեիք ստորճահճային ճեղքերի, ուր և անշուշտ կգտնեիք ձեր հավիտենական օթևանը:

Գիշերելու համար կոմենդանտը մեզ տվեց երկու մաքուր սենյակներ, հրամայելով վառարանները վառել:

Մեր տրամադրությունը միանգամայն փոխվեց, երբ զինվորը մեջտեղ բերեց ժանգոտ սամովարը: Ինչ ասել կուզե, որ մենք իսկույն այն դատարկեցինք:

Թեյը մեզ զվարթացրեց և կազդուրեց: Սքանչելի՜ հեղուկ: Քանի-քանի անգամ ես մեզ ազատել մռայլ տրամադրությունից, գուցե և հիվանդությունից:

Վառարանը վառվեց մեծ դժվարությամբ, բայց իսկույն նրա դռնակը ծածկվեց թրջված գուլպաներով, կոշիկներով ու կրկնակոշիկներով: Բարձրացավ անտանելի գոլորշի, որի մեջ քնել կարողանալու համար հարկավոր էին մեր ջարդված ներվերը:

Եվ մենք քնեցինք անդորր քնով, կանխավ հաճույքով ճաշակելով Հովհաննես Թումանյանի անեկդոտները Լոռվա կյանքից:

## IV

Առավոտ է. արդեն ինը ժամը: Իսկ մենք նախընթաց երեկո որոշել էինք ճանապարհ ընկնել ոչ ուշ՝ քան ութ ժամին:

Մենք պատրաստ ենք: Բայց մեր բեռնապահները Հովբ Երանելու համբերությունն անգամ սպառելու չափ դանդաղ են: Ինչո՞ւ, որովհետև հայեր են: Մի թե հինգ անգամ պատվիրածդ նրանք կարող են մի անգամ կատարել: Մի՞թե նրանք չպիտի միևնույն իրը տասն անգամ վերցնեն և տասն անգամ էլ ետ դնեն, որպեսզի նորից վերցնեն և նորից ետ դնեն, միշտ մրթմրթալով, միշտ տրտնջալով: Հազար բարկացիր, հազար գոռա սպառնացիր: Ոչինչ չի ազդիլ: Չէ որ ազդելու համար ներվեր են հարկավոր:

Ճարահատյալ դուրս ենք գալիս զորանոցից շրջակայքը դիտելու, մինչև որ հայկական կրիան կշարժվե իր տեղից:

Եվ չենք զղջում. ընդհակառակը, ուրախ ենք, որ ուշացանք: Ի՜նչ սքանչելի տեսարան. Օրգովի սառած կրծքից դեպի վեր ձյունապատ լեռներ, դեպի վար գույնզգույն դաշտերը, մութ ձորերը և ավելի հեռավոր սարերը: Մի՞թե մի այդպիսի պատկերի առջև ամենաանբախտ հոգին անգամ կարող է գեթ մի քանի վայրկյան չմոռանալ այս անիրավ կյանքի դառնություններն ու վշտերը և չզգալ, որ աշխարհը դարձյալ հրապուրիչ է, չնայելով իր անարդարություններին: Ահա, նույնիսկ այն նենգավոր և կեղտոտ ճահիճները, որ երեկ մեզ կորուստ էին սպառնում, այսօր հեռվից թվում են կախարդական գորգեր՝ սփռված լայնատարած դաշտերի վրա:

Միայն գոռոզ Արարատն է, որ թանձր ամպերով սքողված չի կամենում ցույց տալ իր կերպարանքը: Գուցե նա զբաղված է իր մռայլ խոհերով: Չէ որ նա է բաժան-բաժան եղած ազգի ապաբախտը՝ սիմվոլը. մի ազգի, որի ապագան նույնպես թանձր ամպերի մեջ է: Եվ այժմ ավելի թանձր, քան երբևէ...

Բայց Արագա՛ծը: Նա, կարծես, հոգ չունի: Նա ոտքից մինչև գլուխ պարզել է իր ձմեռային գեղեցկությունը պայծառ արեգակի տակ: Եվ ես նրան ավելի եմ սիրում, քան մռայլ Արարատը: Աստված իմ, ի՞նչ կախարդական գույներ են սփռված նրա վառ լուսավորված բարձունքների, նրա հպարտ կրծքի, նրա լայնածավալ փեշերի վրա: Այդտեղ, կարծես, ներկերի քնքշությունը մրցում է գծերի և շտրիխների նրբության հետ, և ընդհանուր առմամբ Արագածը պատկերացնում է մի երջանիկ արքայական նորահարս՝ կապույտ երկնակամարի վրա բազմած:

Բայց բավական է, որքան հիացանք բնության հրաշալիքներով: Մեր բեռներն արդեն բարձված են, ձիերը թամքված և բեռնապահները պարծենում են իրանց արած գործով:

Շտապում ենք ուղի ընկնելու:

Մոտենում է Շահխաթունին հուզված, այլայլված:

— Дядя,— ասում է նա, որ սովորություն ունի ինձ մորեղբայր թե հորեղբայր անվանելու,— տեսեք այդ թուրքահայերը ինչպես են մեզ խայտառակում:

— Ի՞նչ է պատահել, племянник,— հարցնում եմ ես:

— Տեսնո՞ւմ եք այն երիտասարդին, որին զինվորները տանում են,— նրան ձերբակալել են, որովհետև պարապում է անարժան գործով: Դա այն հայերից մեկն է, որոնք խնդրելով, աղերսելով, զենք են ստացել տեղական ինքնապաշտպանության համար: Այժմ այդ անպիտանին զինվորները բռնել են հրացանն ուսին գցած ապրանք տեղափոխելիս, նա Իգդիրից Բայազեդ ձուկ է տանում վաճառելու: Ահա, այն իշի վրա բարձածը նրա վաճառքն է: Տեսնո՞ւմ եք ինչի համար են գործ ածում զենքը՝ փոխանակ ինքնապաշտպանության: Կոմենդանտը չափազանց զայրացած է և սպառնում է գեներալին զեկուցանել, որ հայերին զինաթափ անեն: Չէ՞ որ դա ամոթալի է մեզ համար, ДЯДЯ, պետք է այդ խայտառակության առաջն առնել:

Ես հանգստացրի զայրացած բարեկամիս, որ չարժե արյուն պղտորել ամեն մի չնչին երևույթի համար, որ ոչ մի ժողովուրդ զերծ չի զազրելի տականքից: Դյուրազգաց արտիստին համոզելով հանգստանալ, ինքս ավելի էի զայրացել հոգուս խորքում: Հայաստանի սահմանագլուխը հաճելի սյուրպրիզ չէր պատրաստել մեզ համար: Փաստն ինքնստինքյան աննշան էր, բայց իմաստը շատ անմխիթարական: Գնում ենք լսելու մի կողոպտված, արյունաքամ եղած ժողովրդի հեծեծանքը և ահա առաջին քայլում նրա ցեղական վատ բնազդն է մեզ դիմավորում: Եթե այդպես շարունակվի, անտարակույս շատ շուտ պիտի գա մեր հիասթափումը: Նոր հապաղում: Պետք է սպասել ինչ-որ հեռագրի, որ ստացվել է ռադիոտելեգրաֆի միջոցով: Հայտնվում է, որ Մեսրոպ եպիսկոպոսին խնդրում են անմիջապես վերադառնալ Թիֆլիս և անպատճառ մինչև նոյեմբերի 24-ը այնտեղ հասնել: Գիտենք ինչու համար են կանչում: Կայսրը նոյեմբերի 26-ին պիտի ժամանե Թիֆլիս, սրբազանի ներկայությունը պարտավորական է:

Այնուամենայնիվ ես ժամանակ կունենամ ձեզ հետ մինչև Բայազեդ գնալու,— ասաց սրբազանը և ձին մտրակեց քաջարի զորապետի թափով:

Սկսվեց Ձինգիլի զառիվերը: Նախ գնացինք սառցապատ քարքարուտով, ապա թանձր միապաղաղ ձյունով ծածկված դարիվերով:

Նորից ուղտերի երկայն շարաններ, բայց այլևս նրանք չեն խանգարում մեզ, վասնզի չեն սայթաքում, որ երկյուղ կրենք դեսուդեն հրվելուց: Գնում են փիլիսոփայական լրջությամբ, դանդաղ որոճալով, ով գիտե, քանի օրվա որոճը: Մերթ ընդ մերթ իրանց սև շրթունքների թուքը ցողում են մեզ վրա սառն արհամարհանքով, երևի, բանի տեղ չդնելով մեր փոքրությունը: Որքա՜ն համր է նրանց քայլվածքը: Կարծես, հավիտենականության հետ գործ ունեն և երբեք չպիտի տեղ հասնեն: Ռուս զինվորն արդեն ընտելացել է ուղտի դանդաղությանը և հրացանն ուսին համբերությամբ, անձայն ուղեկցում է նրան որպես վաղեմի բարեկամ: Մի քիչ կոմիկական, բայց սրտաշարժ պատկեր...

Քանի բարձրանում ենք, այնքան ձյունը թանձրանում է: Այլևս ճանապարհ չի երևում: Նախընթաց գիշերվա բորանը ծածկել է այն: Գնում ենք ուղտերի թողած հետքով: Աջ ու ձախ անվերջ սարեր են, ծածկված ճերմակ սավանով, որ պայծառ արեգակի շողերից պսպղում է բյուրավոր կուրացուցիչ ադամանդներով:

Ամենաբարձր կետը Ձինգիլյան զառիվերի մոտ 7000 ոտնաչափ է, գրեթե նույնչափ, որչափ Գուդաուրը, որով այնքան հիացել և հիանում են ճամփորդները: Այդտեղ մի տափարակ բաժանում է Թուրքիան Ռուսիայից: Չկա այլևս հին սահմանը: Մնում է միայն նրա հետքը — մի մեծ քարասյուն: Կվերացվի՞ նա արդյոք. և ժամանակավո՞ր, թե առմիշտ — դժվար է գուշակել:

Ահա, վերջապես, արցունքների երկիրը: Նա, որ մեզ տասնյակ տարիներ այնքան տվայտանքներ է պատճառել է այնքան եռանդ կորզել մեր սեփական գործերից: Մեր հատ ու կտոր խոսակցությունն ընդհատվում է: Տիրում է խորհրդավոր լռություն քանի մի րոպե: Այնուամենայնիվ մենք բաժանվում ենք միմյանցից յուրաքանչյուրս իր տխուր տրամադրությունից դրդված: Ոչ մեկը չի ուզում խանգարել մյուսի խորհրդածությունները, և ի՜նչ հարկավոր են բանալ խոսքեր, քանի որ զգացմունքներն են խոսում, քանի որ հասկանում են իրարու:

Տափարակի վրա սկսվում է ոչ այնքան ուժեղ մի բուք, որ, սակայն, ինձ նման մի անփորձ ճամփորդի համար շատ զգալի է: Ասում են, որ այդտեղ բուք ու բորանը հավիտենական են, շնորհիվ անհրապույր Արարատի մերձավորության: Երբեմն քամին այնքան սաստիկ է լինում, որ իբր թե ձիավորներ է գցում:

Առաջին ընդհարումը ռուսների ու թուրքերի մեջ այդտեղ է եղել, ճանապարհից դեպի աջ, մի ոչ շատ բարձր լեռան լանջի վրա:

Շահխաթունին նորատի զինվորականի ոգևորությամբ նկարագրում է ինձ համար ճակատամարտի մանրամասները՝ մասնակից օֆիցերների պատմածներով: Իջնում ենք Կարե անունով մի կայան: Գյուղ է թե քարվանսարա— չգիտեմ, բայց թրքական մաքսատունն այդտեղ է եղել: Կեղտոտ է որպես ինքն ապականությունը և շրջապատված գարշահոտ ու վարակիչ ճահիճներով:

Հարկավոր է մի փոքր հանգստանալ, և մենք իջնում ենք հոգնած ձիերից ու մտնում մի ցածր ու կիսախարխուլ շինություն:

Երկու երիտասարդ օֆիցերներ մեզ ընդունում են մի քիչ զարմացած, բայց քաղաքավարի: Մեկը նրանցից բժիշկ է և նրա արտասանությունն ու մանավանդ հաստ շրթունքներն իսկույն մատնում են նրա ազգությունը: Հրեա է:

Արարատը, մերկացած թանձր ամպերից, այժմ ցցվել է մեր առջև, ինչպես շաքարի վիթխարի գլուխ: Պայծառ արեգակը ողողել է նրան ճառագայթներով այնպես, որ պարզ երևում է նրա յուրաքանչյուր խորշը:

Մաքսատունը դարձել է ժամանակավոր կայան պատերազմի դաշտից տեղափոխվող վիրավորյալների ու հիվանդների համար: Թեթև նախաճաշից հետո հրեա բժիշկը մեզ հրավիրում է այցելել «հիվանդանոցը»: Հետաքրքրվում ենք տեսնելու տառապյալներին: Մտնում ենք մի մեծ շտեմարան հողե հատակով, բորբոսնած պատերով և խարխուլ առաստաղով: Մարդիկ անկարգ, անկանոն թավալված են խոնավ հատակի վրա, ինչպես անբան անասուններ և տառապում են:

Նրանց երկու երրորդականը բաղկացած է հիվանդներից և միայն մի երրորդականը վիրավորյալներից:

— Պատերազմը, հարկավ, ամենուրեք աղետ է, — խոսում է մեզ առաջնորդող բժիշկն անկեղծ կարեկցությամբ,— բայց այս անիծյալ երկրում նա դժոխք է: Չկան ոչ ճանապարհներ, ոչ կացարաններ: Այս թշվառներին բերում են ուղտերով: Կարող եք երևակայել, թե ինչպես են տառապում: Նոր միայն որոշված է առանձին պատգարակներ պատրաստել, բայց ե՞րբ կստանանք — աստված գիտե:

Ես չկարողացա երկար դիտել տխուր տեսարանը և լսել գթասիրտ բժշկի նկարագրությունը մարդկային տառապանքների:

Դուրս եկա գավիթ և ի՞նչ տեսնեմ: Մեր ուղեկից տեր-Նիկոլը ընկել է գետին և սեղմվել մի մեծ տակառի և իր ձիու միջև: Նա ճիգ է անում դուրս գալ անհարմար դրությունից և չի կարողանում: Երկու հարեսիրտ կազակներ աշխատում են նրան օգնել, բայց ծիծաղը թուլացնում է նրանց ձեռքերը: Պարզվում է, որ պատվարժան տեր հայրը, կամենալով վաղորոք ձի նստել, բարձրացել է տակառի վրա: Վտիտ երիվարը չի կարողացել դիմանալ նրա ծանրությանը, գցել է նրան, ինքն էլ ընկել է և տեր հորը սեղմել տակառին:

Վերջապես, կազակները մի կերպ դուրս բերեցին արժանապատիվ հոգևոր հորը տակառի և ձիու արանքից և փառավորապես բազմեցրին թամքի վրա ու մտրակն էլ ձեռքը տվեցին:

Բարեբախտաբար սրբազանները հիվանդանոցից դուրս եկան այն ժամանակ, երբ տեր-Նիկոլն արդեն կատաղի արշավում էր դեպի Արծափ:

Չնայելով այդ տեսակ մանր-մունր փորձանքներին, որ առաջանում էին մարմնի պարարտությունից, ընդհանրապես տեր-Նիկոլը մեր ամենից դյուրաշարժն էր և, կարող եմ ասել, անվեհերը: Երբ իջնում էինք Չինգիլի զառիվայր կոչված անդունդը, վտանգավոր տեղերում էլի նա էր ամենից առաջ քշում իր ձին: Ճշմարիտ է յուրաքանչյուր կես ժամ նրա ձիու մեջքը ծալվում էր անսովոր ծանրությունից, և կենդանին ամենայն քաղաքավարությամբ նրան բազմեցնում էր ճանապարհի եզրին կամ քարի վրա, բայց նա նորից անվնաս բարձրանում էր կազակների օգնությամբ, նորից նստում ու հայդա…

Ահա նա, տեսեք ինչպես է սլանում ձյունապատ բարձրավանդակով վեր: Նրա ֆերաջեի թևերը սավառնում են օդի մեջ բազեների պես և լայն փեշերը ծածանվում սև դրոշակների նման:

Անցանք մի քրդական գյուղի մոտով: Կենդանության և ոչ մի նշան: Գյուղ: Մեղք է այդ որջանոցին մարդկային բնակավայրի անուն տալ: Մոխրագույն քարակույտերի խառնիխուռն հավաքածու է դա, որ հեռվից գերեզմանատան տպավորություն է գործում:

Այդ գյուղի մոտ է տեղի ունեցել ռուս զորքերի երկրորդ ճակատամարտը թշնամու դեմ: Նա նախ գործ է ունեցել համիդիականների, ապա 1500 ասկերներից բաղկացած կանոնավոր թուրք ջոկատի հետ: Եվ մի քանի ժամում ջարդել ցիրուցան է արել: Թուրքերը, որ փախել են Դիադինի կողմերը, իսկ քրդերը ըստ սովորության պատսպարվել են լեռներում, կանխավ, հարկավ, կողոպտելով Արծափը:

Օրգովից մինչև Արծափ ընդամենը 32 վերստ է, որ անցանք վեցուկես ժամում:

Տեղ հասանք մութը չընկած:

Կյանքումս առաջին անգամն եմ տեսնում թուրքահայ գյուղը:

Առայժմ չգիտեմ ներքինը, բայց դրսի տպավորությունը նպաստավոր է: նույնիսկ ուրախալի: Անցնում ենք խնամքով մաքրված և կանոնավոր խրամատներով հավասար մասերի բաժանված վարելահողով: Ձիու ոտները մինչև սրունք խրվում են ձյունի բարակ շերտով ծածկված արտերի մեջ և շուռ տալիս սև ու փափուկ հողը խոշոր կույտերով: Երևում է, որ նա արգավանդ է: Նույնն են ասում և իմ ընկերները, որ ինձանից ավելի են հող ճանաչում:

Վատ չէ և գյուղի տպավորությունը, բայց միայն հեռվից: Աչքի է ընկնում բարձրավանդակի վրա շինված եկեղեցին իր ահագին կլոր գմբեթով, որի ոճը հայկական չէ: Նա մութն է արեգակի տակավին առատ ճառագայթների տակ, վասնզի արտացոլելու ոչինչ չունի, ո՛չ մետաղ, ո՛չ ապակի:

Մտնում ենք գյուղի նեղ, ծուռումուռ և վերին աստիճանի ապականված փողոցները, և տպավորությունս իսկույն փչանում է: Կանայք և երեխաները տներից դուրս են թափվում անսովոր թափորը տեսնելու և խմբվում են դռների առջև, միմյանց սեղմելով ինչպես երկչոտ գառնուկներ և իրարու հրելով: Նրանց ցնցոտիները գույնզգույն են: Իշխող գույնը կարմիրն է:

Ոմանք բարձրացել են ցածր ու տափարակ կտուրների վրա, որ ներկայացնում են հարթ, հավասար տարածություն գյուղի մի ծայրից մինչև մյուսը: Երևի, այդտեղ մարդիկ ևս հավասար նյութական վիճակումն են: Ծառեր չկան, այգիներ կամ բուսանոցներ նամանավանդ, և դա գյուղին տալիս է մռայլ տեսք:

Երեխաները մեծ մասամբ կիսամերկ են և զարմանալի է, որ դիմանում են լեռնային դաժան ցրտին: Նայում են մեզ կես երկյուղով: Դրա՞նք ովքեր են, դրանք ինչո՞ւ են եկել. արդյոք մի նոր փորձանք չե՞ն մեզ համար, այսպես են մտածում երևի: Թող մտածեն, բայց մեր սիրտը մորմոքվում է, հոգին տառապում նրանց ողորմելի տեսքից:

Կանանց երեսները բաց են, միայն մեզ տեսնելով, բերանները ծածկված են մի ձեռքով, մյուս ձեռը կրծքների վրա դրած: Չեմ կարող ասել, որ նրանք գեղեցիկ են ընդհանուր առմամբ, բայց տգեղ էլ չեն. գոնե այնչափ, որչափ զվիցերական երջանիկ գեղջկուհիներ: Բայց ի՞նչ սիրուն աչքեր և որքան թախծալի, խելացի և արտահայտիչ: Դեմքերը մեծ մասամբ նիհար են, գունատ, որոնց աստվածային տուրքը-սիրունությունը կարողացել է դիմանալ ճակատագրի դաժան հարվածներին և չաղավաղել:

Մեզ առաջնորդում են գյուղի խորքը: Բարեբախտաբար փողոցները սառած են, եթե ոչ մեր փոքրիկ ձիերը կարող էին մինչև պարանոց թաղվել տիղմի մեջ:

Իջնում ենք մի տան առջև, ուր մեզ համար օթևան է պատրաստված. և մեր հոգնած ու քրտնած ձիերը հանձնում ենք ուղեկցող կամավորների խմբին:

— Տեսեք, ոչ մի բան ձրի չվերցնեք,— ամեն ինչի համար վճարեցեք, ապա թե ոչ կպատժվեք:

Ցածր դռներով մտնում ենք մի ինչ-որ մութ վայր: Չեմ հասկանում շտեմարան է թե գոմ, բայց շատ ընդարձակ է: Զգում եմ աթարի սուր հոտը, որին անսովոր եմ: Գլուխս իսկույն պտտում է: Ճիգ եմ անում կիսախավարի մեջ բան տեսնելու և խոնավ հողային հատակի վրա նշմարում եմ մի քանի կանայք, ծեր թե երիտասարդ — չեմ ջոկում: Նրանցից մեկը մի երեխա է գրկած, մյուսին օրորում է օրորոցի մեջ: Քիչ հեռու տեսնում եմ երկու ռուս զինվորներ առանց վերնազգեստի, գրեթե կիսամերկ: Մեզ տեսնելով, շփոթվում են, շտապում են ոտքի ելնել:

Մեզ տանում են մի նեղ անցքով մեր օթևանը: Դա բավական մեծ մի սենյակ է հողե հատակով, կավյա պատերով և փայտյա առաստաղով, որ միջից բաժանված ձվի ձև ունի:

Մեջտեղ վառվում է երկաթե վառարանը, որի խողովակը ծնկաձև անցնում է պատով դուրս: Պատերի տակ շինված սաքուները ծածկված են կապերտներով ու փափուկ մինդարներով: Զգալով ախորժելի ջերմություն, շտապում ենք ազատվել մեր մուշտակներից ու ծանր կոշիկներից ու թավալվում ենք պատերի տակ ինչպես գաղթականներ: Ոչ միայն գոհ ենք, այլև երջանիկ ու անվերջ անսահման շնորհակալ ենք այդ արքայական ընդունելությունից:

Հյուրընկալությունն այնքան ջերմ էր, որ մինչև անգամ մի տեսակ նեղված եմ զգում ինձ: Արժանի՞ ենք արդյոք այդ պատվին: Աստված գիտե ինչ բարիք են սպասում մեր անակնկալ այցելությունից այդ ապաբախտ մարդիկ, որ ահա մեկ-մեկ ներս են մտնում անվստահ քայլերով ու խմբվում դռների առջև: Եվ մի թե նրանք չեն հիասթափվել մեր գնալուց հետո:

Անշուշտ նույնն են զգում և իմ ընկերները, թեև ոչինչ չեն ասում:

Սակայն տեր-Նիկոլը շատ է հուզված: Ներս է վազում, դուրս գալիս, նորից վազում, աշխատելով նեղ անցքերի մեջ ոչ ոքի չդիպչել իր պարարտ փորով: Ինչ-որ պատվերներ է տալիս կամավորներին և տանտերերին, շշնջալով և ձեռքերդ օդի մեջ շարժելով: Վերջապես, նա հանգստանում է ու կանգնում սրբազանների առջև, ձեռները փորի վրա դնում և սպասում նրանց պատվերներին: Քիչ անցած նրա սաթի պես սև աչքերը պսպղում են հոգեկան հաճույքից. երբ տանտերերից մեկը մեջտեղ է բերում մի ահագին մատուցարան վրեն թեյ՝ գինու փոքրիկ բաժակների մեջ:

Այստեղ առաջին անգամ զգում եմ տեր-Նիկոլի ահագին արժեքը ճամփորդության համար և այնուհետև սկսում եմ նրան սիրել:

Քաղցը մեզ ստիպում է առժամանակ մոռանալ ուրիշների ցավերը: Մենք ուտել ենք ուզում, իսկ բեռները դեռ տեղ չեն հասել, ուտելու ոչինչ չունենք: Այնինչ տանտերերը մոռացել են այդ լավաշի հետ մի քիչ էլ պանիր բերել: Տեր-Նիկոլը նորից հուզվում է, դուրս է վազում և, փոքր անցած վերադառնալով, ականջիս շշնջում է.

— Գիտե՞ք, դրսում վեց մեծ-մեծ տկճոր ոչխարի պանիր կա, ասե՞մ, որ մի կտոր բերեն:

— Անհարմար է, տեր հայր:

— Ոչինչ, գյուղացիներ են, չեն հասկանում: Պետք է հասկացնել:

Ասաց ու դուրս վազեց և քիչ անցած եկավ ուրախ-ուրախ ժպտալով ձեռքին մի ափսե, մի մեծ կտոր պանիրով:

— Որդի պանիր է, համով պիտի լինի,— ասաց, ափսեն հանդիսավոր կերպով մեջտեղ դնելով:

— Կեցցե տեր-Նիկոլը,— ասացինք միմյանց շշնջյունով և գայլի ախորժակով հարձակվեցինք պանրի վրա, որ իրավ շատ համեղ էր:

Մինչ մենք զբաղված էինք կերուխումով, գյուղացիները պատմում էին իրանց գլխին եկած վերջին փորձանքները:

Ներս մտավ տեղական քահանան, վաղաժամ զառամած մի ծերունի՝ անգույն հնամաշ ֆերաջով և պատառոտված կոշիկներով: Գյուղացիները թույլ տվեցին, որ նա պատմե անցքերը:

Սովորական մշտապես հալածանքներից հետո եկել է պատերազմը և գյուղացու թշվառության բաժակը լրացրել: Նախ կողոպտել են թուրք ասկերները, տերության քողարկված հրամանով, ապա ռուսներից հալածվող քրդերը: Կոտորածից ազատվելու համար երիտասարդ անզեն տղամարդիկ փախել են լեռները և թաքնվել ժայռերի մեջ: Քրդերը ծերերին ու երեխաներին չեն կոտորել և ոչ էլ, բարեբախտաբար, կանանց բռնաբարել:

Վերջապես, եկել են կազակները, և Արծափը նրանց առջև բաց է արել իր շտեմարանները և մնացորդը տվել նրանց: Այժմ ոչինչ չի մնացել, ո՛չ ցորեն, ո՛չ գարի ու դարման և ո՛չ էլ մանավանդ վառելիք: Այժմ հայերը կազակներին առաջնորդում են քրդական գյուղերը, որ ճանապարհից դուրս են և ցույց են տալիս նրանց լի ամբարները: Հերթը նրանցն է:

— Գիտե՞ք այդ պանիրն էլ քրդերից է խլված, — ասում է մեզ թաքուն մեկը տեղացիներից թե կամավորներից, չեմ մտաբերում:

Իմ ձեռքից ընկնում է պանրի պատառը: Ակամա զգում եմ մի տեսակ քամահրանք, թեև հավատացնում են, որ հայերը քրդերից խլում են հազիվ մի տասնորդականը իրեն սեփականության: Ոչ, ոչ, ինչ ուզում է թող լինի, միայն թե իմ ազգակիցների վրա չտեսնեմ այն արատը, որ հատուկ է նրանց թշնամիներին:

Գալիս է տեղական կոմենդանտն այցելության և առաջարկում իր ծառայությունը: Այդպես է հրամայված նրան բարձրից: Շնորհակալություն ենք հայտնում և խնդրում նրա օգնությունը տեղացիների համար:

— Պատրաստ ենք ամեն կերպ օգնելու,— ասում է զինվորականը,— բայց լեզու չիմանալը մեզ շատ է խանգարում: Մենք նոր ենք սկսել հայերին զատել քրդերից: Սկզբում չգիտեինք որն է քուրդը: Նրանք միատեսակ են հագնվում: Բարեբախտաբար այստեղ կա մի հայ, որ մի քիչ գիտե ռուսերեն և մեզ շատ է օգնում:

Մարդ ենք ուղարկում այդ հազվագյուտ հային կանչելու: Ներս է մտնում համակրելի դեմքով, համեստ ձևերով մի երիտասարդ, գյուղացիները խոսքեր չեն գտնում նրան: Գովելու և նրանից շնորհակալ լինելու համար: Նա ոչ միայն թարգմանի դեր է կատարում, այլև հովանավորի ու պաշտպանի: Նա է, որ կազակներին առաջնորդելով

ցույց է տվել քրդերի զենքի պահեստը և օգնել զինաթափ անելու նրանց: Նա է, որ շատ ընտանիքներ ազատել է կործանումից և շատ շատերին կողոպտվելուց:

Զգում ենք, որ մեր առջև կանգնած է մեկն այն փոքրիկ հերոսներից, որոնք լուռ, առանց հայկական թմբկահարության և առանց որևէ անձնական ակնկալության գործում են իրենց ապաբախտ հայրենիքի համար և չքանում անհայտության մեջ: Ապաբախտ եմ և՛ ես, որ մոռացել եմ հուշատետրում նշանակել նրա անունը:

Գյուղացիների տված տեղեկություններից իմանում ենք, իր միջի այլոց, որ 120 տներից բաղկացած Արծափը հարուստ է վարելահողով, այնչափ հարուստ, որ Կովկասի հայ գյուղացին երգել միայն կարող է: Յուրաքանչյուր ընտանիք ունի ամենապակասը 50 դեսյատին արգավանդ հող: Կան այնպիսիները, որ ունեն 70-80, նույնիսկ 100-ից ավել: Բացի երկրագործությունից, գյուղը պարապում է և խաշնապահությամբ և իր աշխատանքի պտուղը Կովկաս է ուղարկում վաճառքի:

Ներս է մտնում միշտ զվարթ, միշտ կենսախինդ Շահխաթունին հրաժեշտ տալու: Վաղը մեզ ուղեկցելու է ուրիշ սպա ուրիշ կազակների հետ: Իսկ մեր հայրենակիցը պարտավոր է այժմ իսկ վերադառնալ Իգդիր, ստիպված լինելով գիշերով անցնել Չինդիալի անդունդները:

Գյուղացիները, զգալով, որ մեզ հանգստություն է հարկավոր, ցրվում են: Մնում են մեր տպավորությունները: Մենք ամենքս էլ առաջին անգամն ենք Հայաստան մտնում: Հաղորդում ենք իրարու, թե ինչ զգացինք սահմանագլխում: Մեր տրամադրությունը լուրջ է և տխուր:

Հանկարծ մութ անկյունից վայրկենական թախծալի լռության մեջ լսվում է տեր-Նիկոլի ձայնը.

— Սահմանագլխում քուֆթա կերանք:

Դա էլ նրա տպավորությունն է: Արդարև հիշում եմ, որ մեր ընկերներից մեկը մեզ հյուրասիրեց իր հետ բերած երևանյան քուֆթայով:

## VI

Առավոտյան զարթնում ենք կանուխ: Հարկավոր է, Բայազեդ ուղևորվելուց առաջ, այցելել տեղական եկեղեցին: Գյուղացիները սպասում են մեզանից նոր խոսք լսելու:

Փողոցներով անցնելը դժվար է, վասնզի սառույցը ցեխից գոյացրել է դերբուկներ, որոնց վրա կարող ենք ջարդել մեր ոտքն ու գլուխը: Գնում ենք կտուրներով— այսպես է ընդունված այս տարօրինակ երկրում: Ոչ մի տուն մյուսից բարձր չէ: Կտուրները կցված են իրարու միաչափ քառակուսիներով, այնպես որ գյուղը բարձրից նմանվում է շախմատյան տախտակի: Ներսի կողմից տներն ունին իրարու հետ գաղտնի հաղորդակցություն առանձին անցքերի միջոցով: Կարելի է գյուղի մի ծայրից մտնել առաջին պատահած տունը և դուրս գալ մյուս ծայրում, առանց փողոցները տեսնելու:

— Ինչո՞ւ համար է այդ հաղորդակցությունը,— հարցրինք մենք երեկ:

— Վտանգի ատեն զիրար զգուշացնելու համար,— պատասխանեցին գյուղացիները:

Խե՜ղճ ժողովուրդ:

Եկեղեցին լիքն է, բայց ոչ մի կին: Հալածական կենդանիների պես նրանք խմբվել են եկեղեցուց դուրս, բավական հեռու, և, ձեռքերը ծոցներին դրած, նայում են մեզ թշվառի նախանձոտ հայացքով: Ողորմելի՜ արարածներ: Կարծես, քիչ է ձեր հալածանքը, որ հալածվում եք և ձեր բռնակալ ամուսիններից:

Սրբազաններից չեմ հիշում որը՝ համառոտ մաղթանք է կատարում և չեմ հիշում որբ քանի մի մխիթարական խոսքեր է արտասանում և թշվառներին գրեթե որոշ հույս ներշնչում նրանց մերձավոր ապագայի մասին: Ապագա, զգում եմ այդ պատասխանատու խոսքերի ծանրությունը և ընկճվում եմ նրա տակ: Ունե՞նք արդյոք իրավունք պարզելու այն, ինչ- որ մեզ համար իսկ մութն է և շատ մութն…

Ներկա եղողներից շատերը նայում են իրարու տարակուսանքով և գլուխները թերահավատորեն շարժում: Պարզ է որ ուզում են հավատալ երջանիկ վիճակի մերձավորությանը, բայց ներկա՞ն: Նա առժամանակ ոչինչ չի խոստանում:

— Մենք կաղոթենք միայն, որ ռուս չերթա մեզնե, սրբազան, որ նա գրավե մեր երկիր ու նստի, ավելի ոչինչ չենք ուզեր,— ասում են միաձայն բոլորը: Եվ նրանք անկեղծ են, այնքան անկեղծ, որ չեն կարողանում իրանց արցունքը զսպել:

Նայում ենք, եկեղեցու մեջ ոչինչ չկա, ոչինչ բառիս կատարյալ իմաստով: Քրդերը տարել են բոլորը, ինչ-որ շարժական է: Բոլորը, սկսած խաչ ու խաչվառներից, սեղանի արդուզարդերից, մինչև գրքերն ու գրակալները: Նրանք փայտեղենն անգամ դուրս են բերել պատերի միջից և այրել: Նրանք թե ուրիշները… բայց այրել են:

Գյուղի ծայրում խմբվել են 10-15 հրացանավորներ: Տեղական կամավորներն են, որոնց ռուս զինվորական իշխանությունը զինել է բերդաններով ինքնապաշտպանության համար:

Նրանք մեզ ոտքով ուղեկցում են մի քանի վերստ և, ըստ երևույթին, երջանիկ են իրենց դերով: Թուրքահայը պաշտպանում է ռուսահային, չէ որ դա պարծենալու երևույթ է: Ուրախ են նամանավանդ, որ ընկերացել են կազակներին: Սակայն, ինչո՞ւ թաքցնեմ ճշմարտությունը, նրանք ինձ վրա թողնում են ավելի հազվագյուտ խաղալիքի արժանացած երեխաների, քան կռվի ընդունակ զինվորների տպավորություն: Նրանք չգիտեն անգամ ինչպես պահել այդ խաղալիքը, որ չլինի ծիծաղելի...

Եղանակը արեգակնային է, ջերմ. ճանապարհը մեծ մասամբ հարթ, անվտանգ: Մեր ձիերը ընթանում են աշխուժով, բացի իմից, որ մի անգամ արդեն որոշված քայլից չի ուզում մազու չափ շեղվել: Ոմանք մեզնից աշխատում են անվեհեր հեծյալների փորձառություն ցույց տալ:

Արծափից մինչև Բայազեդ 32 վերստ է ամենաշատը չորս ժամվա տարածություն: Ավելի լավ. ձիու անսովոր ծնկներս չեն թմրել, և ես չեմ զգա երեկվա անտանելի ցավը, և իմ քաջարի ընկերներին չեն պատճառիլ ծիծաղ: Գնում եմ երիտասարդ կազակ օֆիցերի հետ հավասար քայլով: Նա բնավ ախորժակ չունի իմ ընկերների ձիարշավին մասնակցելու: Նա բարվոք է համարում հաճույքով ընդունել իմ առաջարկած ծխախոտը և պատմել այն կռիվները մասին, որոնց մասնակցել է: Նրա խոսքով, թուրք զինվորները երկչոտ չեն, կռվում են կանոնավոր, գիտեն ռազմական կանոններ, գիտեն նշան դնել և երբեմն էլ խույս չեն տալիս ձեռնամարտից: Նույնը չի կարելի ասել համիդիականների և առհասարակ քրդերի վերաբերմամբ: Դրանք ավելի աղմուկ են բարձրացնում, քան գործ կատարում: Թվով շատ են, բայց որակությամբ ոչ բարձր:

— Նրանք սարսափում են մեր «հուռռայից», բայց պետք է ասել, որ մեզ վրա էլ բավական ազդում է նրանց «ալլահ-ալլահը»,— շարունակեց կազակ օֆիցերը ռուսին

հատուկ պարզությամբ և համեստությամբ։— Ոռնում են քաղցած բորենիների պես։ Տարածության մասին թուրքերը որոշ գաղափար ունին, իսկ քրդերն — ամենևին։ Գնդակ են արձակում երեք-չորս վերստ հեռավորությունից և, իհարկե, կորցնում են։ Տնտեսել չգիտեն։ Գերադասում են կաքավների պես թաքնվել ժայռերի մեջ, քարերի տակ։ Երբ մենք չենք պատասխանում, սիրտ են առնում դուրս գալու ու հարձակվելու, իսկ երբ մենք ենք հարձակվում, իսկույն ցրվում են։ Սրամարտից սարսափում են ինչպես կայծակից։ Այն ինչ մեր արվեստը հենց այդ է։ Եվ, գիտե՞ք, սրամարտն ավելի ձեռնտու է։

— Ի՞նչպես։

— Իհարկե։ Աստվա՛ծ գիտե քանի գնդակ պիտի փչացնես մի գլուխ ծակելու համար, մինչդեռ մերոնց թրի ամեն մի հարվածը մի կյանք է խլում։ Զարկիր որքան կարող ես, իսկ երբ թուրդ բթացավ, նորից կսրես, հա, հա, հա։

— Քանիսի՞ն կլինեք սպանած դուք անձամբ։

— Աստված գիտե, մի՞թե կարելի է հաշվել կռվի տաք ժամանակ։

— Ումանք հաշվում են։

— Գուցե այն ժամանակ, երբ թշնամին փոքրաթիվ է, տասը-քսան, ոչ ավելի։ Իսկ ուրիշ ժամանակ ի՞նչպես իմանաս որը սպանվեց, ո՞րը վիրավորվեց։ Պատահում է, որ տեսնում ես մեկն ընկավ, կարծում ես բանը պրծավ։ Բայց մեկ էլ տեսար ոտքի կանգնեց ու հարձակվեց։ Այդ ժամանակ քրդի սև աչքերը լցվում են արյունով, և նա նմանվում է կատաղի գայլի։

— Ճշմարիտ է, որ թուրքերն ու քրդերը առանձնապես կատաղած են կազակների դեմ։

— Իհարկե, առայժմ նրանք այս կողմերում համարյա թե բացառապես մեզ հետ գործ ունին։ Պարզ է, որ պիտի կատաղեն։

— Ես այդ չէի ուզում իմանալ։ Ասում են, որ նրանք գերի ընկած կազակներին չարչարում են։ Իբր թե նրանց աչքերը հանում են, կաշին քերթում և այլն։

Երիտասարդ խորունժին բարեհամբույր ժպտաց, ցույց տալով առողջ ու խոշոր ատամների շարքերը։

— Ձեր հարցին չեմ կարող ստույգ պատասխան տալ,— ասաց նա անվրդով,—բայց էլ լսել եմ։ Իմ կազակներից ոչ մեկը դեռ չի ընկել նրանց ձեռքը և հույս ունեմ երբեք չի ընկնիլ կենդանի։ Մի բան ճիշտ է։ Սրանից մի շաբաթ առաջ քրդերը Մոսունի մոտ հարձակվում են մեր խոտատար սայլերի վրա և մեր գնդից երկուսին սպանում։ Առվից հետո հարյուրյակի գլխավորն ուղարկում է սպանվածներին գտնելու։ Գտնում են մի ձորում, բայց…

Կազակ-օֆիցերը գլուխը տխուր շարժեց։ Կատաղությունը փայլեց նրա փոքրիկ կապուտակ աչքերի մեջ, և նա թեթևակի մտրակեց իր ձիուն։ Ես հասկացա նրա միտքը և ավելորդ բացատրություն չխնդրեցի։

— Ականջ դրեք... չե՞ք լսում,— հարցրեց հանկարծ խորունժին։

— Ոչինչ չեմ լսում,— ասացի ես զարմացած։

— Սպասեցեք, այդ գետակն էլ անցնենք, կլսեք։

Այս, ասելով, նա ձիուն մտրակեց և մտավ ընդարձակ հովտի բազմաթիվ գետակներից մեկը և, եզրերի սառույցը ջարդելով, սլացավ մյուս ափ:

Երբ մոտեցա նրան, ձին պահեց և կրկնեց.

— Ականջ դրեք դեպի լեռները: Մերոնք են…

Ես լսելիքս լարեցի: Ձյունապատ և արեգակի շռայլ լույսով ողողված սարերի հետևից լսվում էին խուլ, շատ խոսել թնդյուններ նման հեռավոր որոտի:

— Խրատում են նրանց,— բացատրեց խորունժին՝ թե-թե ծիծաղելով,— վատ դաս չէ, կսովորեն այսուհետև ինչպես վարվել դիակների հետ...

— Որտե՞ղ է կռիվը:

— Մոսունի շրջակայքում: Կռիվ չէ, այլ պատիժ: Չորս հարյուրյակներ են ուղարկված գնդացիրներով՝ հանցավոր քրդերի գյուղերը հիմնահատակ անելու:

Որքա՜ն զորավոր, որքան անհաղթելի է այն ինքնըստինքյան ոչ վեհ-մարդկային զգացումը, որ կոչվում է ազգային վրիժառություն: Ես, հոգով ու մտքով, իմ ամբողջ էությամբ թշնամի ամեն մի արյունահեղության, լինի նա նույնիսկ հանուն ինչ գաղափարի և ես կամենաք, ես, որ քստմնում եմ մարդու ձեռքով թափված մարդկային արյունից, այդ պահին չկարողացա զսպել իմ անասնական բնազդը: Գիտեի ինչ ասել է զինվորականի բերնում «պատժելի» բառը պատերազմի ժամանակ: Գիտեի, որ այնտեղ, այն հրաշալի երկնքի տակ մի շարք պիղծերի հետ թափվում է գուցե և՝ անմեղների արյունը: Գիտեի, որ հետո այս արյունոտ պատերազմից ու լեռներից հեռու լինելու է մի պահ, որ ես չարաչար զղջալու եմ իմ ոչ-մարդկային զգացման համար:

Հեռավոր բարձունքների վրա, հսկայական ժայռերի մեջ նշմարվեց պատմական Բայազեդը պարզ, մանիշակագույն մշուշով ծածկված: Մի խումբ գիշակերներ թռան մեր գլխի վրայով և, անցնելով ճանապարհի մյուս կողմը, կռկռալով նստեցին ձիու ուռած դիակի վրա... մի ուրիշ երամ նստեց մի ուրիշ դիակի վրա և սկսեց հոշոտել նրան:

Այսպես է մեր ամբողջ ուղին, սկսած Օրգովից— աջ ձախ զարդարված ձիերի, ուղտերի և էշերի գեշերով: Թշվառ կենդանիներ... նրանք ընկել են ցրտից, սովից, հոգնածությունից և բեռան ծանրությունից:

## VII

Ամենից առաջ գնում էր Խունունցը՝ Զելիմ խանի ահռելի փափախն օդի մեջ ցցած ինչպես աշտարակ: Տեր-Նիկոլը շատ կփափագեր արշավում մրցել նրա հետ, բայց, ավաղ, չէր կարող: Նախ՝ քաշվում էր եպիսկոպոսներից, ապա, որ ամենագլխավորն է, արդեն նժույգն սկսել էր ըմբոստանալ նրա հերոսության դեմ:

Քաղաքին մոտենալիս մենք խմբվեցինք:

Հեռվում երևաց ձիավորների մի խումբ: Արշավելով, մոտեցան մեզ և իջան ձիերից: Նրանց պարագլուխն էր ալեխառն մորուքով, չոր-չոր դեմքով մի քահանա, որի անունը, դժբախտաբար, մոռացել եմ: Ամենքը համ բուրեցին եպիսկոպոսի աջը: Սկսվեցին սովորական հարցերը: Կոտորածը մեծ է եղել Բայազեդում, թուրքե՞րն են ավելի դաժան եղել, թե՞ քրդերը: Ի՞նչպես է այժմ հայերի քաղաքական վիճակը և այլն և այլն:

Հարցեր, որ դեռ շատ անգամ պիտի կրկնվին և որոնց աղի պատասխանները դեռ շատ պիտի պղտորեն մեր առանց այն էլ տառապող հոգիները:

Բայազեդը մատչելի է միայն այն կողմից, որով բարձրանում ենք, բայց այն էլ գրեթե ուղղահայաց մի զառիվեր է: Մյուս կողմերով նա շրջապատված է վիթխարի ժայռերով, որոնց բարձր ու սուր գագաթները, կարծես, երկնքի սիրտն են ուզում ծակել նիզակների պես: Երկու հնաձև բերդեր իշխում են նրա վրա, մեկը քաղաքի ծայրում, մյուսը քաղաքից դուրս, ժայռերի կրծքում: Մարդ զարմանում է, թե ինչպես են գրավել այդ անառիկ բերդանոցը: Թվում է, որ նա մի քանի թնդանոթներով և մի գունդով կարող էր դիմանալ մի ամբողջ բանակի տարիներ շարունակ: Բայց այդպես չէ. թուրք ղորքը թողել է նրան ու փախել առանց մի գնդակ արձակելու:

Բարձրացանք, շարունակ բարձրացանք: Ահա, վերջապես, քաղաքի մուտքը: Այդտեղ ժողովվել է ահագին բազմություն: Մեզ, այսինքն ոչ աշխարհական մահկանացուներիս, այլ եպիսկոպոսներին ընդունում են աղ ու հացով և անսահման երկյուղածությամբ: Զարմանալի՜ բան, գուցե առաջին օրինակը: Աղ ու հաց առաջարկում են և՛ թուրքերը, և՛ քրդերը: Ինչո՞ւ: Երևի, իրենք էլ չգիտեն:

Նեղ և ծուռումուռ փողոցներ, մեր բազմամարդ թափորը դիմում է դեպի եկեղեցի քաղաքի պատվավոր ներկայացուցիչների առաջնորդությամբ:

Եկեղեցի՞: Ոչ, դա մի ահագին քարե մթերանոց է խարխուլ պատերով, կիսավեր առաստաղով, այնքան խոնավ, որ իսկույն ոսկորներս ցնցվում են: նույնը, ինչ որ Արծափի եկեղեցին — կատարյալ ամայություն:

Համառոտ աղոթք և Մեսրովբ եպիսկոպոսի մխիթարական խոսքերը: Վաղը կատարվելու է հանդիսավոր մաղթանք զորքի և զինվորական իշխանության ներկայությամբ:

Եկեղեցումն է թաղված վերջին դեպքերի առաջին զոհ Գալուստ Ալոյանցի դիակը: Մոտենում ենք նրա թարմ գերեզմանին, որ գտնվում էր մի խավար անկյունում: ճանաչում էի նրան: Չկար նրա համար ավելի մեծ վիշտ, քան իր հայրենակիցների տառապանքը:

Մեզ առաջնորդում են դեպի մեր ժամանակավոր օթևանը: Ոմանք ցրվում են քաղաքը տեսնելու: Ես շտապում եմ ազատվել ծանր մուշտակից և անտանելի թաղիքյա կոշիկներից:

Մի բավական մեծ սենյակ է՝ անկշտամբելի մաքուր, գեղեցիկ գորգերով զարդարված: Կա և մի հատ գրասեղան ու մի-մի հատ աթոռ: Շքեղություն, որին այլևս չպիտի հանդիպեինք Բայազեդից դեն:

Տեսնելով այդ հարմարությունը, նստեցի մի քանի նամակներ գրելու: Թիֆլիսի փոստային հարաբերություն չկար, պետք էր օգտվել Մեսրովբ եպիսկոպոսի սիրալիր առաջարկից վերցնելու նամակները: Հետևյալ առավոտ նա պիտի վերադառնար Թիֆլիս:

Մինչ ես զբաղված էի, եկան մեր բոլոր ուղեկիցները քաղաքից հոգնած: Մեր Նիկոլը, որ արդեն մտել էր իր դերի մեջ, ականջիս շշնջաց:

— Ոչխարն արդեն մորթերին:

Սկսվեց այցելությունների անվերջ շարքը: Մեկը լուր բերեց, թե բրդերը բնաջինջ են արել մի մեծ զուտ հայաբնակ ավան Խաչանի անունով, կոտորելով 600 տնից

բաղկացած ամբողջ բնակչությունը: Այդ սոսկալի լուրը տեղացիների վրա չունեցավ այն տպավորությունը, ինչ որ մեզ վրա: Մարդկանց լսելիքը վաղուց էին ընտելացել նման բոթաբեր լուրերից և վաղուց նրանց ներվերը բթացել էին:

— Էհ,— արտասանեց միայն տանտերը հառաչելով և մի տեսակ դառը հեգնական հայացք ձգելով մեզ վրա, եթե դիպվածը մեզի օգնած չլլար, մենք ալ խաչենցիներուն պես պիտի կոտորված ըլլայինք:

— Աստված էր, որ մեզի փրկեց,— ավելացրեց քահանան, երեսը խաչակնքելով:

— Ի՞նչպես,— հետաքրքրվեցինք մենք:

Թուրքերը վճռած են լինում, Բայազեդից փախչելուց առաջ, մի գիշեր սրի անցկացնել քաղաքի 3700 հոդի հայերին: Որպեսզի իրենց վճիռն անխափան իրագործեն, որոշում են ձերբակալել և խեղդել 51 հայտնի անձնավորությունների, որոնք կարող էին արգելք լինել: Դժոխային ծրագիրը բաց է անում հայերին մի քուրդ ցեղապետ Մամեդ-բեգ անունով: Սակայն եթե ռուս զորքը մի օր ևս ուշանար, կոտորածը, այնուամենայնիվ, պիտի տեղի ունենար:

Նույն օրն այդ Մամեդ-բեգը եկավ այցելության, և մենք հայտնեցինք նրան մեր երախտագիտությունը: Պարզվեց, որ այդ հազվագյուտ քուրդը միշտ պաշտպանել է հայերին:

Ներս մտավ Բայազեդի ոստիկանապետը—«Մշակ»-ի թղթակից Աբգար Տեր-Աբրահամյանը և հաղորդեց մեզ շատ կարևոր տեղեկություններ: Նրանից իմացանք, ի միջի այլոց որ տեղական հայ ազգաբնակության մի մասն էլ անկշտամբելի չէ իր վարքուբարքով: Ասաց, որ կան մի շարք հայեր ի չարն են գործ դնում իրենց այժմյան դիրքը ոչ միայն քրդերի, այլև իրենց արյունակիցների վերաբերմամբ: Գանգատվեց, որ ինքն անզոր է զգում իրեն զսպել այդ տեսակ հայերի բյազդները և ստիպված է նրանց ձերբակալել ու բանտում պահել:

Նրա ասածները հաստատեցին ներկա եղողները, բացի, հարկավ, այն մասից, որ նա ասաց ռուսերեն լեզվով...

Եպիսկոպոսներից մեկը խնդրեց ոստիկանապետից իմանալ արդյոք գեներալ-նահանգապետը կընդունե՞ մեր այցելությունն այսօր ևեթ: Ոստիկանապետը իսկույն գնաց և շատ չանցած, վերադառնալով, հայտնեց, որ գեներալ Դ.-նը ուրախ կլինի ընդունել երեկոյան:

Որոշյալ ժամին կարգի բերեցինք, որքան կարող էինք, մեր ամեն կարգից դուրս հագուստը և գնացինք գեներալ-նահանգապետի բնակարանը, որ ռուսաց նախկին հյուպատոսարանն էր:

Նախ նրա առանձնասենյակում, ապա սեղանատանը թեյի և ընթրիքի սեղանի քով մեր խոսակցությունը տևեց մինչև գիշեր:

Ներկա էր և նախկին հյուպատոս պ. Ա...ն, որ գեներալի քաղաքացիական օգնականի պաշտոնն էր վարում:

— Միմյանց չճանաչելը մեզ և ձերոնց շատ խանգարում է և դրանից առաջանում են հազար ու մի թյուրիմացություններ,— ասաց գեներալը:— Ցանկալի կլիներ, որ այնտեղ մեզ օգներ լեզու գիտցող մի ռուսահայ:

— Այդ մասին մտածված է,— հայտնեցինք մենք: — Որոշված է ուղարկել թե՛ այստեղ և թե՛ ուրիշ կենտրոններ մի-մի ռուսահայ, որ պիտի լինի մի տեսակ միջնորդ տեղական հայերի և զորքերի մեջ և թարգման:

— Այդ հրաշալի է, հրաշալի է,— կրկնեց գեներալը,— դա մեր գործը կթեթևացնի: Գիտեք, գրությունը շատ փափուկ է. հայը քրդի վրա է գանգատվում, քուրդը հայի վրա: Շատ անգամ չեմ կարողանում իմանալ ով է մեղավորը և ով է արդարը:

— Բայց համենայն դեպս հայտնի է, որ մինչև այժմ հարվածողը հայն է եղել:

— Մինչև այժմ այո՛, բայց այժմ հայերն են սկսել նեղել քրդերին,— ասաց գեներալը ժպտալով:

— Այո գոնե ինձ այդպես են զեկուցանում: Մի խոսքով, կխնդրեի ձեզ, որ ձեր հայրենակիցներին հասկացնեիք, թե այսուհետև այս երկրում գործելու է օրենքը և ոչ բռնությունը:

Ակնարկը պարզ էր: Հասկանալի էր, թե ինչ է ուզում ասել գեներալը:

Մեր տրամադրությունը մթնեց: Նայեցինք միմյանց տարակուսանքով:

## VIII

Առավոտյան յոթ ժամին Մեսրովբ եպիսկոպոսը ուղևորվեց Թիֆլիս, ցավելով, որ չի կարող ճամփորդությունը շարունակել.

— Բայց կաշխատեմ Սարիղամիշի կողմերում ձեզ հանդիպել,— ասաց նա:— Մեր վրա դրված պարտականության համար կարևորն այն կողմերն են: Այստեղ հայ զինվորներ չկան:

Գնացինք եկեղեցի: Արդեն նա ծայրեիծայր լեցուն էր: Այս անգամ եկել էին և կանայք ոչ այնքան աղքատ, որքան տձև հագնված: Ոչ մի եվրոպական հագուստ: Միայն մի քանի շրջազգեստներ, բայց գլխարկի փոխարեն շալ: Մեծամասնությունը դարձյալ ցնցոտիներ: Եկել էին նաև բազմաթիվ զինվորներ:

Փոքր անցած երևաց գեներալ-նահանգապետն ուրիշ զինվորականների և իր օգնականի հետ:

Այս անգամ խոսողը Խորեն եպիսկոպոսն էր, որ այն օրից պիտի փոխարիներ Մեսրովբին:

Խոսեցին և՛ աշխարհականները— Սմբատ Խաչատրյանց և Հովհաննես Թումանյան: Ես լուռ ունկնդիր էի և վճռել էի լռել մինչև վերջը, գերադասելով դիտողի և ուսումնասիրողի դերը քարոզողի և խրատողի դերից: Եվ ի՞նչ պետք է ասել այդ հոգեսպառ և արյունաքամ ժողովրդին: Ի՞նչ հույսեր նրան ներշնչել, որոնց համար ապագայում չզգաս խղճի խայթ և չդատապարտես քեզ թեթևությանդ համար: Լավ կլիներ, եթե նույնիսկ ոչ ոք չխոսեր և թույլ տրվեր այդ խեղճ ժողովրդին ավելի երկար ժամանակ լսելու տեր Նիկոլի հուզիչ երգեցողությունը: Ահ, նրա մաքուր տենորի յուրաքանչյուր հնչյունը թափանցում է այդ ողորմելի տառապյալների հոգին և արտասուք կորզում նրանց ցամաքած աչքերից: Եվ ինչպես հիացած են օտարազգի զինվորներն ու զինվորականները, որպեսզի երկյուղածությամբ են լսում արևելյան

եկեղեցու հոգեմաշ մեղեդին, որ այնքան սազում է այդ մռայլ արյունաշաղախ պատերին:

Մաղթանքից հետո մի քանի տեղացի երիտասարդներ բարի եղան ինձ ցույց տալու երկու բերդերից մեկը, որ գտնվում է քաղաքի արևելյան ծայրում: Անցանք անկարգ, անկանոն շինված տների միջով: Փողոց՝ բառիս տարրական իմաստով այստեղ գոյություն չունի, ձյունի և աղբի կույտերով ծածկված անցքեր են, որ մերթ իջնում են, մերթ բարձրանում: Անցնում ենք մի աղբյուրի մոտով, ուր մի խումբ կանայք և երեխաներ կուժ ու կուլաները ձեռքերին հերթի էին սպասում: Ոչ մի ուրախ ձայն, ոչ մի ժպիտ այդ մռայլ, վաղաթառամ դեմքերի վրա:

Բայազեդի ամրոցն իբրև այդպիսին, անկասկած, չունի ժամանակակից արժեք, բայց իբրև հին ճարտարապետական գործ կարող է համարվել հավիտենական: Նրա ոճը հստակ չէ և ներկայացնում է մի տեսակ խառնուրդ արաբական, պարսկական և մասամբ հայկական ոճերի:

Առանձնապես գեղեցիկ են մզկիթի գմբեթը ներսի կողմից և նրա մինարեթը դրսի կողմից: Տպավորություն գործում է նաև պալատը, մանավանդ զինվորական խորհրդի դահլիճն իր հոյակապ կերտվածքով և առաստաղի նրբությամբ: Բերդն ամբողջովին զորանոցի է փոխված: Նրա ընդարձակ բակում զինվորները լվացքով են զբաղված, և լվացած ճերմակեղենը խաչաձև կապած պարանների վրա՝ չորանում էին արեգակի տակ: Ամենուրեք տիրում էին կեղտն ու ապականությունը:

Շինությունները տեղ-տեղ ավերված են, փլատակները ցիրուցան: Անկասկած դա թուրքերի անհոգության հետքն է, քանի որ Բայազեդը չի դիմադրել ռուս զորքերին, և բերդը արշավանքի չի ենթարկվել: Գուցե 1877 թվականի հետքերն են, որ մինչև այսօր մնում են անուղղելի:

Բերդի մի բաժինը եղել է բանտ: Ես մտա և՛ այնտեղ: Դա մի շատ ընդարձակ դահլիճ է: Մութ, խոնավ, պատերը ծխից սևացած: Մի պատի վրա շինված է երկաթե մի վանդակ բազկաչափ ձողերով: Դա պահապանների տեղն է: Այստեղից են նրանք հսկել բանտարկյալներին: Պատերազմից ոչ շատ առաջ փախել են 40 հանցավորներ: Փախուստի հետքը մի փոքրիկ փոս է հատակի կենտրոնում:

Մյուս ամրոցը գտնվում է քաղաքից դուրս, ահռելի, ժայռերի մեջ: Ցավալի է, որ ժամանակը չներեց ինձ այն էլ տեսնելու: Ասացին ինձ, որ այդ ամրոցն ավելի նշանավոր է ոչ ճարտարապետական, այլ ռազմական տեսակետից: Ունի մի քանի ստորերկրյա անցքեր, որոնց արժե տեսնել:

Վերադառնալով մեր կացարանը, ուղեկիցներիս գտա բավական անհարմար դրության մեջ: Պատահել էր մի թեթև, շատ թեթև անախորժություն, որ սակայն ես նախատեսել էի Թիֆլիսում և որի մասին նախազգուշացրել էի մեր ընկերներին:

Բանն այն է, որ մեզ ուղեկցող սպային և կազակներին, այսինքն մեր կյանքը պես-պես հնարավոր փորձանքներից ապահովողներին պետք է որևէ կերպ երախտապարտ լինել: Կազակների բանը դժվար չէ, մի փոքրիկ դրամական նվեր, և նրանք գոհ են: Բայց ի՞նչ անել օֆիցերի վերաբերմամբ: Մեզ հետ ոչինչ չունեինք, մի որևէ իր, որ հիշատակ թողնենք նրա մոտ:

Պ. Խունունցն իր հուշատետրում նշանակեց համեստ և ամոթխած օֆիցերի անունն ու հասցեն: Փույթ չէ, երբ կվերադառնանք մեր տեղերը, մեր անունից շնորհակալության մի նշան կուղարկվի նրան:

Նույնն արինք մեր ճամփորդության ընթացքում և մյուս մեզ ուղեկցող օֆիցերների վերաբերմամբ, ընդհանուր թվով կարծեմ յոթ անգամ:

Ավա՜ղ, խոստումը մինչև այսօր էլ մնում է լոկ խոստում…

Մարդկային կենցաղավարության մեջ կան փոքրիկ ուշադրություններ, որոնց համագումարը կոչվում է էտիկա: Նա է, որ ազգերի փոխադարձ հարաբերությունների մեջ ծնում է համակրանք կամ հակակրանք: Թվում է ինձ, որ մեր ազգի բարոյական վարկին ամենամեծ հարված տվողը մեր հոգու չորությունն է: Խելքն ու բանականությունը չեն միայն, որ ժողովրդին ժողովուրդների մեջ դարձնում է հանդուրժելի, այլև զգացումը: Եվ գլխավորապես զգացումը: Հաճախ մի փոքրիկ անփութություն կամ անուշադրություն հղացնում է ատելություն և, ընդհակառակը, անհատների կողմից օտարներին տրված մի գեղեցիկ ժեստ երբեմն գրավում է նրանը հարգանքն ու համակրանքը դեպի ամբողջ ազգը…

Մեր տանտերը մի բարեհամբույր, շատ հյուրասեր ծերունի էր, տակավին առույգ, առողջ և դյուրաշարժ: Նա թուրքական փաստաբան էր, այնինչ՝ նրա որդիները պարապում էին վաճառականությամբ: Մեզնում հակառակն ենք տեսնում: Բայց երևի, սուլթանների երկրում իրավագետ լինելու համար մի առանձին պատրաստություն հարկավոր չէ, վասնզի մեր բարի տանտերը չունի նույնիսկ միջնակարգ կրթություն: Այնուամենայնիվ նրա կլորիկ դեմքը չէր կրում գռեհկության նշան և եթե գրասեղանի քով նստած գրում էր ասիական ձևով, ծնկների վրա և սագի փետուրով, երևի այդպես էր սովորել և համառում էր զիջողություն անել եվրոպական նիստուկացին: Չի կարելի ասել, որ նրա որդիները շատ էլ նրանից առաջ էին գնացել: Մեզ պատմեցին, որ ծերունու մի որդին ուսանող է Ժնևում և երբ արձակուրդներին տուն է վերադառնում, ճաշի և ընթրիքի ժամանակ ամենայն հնազանդությամբ դեն է գցում եվրոպական կոշիկները, ծալապատիկ նստում է մինդարի վրա և այնպես ուտում:

Եկան մի քանի պատկառելի թուրքեր իրենց բարեկամական զգացմունքներն արտահայտելու: Նրանցից մեկը խելացի և համակրելի դեմքով մի ծերունի էր, չալմայով:

— Իսմայիլ էֆենդի Նալբանդ Զադե,— ներկայացրեց նրան փաստաբանը հարգանքով, — հայտնի կալվածատեր և միաժամանակ տեղական դատարանի անդամ:

Հայտնվեց, որ էֆենդին եղել է ինքնապաշտպանության կոմիտեի անդամ և օգնել է հայերին ու շատերին ազատել կործանումից: Այժմ նա ինքը Բայազեդում մնացած թուրքերի հետ գտնվում է հայերի պաշտպանության ներքո: Նա խոսեց ժողովուրդների համերաշխության մասին և խոսեց խելացի, տրամաբանորեն, հենվելով կյանքի տված երևույթների ու փաստերի վրա…

Ներս մտավ մի դյուրագրգիռ հայ և սկսեց կատաղի բողոքել ճակատագրի հարվածների դեմ: Նրա գանգատը կարելի է ամփոփել իր հետևյալ խոսքերի մեջ.

— Մեզի թալնեցին թուրք ասկերներ, անկե հետև քուրդեր: Մենք այժմ այլ կը թալնվենք, հուսալով, որ ռուսը գալեն ետև պիտի հանգիստ ըլլանք: Եթե սա պես շարունակվի մեր վիճակ, պիտի գաղթենք…

Մենք աշխատեցինք վրդովված հային բացատրել, հանգստացնել, բայց սա մի քանի անգամ կրկնեց «պիտի գաղթենք»: Վերջապես համբերությունս հատավ, և ես հարցրի.

— Ո՞ւր պիտի գաղթեք…

Նա չկարողացավ հարցիս պատասխանել: Լռեց և գլուխը հուսահատորեն թեքեց կրծքին:

— Այո, ուր պիտի գաղթենք, տեղ չկա,— հաստատեցին իմ խոսքը ներկա եղող թուրքահայերը:

Վրդովված հայը զգաց, որ իր բողոքը ոչ միայն անզոր է, այլև ոչ քաղաքագիտական: Նա ասաց.

— Ձանըմ. կազակ ինչ կուզե, թող ընե մեզի, միայն թե մեր երկրեն չերթա: Մենք գոհ կըլլանք գարու հացով ալ…

## IX

Պատրաստվում ենք ուղևորվելու Դիադին: Սմբատ Խաչատրյանից չափազանց անհանգիստ է: Եվ ունի իրավունք: Բանն այն է, որ մեր ձիերի պայտերը մաշվել են, իսկ նրա ձին բոլորովին չունի պայտեր: Ամեն քայլում սայթաքում է սառույցների վրա: Դա մի վտանգավոր բան է, որ կարող է դժբախտություն առաջ բերել:

Բարեբախտաբար կամավորներից մեկն եկավ և ավետեց, որ բարի կազակները մեր բոլոր ձիերի պայտերը նորոգել են: Լուրը մեզ ուրախացրեց, որովհետև մեզ հավատացրել էին, որ այդ թշվառ երկրում ոչ պայտառ կա, ոչ երկաթ:

Գեներալ-նահանգապետը աչքի առաջ ունենալով ճանապարհի վտանգը, հարկ համարեց մեզ ուղեկից կազակների թիվը հասցնել 25-ի: Լսելով այդ, Հովհաննես Թումանյանը իր բազմաթիվ կապոցների միջից դուրս բերեց մի մեծ արկղ և քարշ արավ կողքին: Ասաց, որ այդ արկղի մեջ ամփոփված է աշխարհի ամենասոսկալի զենքը: Ես վախեցա: Խունունցը, Ձելիմ խանի չալ փափախը իր ճաղատ գլխին սեղմելով, դուրս բերեց մի սև ռևոլվեր և, հավաստիանալով, որ փամփուշտները չեն ընկել, հանգստացավ և քաջարի ժպտաց:

Ես սարսափեցի: Իսկ երբ տեսա, որ չարաչար գոտեպնդված Խորեն հոգևորականն էլ զինված է մահաբեր զենքով, արդեն միանգամայն սարսռեցի, վասնզի ես միամտություն էի ունեցել հավատալու, որ հոգևոր հայրերի միակ զենքը պիտի լինի, նույնիսկ պատերազմի վայրերում, իրենց պերճախոսությունը հակամարդկային բնազդները մեղմացնելու համար: Եվ հանկարծ եպիսկոպոս ու ատրճանակ…

Թուլամորթը միայն ես էի իմ ընկերների մեջ: Կարծեմ, Սմբատ Խաչատրյանցը նույնպես: Թուլամորթ նամանավանդ, որ չէի հասկանում իմ ընկերների զինման իմաստը: Եթե քուրդերը հարձակվելու են մեզ վրա, համենայն դեպս հարձակվելու են հրացաններով: Ի՞նչ կարող է անել ռևոլվերը հրացանի դեմ: Ես հույս չունեի նույնիսկ կազակների վրա: Համոզված էի, որ հարձակման դեպքում մեզ մի բան է մնալու անել փախչել, կամ ժամանակակից ոճով ասած, նահանջել: Հետևաբար, մեր փրկությունը մեր ձիերի ոտքերի մեջ է և ոչ Հովսեփ Խունունցի գրպանում:

Դարձյալ հայկական կրիան չի դուրս գալիս բնից: Որովհետև երկիրը սառն է և Բայազեդի սառցապատ զառիվերով միայն ոտքով կարելի է իջնել, ուստի պատվիրել ենք, որ վաղորոք մեր ձիերը տանեն ներքև: Իջել ենք կիրճը և ահա մի ամբողջ ժամ է սպասում ենք և ձիերը չկան, և ոչ բեռները: Անշուշտ մեր մարդիկ ամենայն անդորրությամբ զբաղված են թեյ ըմպելով և զրուցաբանությամբ: Ճշմարիտ, զարմանալի է կազակների համբերությունը: Եթե ես լինեի այդ երիտասարդ օֆիցերի տեղը, հավատացեք, վաղուց թողած ու հեռացած կլինեի, թեկուզ պատժվեի դրա

համար: Շատ հարկավորս է, մի ինչ-որ սև վեղարավոր, ինչ-որ անծանոթ մարդկանց հետ, ինչ-որ նպատակով եկել են ու գնում են: Բայց տեսեք ինչպես համեստ ռուսը, ձիուց իջած, անտրտունջ քայլում է ձյունի վրա ետ ու առաջ. ցրտից ոտքերն ամուր զարկելով գետնին և ձեռքերը շփելով իրարու, որ չսառեն:

Կազակներին տալիս եմ մի քանի տուփ ծխախոտ, և նրանք անվերջ շնորհակալ են: Ես ևս շնորհակալ եմ իմ ընկերներից, որ այսօրվանից իմ տրամադրության տակ են դրել ահագին կապոց ծխախոտները: Ես գիտեմ ինչպես բաժանել այդ թանկագին նվերը:

Ահա, վերջապես, սպիտակ զառիվերի վրա երևացին մեր ձիերը: Իջնում են կիրճը:

Եղանակը հետզհետե պարզվում է: Տասը ժամին արդեն՝ երկինքն ու երկիրը մերկանում են խոնավ մշուշից, և արեգակը զվարթացնում է մեր տրամադրությունը: Դեպի աջ՝ կապույտ հորիզոնի վրա նկարված են Չինգիլի բարձունքները, ավելի մոտ՝ Աղ-Բինարը, դեմուդեմ սուրբ Սիմոնը: Արարատն արդեն մնացել է մեր հետևում, և մենք նրան չպիտի տեսնենք ամբողջ շաբաթներ:

Բուն Քուրդիստանումն ենք: Ամբողջ հովտի հայ բնակչության թիվը 40000 է Բայազեդի հետ միասին: Որքան է քրդերի թիվը— չգիտեմ, բայց երկիրն ինձ վրա գործում է ամայության տպավորություն: Գյուղերն իրարից բաժանված են ահագին տարածությամբ: Երբեմն տասը վերստ գնում ենք և գյուղ չենք տեսնում: Այնինչ՝ երկիրն արգավանդ է և ոռոգվում է լեռներից հոսող բազմաթիվ վտակներով:

Աջ ու ձախ բոլոր գյուղերը դատարկ են: Քրդերը փախել են և թաքնվել լեռներում: Այնտեղից նրանք մերթ ընդ մերթ մեծ խմբերով հարձակվում են ռուս պահակների կամ մթերակիր սայլերի վրա, կողոպտում են, սպանում ու փախչում: Իսկ հայ գյուղերը… նրանք վաղուց են սովորել այդ տեսակ արշավանքների և այժմ էլ կրում են նրանց դառնությունը է չնայելով ռուսական ահեղ ուժի մերձավորությանը:

Ահա դեպի ձախ Ղըզըլ-Դիզեն, ուր տեղավորված է կազակների մի ամբողջ գունդ:

Հանդիպեցինք այն հարյուրյակներին, որոնք ուղարկված էին Մոսունի շրջակայքը տեղական քուրդերին պատժելու՝ երկու ռուս զինվոր սպանելու համար: Նրանք հիմնահատակ են արել յոթ գյուղ և այժմ երգելով վերադառնում են Ղըզըլ-Դիզե:

Բայազեդից մինչև Դիադին ընդամենը 40 վերստ է, բայց ինձ թվում է, որ այդ ճերմակ սավանն իր ձորերով ու բլուրներով վերջ չունի:

— Ի՞նչքան է մնում,— անդադար հարցնում եմ մեր առաջնորդին, որ կամավորի պես մի բան է:

— Երկու ժամ, մի ժամ, կես ժամ,— պատասխանում է նա:

Վերջը հայտնվում է, որ մարդը ժամանակ և տարածություն ասած բաների մասին բնավ գաղափար չունի: Հայտնվում է նույնպես, որ նա Դիադինը իր կյանքումը չի տեսել և երդվում էր, որ տեսել է:

Ես արդեն հոգնել եմ և քաղցած եմ, ձիս՝ նույնպես: Նա հազիվ քայլում է խորը ձյունի մեջ: Ով ձիու սովոր չէ մանկությունից, թող իմ հասակում երբեք չնստի:

Կանգ ենք առնում լեռների մեջ, մի տափարակի վրա: Իջնում ենք ձիերից մի փոքր հանգստանալու:

Դեմառդեմ կիրճերից դուրս են գալիս երեք ձիավորներ: Անկասկած կազակներ են, որ գալիս են Դիադինից:

Սխալված ենք:

Ձիավորները սրընթաց մոտենում են մեզ և, ուժգին թափով քաշելով սանձերը, բևեռվում են մեր առջև:

— Ողջույն ձեզ,— լսում եմ մի առնական ձայն, որ սառած օդի մեջ հնչում է ինչպես մետաղ: Երեքից մեկը պատանի է, մյուսը երիտասարդ, երրորդը ծերունի ալեխառն մորուքով, կապույտ ակնոցներով, գլխին բաշլըղ, ուսին մաուզեր: Նրա արևից ու լեռնային բուք ու բորանից կիզված դեմքը ծածկված էր խորը ակոսներով: Թվում է, որ մարդը ձուլված է բրոնզից իր ձիու հետ միասին:

Դարալագյազի քահանա տեր-Գրիգորն էր: Նրա ուղեկիցներից մեկը կամավոր էր, իսկ մյուս պատանին՝ նրա որդին, որ նույնպես կամավոր էր: Պատանին հիվանդացել էր: Հայրը տանում էր նրան Իգդիր բժիշկներին ցույց տալու և վշտացած էր, որ ստիպված է կռվի դաշտը թողնել, թեև ժամանակավոր:

Հաղորդելով մեզ մի քանի հետաքրքրական տեղեկություններ, ծերունին մտրակեց ձիուն և չքացավ ձյունի փոշու մեջ:

## X

Իրիկնադեմ է: Այլևս արեգակը չի երևում: Նա թեքվել է դեպի մուտքը և թաքնվել ամպերի տակ: Կարծես շատ էր տաքացնում մեզ իր անզոր ճառագայթներով և հոգնեց:

Մոտենում ենք Դիադինի վերելքին: Խորը ձորի մեջ ենք: Աջ ու ձախ լեռներ են, որոնց բութ գագաթներից մեկ-մեկ ցած է հոսում թանձր մշուշը: Երևի նա շուտով կծածկի մեզ:

Մեր ձիերը վաղուց են ուժասպառ եղել: Այնպես, որ նրանց ոտքերը ծալվում են լեռան տակ և հաճախ սայթաքում: Երբեմն ընկնում են և իսկույն վեր կենում մտրակի կատաղի հարվածների տակ:

Դեպի աջ ձորի խորքում, ավելի հեռու, լեռան թեքվածքների վրա նշմարվում են ինչ-որ սև, չարագուշակ կետեր: Քանի օր առաջ ենք գնում, այնքան նրանց թիվն ավելանում է:

— Տեսնո՞ւմ եք,— հարցնում է ինձ կազակ օֆիցերը:

— Ի՞նչ է այդ:

— Դիակներ են,— արտասանում է զինվորականը անտարբեր:

— Թուրքերի՞:

— Քրդերի:

— Ուրեմն այս ձորի մեջ է տեղի ունեցել Դիադինի ճակատամարտը:

— Ճիշտ այստեղ:

— Դուք երևի մասնակցել եք:

— Այո: Ես մասնակցել եմ տասնուերեք ճակատամարտերում:

Սպասում եմ Գևորգյան շքանշանի: Արդեն ներկայացված եմ:

— Պատմեցեք այստեղի կռվի մասին:

— Ինչ պատմեմ: Սովորական գործ էր դա: Համիդիականներ էին, մեծ թվով, չգիտեմ քանի հազար: Սկզբում իրենք հարձակվեցին: Երբ գրոհ տվեցինք, չկարողացան դիմանալ: Փախցրինք մինչև այստեղ: Ստիպեցինք ընդունել ճակատամարտը: Նրանց դիրքը ավելի լավ էր: Սիրում են բարձունքներ: Ահա այն երկարավուն սարի թիկունքների վրա էին թանձր շարքերով: Իսկ մենք այստեղ, ձորում: Դիմադրեցին բավական ժամանակ: Բայց կոտորվեցին, շատ կոտորվեցին: Իրիկնադեմին փախան ցիրուցան: Տեսնում եք այն բոլոր սև կետերը ձյունի վրա՝ դիակներ են: Եթե ձորն իջներ, կտեսնեք որքան շատ են: Սարերի լանջերն էլ ծածկված են նրանցով: Ձյունն է թաքցնում նրանց:

— Ե՞րբ է տեղի ունեցել այդ մարտը:

— Հոկտեմբերի քսանը և մեկին:

— Այսօր նոյեմբերի քսանուերեքն է: Ուրեմն ավելի քան մի ամիս է, որ այդ դիակները թափված են այստեղ:

— Այո: Եվ, երևի դեռ երկար ժամանակ կմնան:

— Ինչո՞ւ չեն ժողովում: Չէ որ օդը վարակում են և կարող են հիվանդություններ առաջանալ:

— Ո՞վ ժողովե: Մենք ավելորդ սանիտարներ չունենք: Իսկ իրենք՝ քրդերը, չեն էլ մտածում...

— Թույլ կտրվե՞ր նրանց, եթե կամենային գալ ու ժողովել մարդկանց:

— Իհարկե, թույլ կտրվեր: Ո՞վ է խանգարում, բայց չեն գալ: Քրդերը ուրիշ տեսակ մարդիկ են. նրանք չեն հոգում ոչ միայն սպանվածների, այլև վիրավորների մասին: Մի քանիսին վերցնում են, բայց շատերին թողնում են ու փախչում. կան այդ դիակների մեջ այնպիսիները, որ վերքից չեն մեռել, այլ սառնամանիքից: Եթե ձորն իջնեք, կտեսնեք, որ նրանք մեծ մասամբ տկլոր են:

— Ինչո՞ւ:

Որովհետև գիշերները մերձակա քրդերը գալիս են թաքուն և նրանց հագուստը գողանում: Ահա, տեսեք:

— Այդ ի՞նչ է:

— Մոտենանք:

Օֆիցերը ձիու գլուխը շուռ տվեց դեպի աջ և ճանապարհից դուրս եկավ: Ես հետևեցի նրան: Տասը քայլ հեռու ընկած էր մի դիակ: Ընկած էր նա երեսն ի վեր: Երիտասարդ էր, գեղեցկադեմ, սափրած երեսով ու գանգով: Նրա մի ոտը ձգված էր, մյուսը ծալված: Ձեռքերը տարածված էին աջ ու ձախ, աչքերը բաց էին, բիբերը դեպի վեր ծռված,

ատամները ցցված: Մահամերձի տանջանքն էր սառել նրա դեմքի վրա: Դիակը բոլորովին մերկ էր և շոկոլադի գույն ուներ: Նրա հուժկու կրծքի վրա սևին էր տալիս մի փոքրիկ ծակ: Գնդակի հետքն էր:

— Տեսնո՞ւմ եք,— բացատրեց օֆիցերը,— ոտքերի վիրքից երևում է, որ դիակը մերկացրած է դեռ չսառած կամ նույնիսկ կենդանի ժամանակ:

Ես շտապեցի հեռանալ:

Ահա թե ինչ ասել է պատերազմ: Այդ միակ դիակը սառույցի վրա, ձյունի տակ ինձ համար մարմնացում էր ամբողջ մարդկային ողբերգության: Չէ՞ որ նա էլ մայր ունի, քույր, գուցե և զավակներ…

Մշուշը սփռվեց մեզ վրա, և դիակների ձորը սարսուռ ազդեց իմ հոգուն, որ առանց այդ ևս ճնշված էր…

Բարձրացանք զառիվայրի գլուխը: Կազակները հետիոտվեցին և, բռնելով ձիերի պոչն՝ այնպես իջան սառցապատ զառիվայրը: Ես ևս իջա, յաբուս հանձնեցի մեր առաջնորդներից մեկին և քայլեցի ձեռնափայտիս օգնությամբ: Վերջապես, ահա և՛ Դիադինը — մի մեծ գյուղ քրդաբնակ, տեղավորված մի փոքրիկ լեռան ստորոտում, ուր և գտնվում են հայտնի հանքային ջրերը:

Մեզ դիմավորեց տեղական կոմենդանտն իր կազակներով և առաջնորդեց դեպի մի խղճուկ տնակ, որ դատարկ էր:

— Ես իմ բնակարանից կուղարկեմ գորգեր,— ասաց նա,— մնացյալը կհոգա գյուղի ստարշինան: Նա հայ էր:

Ասաց և շտապեց հեռանալ: Այնուհետև մենք այլևս չտեսանք այդ մարդուն:

Գորգերը բերեցին, քրդական գորգեր: Եկավ «ստարշինան» մի թարած-թափված մարդ, գլխին ռուսական ֆուրաշկա, կրծքի վրա ափսեի չափ երկաթյա մեդալ:

Մեր օթևանը ոչ խրճիթ էր, ոչ գոմ, այլ մի տեսակ փոս, խոնավ, կեղտոտ, ցուրտ: Ստարշինան, որի անունն էր Միհրան Մանուկյան կամ, ինչպես ինքն ասաց, Մանուկով, ազդարարեց մեզ, թե տունն իրեն է պատկանում և պատրաստ է մեր տրամադրության տակ թողնել որքան ժամանակ կամենանք:

Փոսի մի անկյունում դրած էր մի ժանգոտված և ծակծկված երկաթյա չորքոտանի՝ վառարան անունով: Միհրան Մանուկովը երկու կտոր փայտ բերեց, վառեց, նստեց հողե հատակի վրա և սկսեց փչել, թշերն ուռցնելով փուքսի պես: Այնքան փչեց, որ շունչը սպառվեց, սկսեց հազալ, փռշտալ և իր կապայի թևերով սրբել ծխից արտասվող աչքերը:

Շուտով փոսը լցվեց ծխով այնպես, որ մենք իրարու չէինք տեսնում:

— Մունդռիկ,— ասաց անհանգիստ տեր-Նիկոլը և, «ստարշինային» պատվավոր կերպով հեռացնելով, ինքը մտավ գործի մեջ: Ծուխը հեռացավ, վառարանը սկսեց ուրախ-ուրախ չրթչրթալ, մեջտեղ եկավ թեյը և, մեր մռայլ տրամադրությունը չքացավ:

Միհրան Մանուկովը չոքեց պատի տակ, ձեռքերը դրեց ծնկների վրա և սկսեց պատմել իր տեսածն ու լսածը վերջին անցքերից: Նրա ասելով Դիադինի միջով անցել է 6000 մարդուց բաղկացած մի թուրքական զորաբանակ: Ասկերները հայերին ոչ մի վնաս չեն տվել. ընդհակառակը, ռուս զորքը գալուց հետո իրենք հայերն են կողոպտել քրդերին,

նույնիսկ այն քրդերին, որոնք թուրքերի ժամանակ իրենց օգնել էին: Եվ այսպիսով, Դիադինի 14 տուն հայերը «ազգային վրեժ» են առել 400 տուն քրդերից: Կողոպտել են և կողոպուտը իրենց մեջ բաժանելու ժամանակ կռվել: Երբեմն կռիվը արյունահեղության է հասել: Այնպես, օրինակ՝ ոմն Մինասյանց սպանել է իր հորեղբոր որդուն նրա բաժնին տիրանալու համար:

— Ինչո՞վ են պարապում այստեղ հայերը,— հարցրեց մեզնից չգիտեմ ով:

— Արհեստավորներ են:

Իր մասին Մանուկովը պատմեց, որ մի ժամանակ եղել է ունևոր վաճառական և առևտուր է ունեցել Կովկասի հետ:

— Շատ անգամ գացեր եմ Թիֆլիս ու Երևան,— ասաց նա հառաչելով:— Ծովյանով եղբայրք կճանչնա՞ք: Բանքա մը ունեին:

— Կճանչնանք:

— Անոնց քով երեսունևևութ հազար ռուբլի դրամ ունեի:

— Հետո՞:

— Չդարձուցին:

— Կորա՞վ:

— Կորավ:

Հետո ինձ ուրիշ տեղացիներ ասացին, որ այդ կորուստը խեղճ մարդու վրա այնքան է ազդել, որ նա փորձել է անձնասպան լինել, բայց անհաջող: Գնդակը կոկորդով անցնելով, դուրս է եկել վզից, և դրանից մի փոքր վնասվել է մարդու ուղեղը:

## XI

Ալաշկերտի հովիտը, որով այժմ անցնում ենք, երկու լեռնաշղթաների միջանցքն է մի քանի տասնյակ վերստ լայնությամբ: Աջ կողմի բարձունքները նայում են դեպի Կովկաս, ձախ կողմինը թեքված են դեպի Թուրքիայի խորքերը:

Գնում ենք շարունակ Եփրատի ափերով: Նա տակավին սառած չէ, բայց արդեն սառույցի բեկորները լողում են նրա երեսին: Այդ գետն է միայն, որ մի թեթև կենդանություն է տալիս, գրեթե ամայի տափաստանին. մռայլ ոչ միայն ձմեռը, այլև, երևի, և տարվա բոլոր եղանակներին, որովհետև որ երկիրը կարող է համարվել զվարթ առանց բուսականության: Չկա մի կտոր անտառ, չկան թփեր անգամ, հազվագյուտ են հատ-հատ ծառերն իսկ գյուղերում:

Ավանդությունն ասում էր, որ հովիտը և նրա շրջակա լեռները մի ժամանակ զարդարված են եղել գեղեցիկ ծառաստաններով: Անկասկած, այն ժամանակները եկել են վայրենի հորդաները և դրախտը մերկացրել իր սքանչելի զգեստներից:

Փոքրաթիվ հայերն աշխատում են նորից զգեստավորել, բազմաթիվ քուրդերը չեն թողնում...

Ամեն մի նորաբույս ծառ դառնում է նրանց կացնի զոհը, ամեն մի բուրաստան ոտնատակ է լինում հրոսակների արշավանքից:

Չեմ հիշում որ գյուղում— մի հայ պատմում էր, որ մի անգամ ինքը փորձում է իր տան առջև այգի ձգել, տնկում է մի քանի հարյուր զանազան ծառեր. երկու թե երեք տարվա մեջ նրանք, հողի պարարտության շնորհիվ, այնքան բարձրանում են, որ նրանց ստվերում կարելի էր զովանալ ամառը: Մի օր մի քուրդ ավազակախումբ գալիս է բոլոր ծառերը կտրտում:

— Ինչու՞ եք այդ անում,— հարցնում է տերը:

— Մենք չունենք այգիներ, դուք էլ չպիտի ունենաք,— պատասխանում են քուրդերը:

Դիադինի և Թաշլի-Չայի մեջ կա մի հայաբնակ գյուղ Ուչ-Քիլիսա անունով: Դա միակն է, որ զարդարված է ծառերով, եթե չհաշվենք ողբերգական Զեթկանը, որ, ավա՛ղ, այժմ այլևս գոյություն չունի:

Երբ մոտենում էինք այդ գյուղին, հանդիպեցինք մի խումբ գերիների, բաղկացած 30—40 սիրիական արաբներից: Մի տասնյակ ձիավոր կազակներ մտրակներով քշում էին նրանց դեպի Կովկաս: Բոլոր այդ ողորմելիները փոքրահասակ էին և նիհար: Ցրտից և երկյուղից նրանք դողդողում էին եղեգնի պես իրենց պատառոտված հագուստների մեջ: Նրանց ածուխի պես սև աչքերն անդադար նայում էին աջ ու ձախ անասնական սարսափով, երևի, որ տեսնեն որ կողմից պիտի գա մտրակի հարվածը: Մի քանիսն իրենց կիսամերկ շագանակագույն մարմինները ծածկած էին քրդական կեղտոտ վերմակներով: Հոգնած էին, բայց քայլում էին արագ, ձիերին հավասար քայլով: Այլ կերպ չէին կարող. վասնզի գիտեին, որ ետ մնացողի վիճակը պիտի լինի այն, ինչ-որ տեսանք հետո: Դա նրանցից մեկի դիակն էր, ուղիղ ճանապարհի վրա ընկած երեսնիվար…

Ոմանք մեզնից կամեցան այցելել սուրբ Հովհանու վանքը, որ գտնվում էր Ուչ-Քիլիսայում, ճանապարհիս մի վերս հեռու:

Ասում են, որ այդ վանքում մի ժամանակ կաթողիկոսներ են օծվել: Հետաքրքրականն ինձ համար այդ չէր, այլ ճարտարապետությունը: Դժբախտաբար, այն էլ մի բանի նման չէր, եթե չափը որևէ արժեք ունի, կասեմ, որ հազիվ թե նրա մեծությունն ունենա մեր վանքերից որևէ մեկը—59 քայլ երկարություն և 33 քայլ լայնություն: Շրջապատված է վանքը բազմաթիվ քարաշեն սենյակներով, որոնք, սակայն, հիմնովին ավերված են:

Երբ ներս մտանք, աղավնիների մի երամ թռավ մեր գլխի վրայով և թառեց վիթխարի, բայց անձև գմբեթի տակ: Սալահատակը, պատերը, նույնիսկ սեղանը ծածկված էին նրանց կղկղանքով: Երկու ահագին խորաններ ծառայում էին իբրև մթերանոց և լի էին ալյուրով, ցորենով ու գարով: Սեղանը կողոպտված էր և կիսախարխուլ: Ահագին քարեր դուրս էին ցցվել պատերի միջից պառավի ատամների պես և սպառնում էին ընկնել:

Գավիթը լիքն էր զինվորներով: Նրանց ապուր էին բաժանում:

Տեր-Նիկոլը չդիմացավ շարժական կաթսաներից բարձրացող շոգու հրապույրին և ինձ էլ հրապուրեց: Փորձեցի տաք ապուրը ճաշակել, չկարողացա. ինչ-որ անծանոթ բաներ էին լողում նրա մեջ, թեև տեր-Նիկոլը համոզում էր ինձ, թե լոբի...

Մեզ դիմավորեցին մի խումբ ձիավորներ Ղազի-Քոյ անունով մերձակա հայաբնակ գյուղից: Եկել էին մեզ հրավիրելու, որ իրենց գյուղում գիշերենք, ասելով, թե այնտեղ

ավելի հարմարություն կա, բայց մենք արդեն հոգնել էինք, չէինք կարող ավելի հեռու գնալ: Որոշեցինք գիշերել Տաշլի-Չայում:

— Որ այդպես է, տղերք, հյուրերին տարեք Բադոյի տունը,— հրամայեց ձիավորների մեջ ամենատարիքավորը, որին Հակոբ աղա էին անվանում:

— Բայց Բադոյի տունը... — փորձեց ինչ-որ ասել մի երիտասարդ և լռեց:

— Տարեք, կըսեմ,— գոչեց Հակոբ աղան իսկական աղայի տոնով,— Բադոն ուրախ կըլլա պատվավոր հյուրեր ընդունելու:

Գնացինք Բադոյի տունը, որ գտնվում էր գյուղի կենտրոնում: Հիանալի էր, ուղղակի անսպասելի: Մի առանձնակի կացարան էր, մաքուր բակով և համենայնդեպս մեր հոգնածության համար անսահման գրավիչ:

Փողոցում մեզ ընդունեց անժպիտ դեմքով, չալ մորուքով մի կարճահասակ մարդ, մռայլ և սև՝ ինչպես Հուդա ուրբաթը: Նա հագած էր երկար արխալուղ, կարճ բաճկոն, գլխին ռուսական ֆուրաշկա, որ կեղտից փայլում էր, ոտքերին թուրքական չուստեր, որոնց վերևից, կարճ վարտիքի տակ, երևում էին սպիտակ գուլպաները:

Բադոն դա էր:

— Համեցեք,— հրավիրեց նա գերեզմանապահի եղանակով և մեզ առաջնորդեց մի սենյակ, որ լի էր զինվորական պարագաներով:

Առանց երկար մտածելու, շտապեցինք ազատվել մեր վերնազգեստից և թավալվել փափուկ մինդարների վրա:

— Պարոններ, դժբախտություն,— ասաց հանկարծ Սմբատ Խաչատրյանցը:

— Ի՞նչ է պատահել,— հարցրինք մենք վախեցած:

— Ցուրտը մի ոտս տարել է: Վա՛յ, անպատճառ ես զրկվելու եմ նրանից:

Մեր տրամադրությունը փչացավ: Իսկ որ դժբախտություն: Մարդուն բերել ենք երկու ոտքերով, պիտի ետ տանենք մի ոտով: Կընդունե՞ արդյոք Երևանը մի ոտանի քաղաքագլուխ:

Սկսեցինք զանազան խորհուրդներ տալ մենք էլ, տեղացիներն էլ: Մարդը չիմացավ որն ընդունի և վերջը կանգ առավ իր հնարած միջոցի վրա: Նա ասաց.

— Բադո, կարող ես մի մեծ լագան բերել:

— Կրնամ,— պատասխանեց Բագոն անդրգերեզմանային ձայնով:

— Տաք ջու՞ր:

— Ան ալ կրնամ:

— Դե բեր, օղորմի քո հորը:

Բադոյի սպիտակ գուլպաները չքացան, և շատ չանցած սենյակի ուղիղ մեջտեղում դրվեց տաք ջրով լի մի պղնձյա տաշտ:

Մինչ մենք թեյ էինք խմում, Երևանի պատվելի քաղաքագլուխը ոտքերը մերկացրեց, վարտիքը բարձրացրեց մինչև ծնկները և դիք-դիք կանգնեց տաշտի մեջ, ձեռքերով պահելով իր փեշերը:

Բադոն ձեռով ծածկեց իր բերանը և գլուխը ծռեց մի կողմ: Այդպես էր անում այդ մարդը, երբ ծիծաղի նման մի բան հանդգնում էր շարժել նրա դեմքի անշարժ մկանունքը:

— Ա՛հ, ո՛ւֆ, չի օգնիլ, չէ, կօգնե, ես կարծում եմ, ի՞նչ կասես ա, Բադո, ցավում է, ափսոս որ, երևի իմ բախտն էր. հը, ի՞նչ ես կարծում, Հակոբ աղա, կանցնե՞, թե՞ չէ,— տնքտնքում էր նա շարունակ, առողջ ոտով հիվանդ ոտը տրորելով Բադոյի տաշտի մեջ:

— Ի՜նչ նուս-նուս մարդ է, տո,— ասաց քթի տակ տեր-Նիկոլը և, Բադոյի թևից բռնելով, քաշեց տարավ նրան դուրս:

Հասկացա ինչու համար:

Ներս մտան երկու ռուս օֆիցերներ, որոնցից մեկը ձեռքում բռնել էր մի մորթած և փետրած հավ: Մեզ տեսնելով նրանք մնացին ապշած:

— Համեցեք, պարոններ,— հրավիրեցինք անսպասելի հյուրերին:

— Ներեցեք, դուք ովքեր եք, որ եկել եք մեր տանը նստել, — հարցրեց մորթած և փետրած հավ ունեցողը, առաջ նայելով մեզ, հետո Բադոյին, որ դարձյալ քիթն ու բերանը ծածկած նայում էր կողքին:

Սրբազանը բացատրեց, թե ովքեր ենք: Հակոբ աղան, որ արդեն սկսել էր ռուսերեն խոսել, ավելացրեց.

— Эту епископ, Эчмиадзин приехал. Эту да кости.

Բայց երկուսից էլ ավելի պերճախոս եղավ Հովսեփ Խունունցի խուրջինը, երբ բաց եղավ և մեջտեղ դրվեցին պես-պես ուտելիքներ և մի շիշ կոնյակ (վերջապե՜ս):

Մորթած և փետրած հավ ունեցող օֆիցերը, որ խուճուճ մազերով մի մարդ էր, դարձավ անկյունում կանգնած զինվոր ծառայողին և ասաց.

— Սիդոր (թե՛ Ֆյոդոր — մոռացել եմ), վերցրու այս հավն ու պահիր: Էգուց կուտենք...

Եվ, հրավիրելով իր հետ եկած օֆիցերին, ծալապատիկ բազմեց մինդարի վրա ու մասնակցեց մեր սեղանին:

Ներս մտավ տեր-Նիկոլը և ականջիս շշնջաց.— Բագոյին ասացի, որ ոչխարի փորոտիքը ջոկ խորովե:

Դուրս եկավ, որ մորթած ու փետրած հավ բերողը տեղական կոմենդանտի օգնականն է, իսկ մյուսը բժիշկ է, և մեր բռնած սենյակը նրանց կացարանն է:

Երկուսն էլ երիտասարդ էին, երկուսն էլ կենսախինդ, զվարճախոս, միևնույն ժամանակ շատ լրջամիտ և մտավորապես զարգացած: Հաճելի էր լսել նրանց դատողությունները ներկա պատերազմի լուսավոր և խավար կողմերի մասին:

— Չպիտի հավատալ շատ բաների, որ գրում են լրագիրները գոնե այս երկրի պատերազմի մասին,— ասաց, ի միջի այլոց կոմենդանտի օգնականը։— Նորերս մեր ձեռքն ընկան «Русское СЛОВО-» լրագրի մի քանի համարները։ Կարդացինք Միխայլովսկու պարծենկոտ հոդվածները և ապշեցինք։

Այդ մարդիկ չգիտեն, որ որքան ևս փառաբանեն մեզ, սուտը միշտ ատելի է մեզ համար։ Նրանք Թուրքիան ներկայացնում են ինչպես ձիարշավի դաշտ, իսկ մեզ ջիգիթներ։ «Մեր հաղթական բանակն անխափան արշավում էր և այլն։ Այո, արշավում ենք, բայց ի՞նչպես։ Մեր զինվորները Չինգիլի բարձունքներում արտիլերիան անց են կացրել իրենց ուսերի վրա բառիս բուն նշանակությամբ և տասնավորս քերսա տարածությունը, գիշեր-ցերեկ աշխատելով, հազիվ կարողացել են անցնել տասնուերեք օրում։ Նույն տանջանքները նրանք կրում են և տափարակների վրա։ Երկիրը ծածկված է անթիվ առուներով։ Երբ թնդանոթակիր սայլերը խրվում են նրանց մեջ, երբեմն մի ամբողջ շաբաթ ենք կորցնում նրանց դուրս բերելու համար։ Իսկ մեր կյանքը, մեր կացարանն՞ը, իսկ թանկությո՞ւնը։ Երևակայեցեք, մի բուռն հինգ կոպեկանոց մախորկան գնում ենք երկու ռուբլով։ Հեշտ է նստել տաք կաբինետներում և Թուրքիան գրավել կարմիր մատիտով քարտեզի վրա։ Ոչ, պարոններ, մեզ համար ճշմարտության դառնությունն ավելի հաճելի է, քան ռեկլամը...

Ընթրիքը, որ տեր-Նիկոլի շնորհիվ դարձել էր կատարելապես Լուկուլլոսի սեղան, վերջացավ զվարճաբանությամբ և անեկդոտներով։

## XII

Հետևյալ առավոտ ուղի ընկանք սովորականից կանուխ։ Գնում ենք Ղարա-Քիլիսա բայց խոսք ենք տվել ճանապարհին Ղազը-Քեոյում հյուրասիրվել Հակոբ աղա Տեր-Ստեփանյանի տանը և ծանոթանալ գյուղի վիճակին։

Ահա մի երջանիկ ընտանիք, բաղկացած երեք թե չորս սերունդներից և երեսուն հոգուց։ Գոմից լսվում է տավարի բառաչյունը. ամբարներում դեռ ցորեն ու գարի կան— հազվագյուտ բան այս ավեր երկրում։ Սենյակը, ուր մեզ ընդունում են զվարթ դեմքերով, զարդարված է գորգերով, կանայք, երեխաները ցնցոտիների մեջ չեն։ Մի՞թե թշվառությունը, որ ընդհանուր է, իր սև թևերով չի շոշափել այս միակ տունը։ Ավաղ, այդպես չէ՛ Հակոբ աղան խելացի է, լեզվանի, հնարագետ, բայց և այնպես նա ահագին կարողության միայն մի մասն է կարողացել ազատել ավարից։

Մեզ հյուրասիրում են բաց սրտով այնպես, ինչպես կարող է միայն անաղարտ նահապետական հայ ընտանիքը հյուրասիրել։ Մի հյուրընկալություն, որի մասին եվրոպական գյուղացին գաղափար անգամ չունի։ Փորձեցեք որևէ վարձ առաջարկել այդ մորթվող ոչխարի, բրնձի, յուղի, թեյ ու շաքարի համար, և տեսեք ինչպես կվիրավորեք նրանց։ Նրանք մի վարձ են միայն սպասում ձեզնից, մի ակնկալություն միայն ունեն— քաջալերական խոսք և խրախույս ապագայի վերաբերմամբ։ Այդքանը մենք գոց գիտենք, և ահա Խորենն ասում է այն, ինչ որ ասել է բոլոր գյուղերում և դեռ շատ անգամ պիտի կրկնի։

— Դարեր եք համբերել, համբերեցեք մի փոքր և կտեսնեք ձեր ազատությունը...

Հավատում ենք, բայց...— արտասանում են գյուղացիները և իսկույն լռում, նայում իրարու տարակուսանքով և գլուխները թեքում կրծքներին։

Եվ այդ «բայց»-ի, այդ խորհրդավոր շարժման, այդ մտախոհ ու մռայլ աչքերի, այդ կասկածոտ հայացքների մեջ ես կարդում եմ խորին թերահավատություն: Զգում եմ, որ մարդիկ իրենց հոգու խորքում մարգարեանում են գալիք չարիքները, այն, ինչ որ սպառնում է նրանց ամեն ժամ— վատագույնը եղածների մեջ: Ես կանխավ ողբում եմ այդ հուժկու կրծքերը և երկաթյա բազուկները, որ ստեղծված են միայն մի բանի համար— խաղաղ, կուլտուրական աշխատանքի: Խե՜ղճ գյուղացիներ, խե՜ղճ մարդիկ...

Անցնում ենք հետևյալ գյուղը, որ դարձյալ մեր ճանապարհի վրա է: Զիրա է կոչվում նա, կես հայաբնակ, կես քուրդաբնակ է: Ամբողջ բնակչությունը դուրս է թափվում մեզ դիմավորելու: Գալիս են և քրդերը: Եպիսկոպոսը սրանց էլ է խոսք ուղղում: Ազդո՜ւմ է արդյոք նրանց վրա հայ հոգևորականի խոսքը: Հազիվ թե: Դեմքերի կես արհամարհական և կես նախանձոտ արտահայտությունից արդեն երևում է, որ գազանային բնազդները զսպված են ժամանակավորապես: Բավական է, որ ռուս զինվորը հեռանա, և նրանք պիտի բռնկվեն ավելի կատաղի, քան մինչև այժմ....

Մեզ պատմում են, որ պատերազմից երեք օր առաջ համիդիական Հասան Էֆենդու որդի Իսայը Զիրայում առևանգել է Գյոզալ Ղազարյանց անունով մի աղջիկ և տարել լեռները: Եկել են ռուսները և առևանգելուց տասներկու օր անցած ազատել հայուհուն և հանձնել իր ծնողներին: Այժմ Իսայը, որ ազատ շրջում է, սպառնում է կոտորել աղջկա մերձավորներին, եթե իր «ավարը» շեն վերադարձնիլ նրան:

Գյոզալի եղբայրներն ու հայրը մեզ խնդրում են միջամտել, որ իրենց զենք տրվի ինքնապաշտպանության համար:

Խոստանում ենք նրանց խնդիրը կատարել Ղարա-Քիլիսայում և շտապում ենք անցնել Երինջա գյուղը, որը նույնպես մեր ճանապարհի վրա է: Իջնում ենք ձիերից և գյուղացիների խուռն բազմության հետ մտնում ենք եկեղեցի: Դժվար է ասել ինչով է այդ շինությունը տարբերվում ողորմելի խրճիթներից՝ բացի իր ավելի խղճուկ տեսքից: Կիսով չափ նա գետնափոր է, իսկ մյուս կեսը ներկայացնում է հողի գետնաքարերի և խռիվի խառնուրդ: Մաղի պես ծակծակոտ առաստաղը հենված է երեք-չորս փտած ու բորբոսնած սյուների վրա: Թվում է, որ բավական է մի թույլ հարված սյուներից մեկին, և ամբողջ շինությունը կխորտակվի ինչպես հավաբուն:

Ահա թե որտեղ է թուրքահայն անաղարտ պահել ու պահպանել իր նախահայրերի կրոնը. դարեր շարունակ, քրիստոնեության ոխերիմ թշնամիների մեջ: Լավ է արել թե վատ, այդ այլ խնդիր է, բայց դա նրա հոգեկան անասնական կորովի զորավոր ապացույցն է, և միանգամայն արդարացի է Սմբատ Խաչատրյանցը, որ ասաց.

— Հայ ժողովուրդ, ես խոնարհվում եմ քո առաջ: Դա միակ խոսքն էր, որ պիտի արտասանվեր այդ կիսամերկ ամբոխի հասցեին, և արտասանվեց ամենայն անկեղծությամբ:

Երբ եկեղեցուց դուրս էինք գալիս, տեսա մի պատկեր, որ երբեք չպիտի մոռանամ: Խարխուլ դռների առջև, ձեռները կրծքի վրա դրած կանգնած էր տեր-Հովհաննեսը, չգիտեմ որ գյուղի քահանան: Պարթև հասակով, սքանչելի նահապետական դեմքով մի մարդ, որի կլասիկական գեղեցկությունը խորին պատկառանք էր ներշնչում: Արցունքի երկու և միայն երկու կաթիլներ ընկան նրա խոշոր աչքերից և կանգ առան այտերի վրա, փայլելով մայր մտնող արեգակի թույլ ճառագայթների տակ: Մարդը վիշտ ուներ, թուրք զինվորները նոր էին սպանել նրա միակ որդուն:

Ծերունին խոնարհվեց և քրիստոնեական հեզությամբ բռնեց եպիսկոպոսի ձիու ասպանդակը: Թվաց ինձ, որ չպիտի թույլ տրվեր նրան այդ անել. թվաց ինձ, որ

հակառակը պիտի լիներ հանուն այն վսեմության, որ կոչվում է մարդկային վիշտ, որի առջև պիտի խոնարհվեն ամենքը և որի առջև պիտի ոչնչանան բոլոր աստիճանները...

Ղարա-Քիլիսայումն ենք: Մի կենտրոնական մեծ ավան, ուր գտնվում է զորաբաժնի շտաբը: Հազիվ զարթնել ենք և դեռ մեզ կարգի չենք բերել, արդեն մեր կացարանը պաշարվել է այցելուների ահագին խմբերով: Մարդիկ եկել են շրջակա գյուղերից իրենց թշվառությունները մեզ պատմելու և օգնություն խնդրելու... ապագայի համար...

Դարձյալ քաջալերական խոսքեր, որ արդեն դարձել են թութակի երգ և ինձ զզվեցնում են, նույնիսկ կարեկցության զգացումը սկսում է բթանալ, ինչպես, առհասարակ, ամեն մի զգացում: Յոթն օր է միևնույն ներվերին շարունակ զարկում են մուրճով միևնույն հարվածով, միատեսակ տաղտկալի և միատեսակ նողկալի:

Գնացինք զորաբաժնի գլխավոր գեներալ-լեյտենանտ Ա.-վի մոտ: Հարկավոր էր նրան հայտնել մեր մարշրուտը: Որոշել էինք գնալ Դութաղ մեր կամավորների հետ տեսնվելու հետո անցնել Բասեն:

— Այդ ես չեմ կարող թույլ տալ,— ասաց գեներալը դրականորեն:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ներկայումս Դութաղի մոտ տեղի ունի ճակատամարտ, որին մասնակցում են և ձեր կամավորները:

— Մեզ այնտեղ մղողն իսկ և իսկ այդ է:

— Անհնարին է: Թուրքերը կարող են ձեզ գերի վերցնել: Ես այդ աշխարհական պարոնների մասին չեմ հոգում, այլ ձեր մասին, սրբազան: Զինվորականներս կխայտառակվենք, եթե դուք ընկնեք թուրքերի ձեռքը: Ոչ, ոչ, թույլ չեմ տա:

— Ինչո՞ւ գեներալ Բ.-ց չվախեցավ թույլ տալ Վրաստանի էկզարխին կռվի դաշտ գնալու և մոտիկից տեսնելու ճակատամարտը:

— Դեռ հարց է, լա՞վ էր, որ գլխավոր հրամանատարդ թույլ տվեց էկզարխին գնալու պատերազմի դաշտը, թե՞ չէ: Բայց ինչ վերաբերվում է ինձ, ես հակառակ եմ…

Մենք հասկացանք գեներալի ետին միտքը: Նա չէր ուզում, որ մենք հանդիպենք մեր կամավորներին:

— Իսկ Ալաշկերտ կարո՞ղ ենք գնալ:

— Կարող եք:

— Եվ անցնել Դայա՞ր:

Գեներալը տատանվեց իսկույն պատասխանելու: Մտածեց և ասաց անորոշ.

— Այդ էլ կասկածելի

— Ինչո՞ւ:

— Գիտեք, ես խորհուրդ եմ տալիս ձեզ վերադառնալ նույն ճանապարհով, որով եկել եք, և Իգդիրի վրայով անցնեք Սարիղամիշի կողմերը:

— Բայց այդ ահագին ժամանակ կխլե մեզնից: Մինչդեռ Դայարն այստեղից երկու օրվա ճանապարհ է:

— Փույթ չէ, փոխարենը դուք ավելի ապահով կճամփորդեք:

— Զուր եք անհանգստանում մեր ապահովության մասին: Անձրևի տակ ընկնողը թրջվելուց չպիտի վախենա: Գեներալը նորից մտածեց և ասաց.

— Չե՞ք կարող արդյոք մի օրով հետաձգել ձեր ուղևորությունը:

— Կարող ենք, բայց ինչո՞ւ:

— Որպեսզի ես կարողանամ որոշ պատասխանել ձեր հարցին՝ կարելի՞ է անցնել Դայարը, թե՛ ոչ: Այս երեկո ես այնտեղից սպասում եմ կարևոր լուրերի:

— Լավ, կսպասենք:

Խոսք բացվեց կամավորների երկրորդ խմբի մասին: Կամեցանք իմանալ այս անգամ մի զինվորականի կարծիքը, որ ինքն էլ կովկասցի էր և ոչ ռուս:

Քանի մի մութ ակնարկների, մի հարատև հեգնական ժպիտ ոչ ռուս ազգի գեներալի երկարավուն կարմիր-կապտագույն դեմքի վրա, և մենք հասկացանք նրա տրամադրությունը, որ հարկավ անհաճո էր մեզ համար:

Հետազայում փաստերը հաստատեցին, որ մեր տպավորությունը ճիշտ է եղել:

Ակնարկ եղավ տեղական հայերի անմխիթար կացության մասին:

Գեներալն ասաց.

— Այստեղ հայերը զբաղված են միայն կողոպուտով:

— Ո՞ւմ են կողոպտում:

— Թուրքին և քուրդին:

Մեր տեսակցության ժամանակ ներկա էր գեներալի շտաբի գլխավոր գնդապետ Լ.-կին: Այդ մարդը կրկնում էր բոլորը, ինչ որ ասում էր իր մերձավորը:

Փորձեցինք կատարել առևանգված Գյոզալի հոր և եղբայրների խնդիրը զենքի մասին:

— Այդ մարդկանց հրացան տալը միանգամայն ավելորդ է,— մեջ մտավ իսկույն ևեթ գնդապետը:

— Ինչո՞ւ:

— Որովհետև այդ աղջիկը սիրահարված է իրեն առևանգող քրդի վրա: Նա իր կամքով էր փախել Իսայի հետ:

— Ո՞վ ասաց ձեզ:

— Ինքը քուրդը:

— Եվ դուք հավատո՞ւմ եք այդ բանին:

— Ինչո՞ւ չպիտի հավատալ: Քուրդն ասում է. «Կանչեցեք աղջկան և հարցրեք. եթե նա չխոստովանի, որ ինձ սիրում է, ես ձեռք կվերցնեմ նրանից»:

— Դուք հարցրե՞լ եք աղջկան:

— Դեռ ոչ:

— Գիտեք, պարոն գնդապետ, երբ մի քուրդ առևանգում է հայ աղջկան, մահվան սպառնալիքով ստիպում է նրան ասել, որ սիրահարված է իր առևանգողի վրա: Եթե չասի, քուրդը կսպանե նրան: Այս բանը, երևի, ձեզ հայտնի չէ:

— Այսպես թե այնպես,— վճռեց գեներալը,— ես հայերին զենք տալ չեմ կարող...

Մեզ մնում էր հրաժեշտ տալ գեներալին:

Վերադառնալով մեր կացարանը, տեր-Նիկոլին գտա զվարթ տրամադրության մեջ.

— Հարիսա կերա,— ասաց նա, ձեռով շփելով իր փորակապը, որ բավական բարձրացել էր:

— Ո՞րտեղ:

— Այ, այս տան ներքին հարկում: Այնտեղ մի հայ ընտանիք կա, եփել էր, ինձ էլ մեծարեց:

— Մենակ:

Պատվիրեցի, որ վաղն առավոտյան պատրաստեն ամենքիս համար:

## XIII

— Սրբազան Սելիմ փաշան գալիս է այցելութան ասաց գեներալ Ա.-վի թարգման Խաչատուրը, մի բարձրահասակ երիտասարդ, խորապես համակված իր հայրենակիցների վշտերով:

— Թող գա:

Դեռ մինչև Ղարա-Քիլիսա հասնելը շատ բաներ էինք լսել այդ հռչակավոր քուրդ փաշայի մասին, որ շամշադլուների ցեղապետն էր, հռչակավոր իր դաժանությամբ, խորամանկությամբ և անթիվ հարստահարություններով: Ասում են, որ նա մի ժամանակ եղել է Սուլթան Համիդի կոշիկները լիզոլներից մեկը, իսկ հետո «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ջերմ կողմնակիցը, երբ սա Թուրքիայի քաղաքական ղեկն իր ձեռքն է առել:

Ներկայումս Սելիմ փաշան «անձնատուր» է եղել ռուսներին և Հանգիստ ապրում է Ղարա-Թիլիսայում, վայելելով գեներալ Ա.-վի հովանավորությունը: Այն ինչ նրա երկու որդիները՝ Սայիդ և Ռասուլ բեգերը, շարունակում են պատերազմել ռուս զորքերի դեմ իրանց հոր ալայների հետ: Ոմանք այդ ալայների թիվը որոշում են ութ, ոմանք վեց, հինգ: Այսպես թե այնպես, դա մի բավական մեծ ուժ է:

Անտարակույս Սելիմ փաշան որոշ նպատակով է հավատարմության երդում տվել ռուսներին: Բանն այն է, որ նա հաստատ չգիտե ներկա պատերազմից ով հաղթող դուրս կգա— Ռուսիա՞ն, թե՞ Թուրքիան: Եթե կհաղթեն ռուսները, ապա չէ՞ որ փաշան

անձնատուր է եղել, ուրեմն արժանի է ներման, նույնիսկ պարգևների և կարող է իր որդիների համար էլ ներումն աղերսել ու ստանալ: իսկ եթե կհաղթեն թուրքերը, չէ որ նրա որդիներն ու զորքը կռվել են գյավուրի դեմ, ուրեմն նրանք կարող են ներումն ստանալ դավաճան փաշայի համար:

Կոմեդիան պարզ է, բայց գեներալ Ա.-վը չի ուզում հավատալ, որ իրավ դա կոմեդիա է և շատ վտանգավոր, իսկ իր համար: Նա այն համոզմունքին է, ինչպես մեզ էլ ասաց, որ Թուրքիան կարելի է գրավել առանց մի կաթիլ արյուն թափելու և խորապես հավատացած է, որ այդ իրեն հաջողվում է: Այն ինչ չար լեզուներն ասում են, որ Սելիմ փաշան իր մարդկանց միջոցով ամեն օր գազանի տեղեկություններ է տալիս թուրքերին ռուս զորքերի յուրաքանչյուր քայլի մասին:

Ներս մտավ միջահասակ մի ծերունի, կարճ խուզած ալեխառն մորուքով, խորշոմած դեմքով, որ աղյուսի գույն ուներ:

Հագած էր նա օֆիցերի մոխրագույն վերարկու սպիտակ մետաղյա կոճակներով առանց ուսնոցների, այնպիսին, որպիսին սիրում են հագնել Կովկասի էժանագին բեգերը:

Ներկա եղող տեղական հայերի դեմքերը միանգամից մռայլվեցին, և նրանց աչքերի մեջ անմիջապես փայլեց դարավոր ատելության զգացումը:

Սելիմ փաշան անվրդով երկու անգամ ձեռը դրեց կրծքին ու ճակատին և եպիսկոպոսի հրավերով նստեց աթոռի վրա, պատի տակ, թողնելով իր ծառային դռների մոտ:

Սկսեց նա սովորական ասիական շողոքորթությամբ: Օ, նա անսահման երջանիկ է, տեսնելով թանկագին հյուրերին այստեղ: Նա ջերմ կողմնակից ու պաշտպան է եղել միշտ ազգերի և կրոնների սերտ բարեկամության: Չէ որ թե՛ ավետարանը և թե ղուռանը քարոզում են սեր, խաղաղություն և եղբայրություն:

Մի կծու հեգնական ժպիտ աղավաղեց ներկա գտնվող տեղացի հայերի դեմքերը և մի տխուր հառաչանք դուրս թռավ նրանց կրծքերից: Հակոբ աղան, ծխախոտի ծուխը բաց թողնելով գլխից վեր, արտասանեց «հը» և մի խորհրդավոր հայացք ձգեց մեզ վրա: Հասկացանք նրա միտքը, խոսողը մի հին աղվես է գայլի ախորժակով, չպիտի Հավատալ:

Քովս նստած էր մի կարմրերես, առողջ տղամարդ: Նա մի ուժգին շարժում գործեց, այնպես, որ աթոռը ճռճռաց նրա տակ:

Մոռացել եմ թուրքերեն թե քուրդերեն էր խոսում Սելիմ փաշան, բայց նրա ասածները թարգմանում էին մերթ Հակոբ աղան: Մերթ Խաչատուրը և երբեմն Միհրան անունով մի վաճառական:

Վերջապես, երկար առաջաբանից և տատանումներից հետո փաշան հայտնեց իր այցելության բուն նպատակը: Գանգատվեց, որ հայերը քշել են նրա տավարն ու ոչխարների և տարել իրենց գյուղերը:

— Ուրեմն, դուք կողոպտվե՞լ եք, փաշա:

— Այո:

— Ինչո՞վ կարող ենք մենք օգնել ձեզ:

— Միջամտեցեք, որ իմ սեփականությունն ինձ ետ տրվի:

Քովս նստած կարմրերես տղամարդը չկարողացավ իրեն զսպել և վրդովված գոչեց.

— Դո՞ւք եք գանգատվում հայերի վրա, փաշա: Եվ մի դառն երկարատև ծիծաղ ընդհատեց նրա խոսքը: Ապա նա զայրացած սկսեց թվել «կողոպտված» փաշայի արածները, այն չարիքները, որ նա պատճառել է իրեն և ուրիշ շատ ու շատ հայերի: Գուցե նա երկար ժամանակ խոսեր եթե մեր ներկայությունը չզսպեր նրան:

Պարզվեց, որ իրավ մի քանի, հայեր զինված հարձակվել են Սելիմի ծառաների վրա և նրա տավարի մի մասը տարել: Բայց այդ եղել է ոչ փաշայի սեփականությունը, այլ չնչին մասն այն ավարի, որ խլված է հայերից:

— Ներեցեք, փաշա,— ասաց եպիսկոպոսը,— մեր իրավունքներից դուրս է այդ տեսակ գանգատներով զբաղվել: Մենք դատավորներ չենք: Դիմեցեք գեներալի օգնությանը: Փաշան ոչինչ չասաց, գլուխ տվեց և հեռացավ, մի կատաղի հայացք ձգելով կամրերես հայի վրա…

Նույն օրն եկան երկու թուրք գյուղացիներ, որոնցից մեկը մոլլա էր, և գանգատվեցին, թե Վահան անունով մի ուսուցիչ Խիգեր գյուղից ինչ-որ Սաքոյի, Մուշեղի և Մխոյի հետ. հարձակվել են թուրքական Փոխան գյուղի վրա և թալանել… Նույն պատասխանն ստացան նրանք, ինչ որ Սելիմ փաշան:

— Ասացեք ինձ անկեղծ,— դիմեցի ես մի ռուսահայի, որ պատերազմի սկզբում ռուս զորքերի մեջ էր եղել,— արդարացի՞ են այդ գանգատները:

— Դժբախտաբար, մասամբ, այո,— պատասխանեց ռուսահայը, որ բնավ ստելու շարժառիթ չուներ,— գոնե ես անձամբ կարող եմ վկայել հետևյալը: Երբ մեր զորքն եկավ այստեղ, հայերը, իհարկե, ընդունեցին նրան ոգևորությամբ: Այն Ժամանակ նրանցից շատերին հրացաններ տվեցին զորքին օգնելու և առաջնորդելու համար: Միառժամանակ նրանք իսկապես օգտակար եղան: Բայց շուտով թողեցին կռվի դաշտը և սկսեցին կողոպտել քուրդերին: Կարող եմ ասել, որ մինչև անգամ այստեղ եկող լալկանների մեջ ոմանք, որոնց տներում կամ խանութներում կգտնեք թալանած ապրանք:

## XIV

— Այդ ցավալի է, շատ ցավալի,— արտասանեցի ես:

— Այո, իհարկե,— համաձայնվեց ռուսահայը,— բայց ես շատ էլ չեմ մեղադրում այդ մարդկանց: Նրանք քուրդերից ետ են խլում իսկապես իրանց սեփականությունը, այն էլ, իհարկե, նրա մի աննշան մասը: Դա ավելի վրեժխնդրություն է, քան ընչասիրություն: Բայց մեր ճակատագիրը դժբախտ աստղի տակ է կազմված, այս է, որ աչքի առաջ չունեն այստեղի հայերը: Նրանք չեն ուզում հասկանալ, որ հայի անթիվ հակառակորդները պատրաստ են մեր ամենափոքրիկ սխալը ազգային հանցանքի վերածել: Եվ ահա նույնիսկ ռուս մեծավորները, մասնավոր դեպքերն ընդհանրացնելով, ասում են. «Հայերն այժմ միայն կողոպուտով են զբաղված»: Դա է, որ ահագին վնասներ է տալիս մեր հայրենակիցներին: Դա Է, եթե կամենաք, գլխավոր պատճառը, որ այլևս նրանց զենք չեն տալիս ինքնապաշտպանության համար:

— Բայց մի թե իրենք, հայերը չեն կարող արատից մաքրել իրենց անունը, զսպելով կամ նույնիսկ պատմելով մասնավոր կողոպտիչներին:

— Կարող են, իհարկե, եթե կամենան և շատ լավ կլիներ, եթե անեին: Բայց չեն անում, այս է ցավալին:

Երեկոյան գեներալը լուր ուղարկեց մեզ, թե մեր նախագծած երկրորդ ուղղության վրա մարտական ընդհարումներ տեղի չունեն: Եթե կամենանք, կարող ենք ուղևորվել Դայար, միայն այդ դեպքում գեներալը հրաժարվում է երաշխավորել մեր ապահովությունը: Իր կողմից խորհուրդ է տալիս չբավականանալ կազակներով, միանալ Դայար ուղարկվող տրանսպորտին, որին ուղեկցում են երկու հարյուր հրացանակիրներ գնդացիրներով:

Որոշեցինք վաղը գնալ Ալաշկերտ և այնտեղ տեսնել, եթե ճանապարհը ազատ է, գնալ Դայար, իսկ եթե ոչ ընտրել մի նոր ուղղություն, այն է աջակողմյան լեռնաշղթան Դելի-Քեոյի վրայով:

— Բայց այդ ճանապարհն ավելի վտանգավոր է,— ասաց Խաչատուրը:

— Ի՞նչպես...

— Այս րոպեիս լուր ստացվեց, որ Դելի-Քեոյի մոտ քուրդերը հարձակվել են Կաղզվանից եկող հայերի վրա և սպանել ու վիրավորել յոթ մարդ:

Մյուս օրն առավոտյան, տեր-Նիկոլի պատրաստել տրված հարիսան ուտելուց հետո, գոտեպնդվեցինք ճանապարհ ընկնելու: Մինչ մենք զբաղված էինք ձիակործան Թումանյանի համար մի նոր ձի սակարկելով, կազակ օֆիցերը մի նամակ բերեց գնդապետ Լ.-ից: Շտաբի գլխավորը հաղորդում էր, որ Դելի-Բաբայի ճանապարհին երևացել է քուրդերի ահագին բազմություն, հետևաբար վտանգավոր է այս կողմով գնալը:

Նույն նամակի մեջ հաղորդվում էր, որ թուրքերը պատրաստվում են մեծ ուժերով հարձակվել Սարիղամիշի վրա: Տարօրինակ բան: Նոյեմբերի 28-ին Ղարա-Քիլիսայում գիտեին այդ բանը, մինչդեռ դեկտեմբերի 12-ին, երբ արդեն հարձակումը սկսվեց, Սարիղամիշում տեղեկություն չունեին թուրքերի քանակության մասին, կարծում էին, որ հարձակվողը մի ավազակախումբ է…

— Է՛ է, պարոններ,— ասացի ես,— ինչպես տեսնում եմ, մեր Դելի-Բաբա գնալը չի հաջողվելու, եկեք վերադառնանք և Սարիղամիշի վրայով գնանք դեպի աջ ֆրոնտը:

Ինձ հետ համաձայնվեց միայն Խաչատրյանցը.

— Դուք վախկոտ եք,— պատասխանեց Խորեն եպիսկոպոս մի ձեռով շոշափելով գրպանի ռևոլվերը, մյուսով, ըստ սովորության, մտրակելով ֆարաջեի փեշերը.

— Այո, դուք վախկոտ եք,— ետ չմնաց Զելիմ խանի փափախը:

Հովհաննես Թումանյանը ոչինչ չասաց, այլ միայն կողքին քարշ արած արկղը դղրդացրեց:

Երևանի քաղաքագլուխը նենգամիտ ժպտաց: Մենք երկուսս էլ սարսափում էինք ոչ այնքան քուրդերից, որքան այդ ահեղ երրորդությունից:

Ինչ վերաբերվում է տեր-Նիկոլին, նա ասաց.

— Գյալմիդասան Հայրապետյանցն ասել է, եթե այսօր չգնան, թող ճաշին շնորհ բերեն ինձ մոտ:

Գյալմիդասանը (այսպիսի անուն էլ կա թուրքահայերի մեջ) Ղարա-Քիլիսայի ունևոր հայերից էր: Մի զվարճալի ծերունի, որ այդ օրը մեզ հյուրասիրեց ոչ միայն ճաշով, այլ իր հայրենասիրական ոտանավորներով...

Հետևյալ օրը իմ առաջարկը չընդունվեց, և մենք ուղևորվեցինք Ալաշկերտ:

— Լսո՞ւմ եք,— ընդհատեց մեր խոսակցությունը կազակ օֆիցերը:

Իրեց-Քյոլ գյուղից սկսած լսվում էր ձախ կողմից թնդանոթների որոտը: Այժմ լսվեց հրացանաձգություն աջ կողմից:

Գիտեինք ինչ է ձախ կողմինը— Դութախի կռիվը, բայց թե ինչ էր կատարվում աջ կողմում— օֆիցերը չկարողացավ բացատրել: Համենայնդեպս հրացանաձգության ուժից չէր կարելի ենթադրել մի խոշոր գործ:

Ալաշկերտ հասանք թանձր ձյունի տակ: Մեզ դիմավորեց Կովկասյան լեռնականի հագուստով մի հայ երիտասարդ և հրավիրեց իր տունը: Փոքրիկ և մաքուր երկհարկանի մի կացարան էր դա ժայռի կրծքին կպած արծվի բնի պես: Երբ տեղավորվեցինք բավական Լուսավոր և ընդարձակ սենյակում, ներս մտավ չալմայով մի թուրք և շնորհավորեց մեր գալուստը նույնպես, ինչպես տանտեր: Պարզվեց, որ տունն իսկապես թուրքին է պատկանում, իսկ հայը նրան ժամանակավորապես է տիրացել:

— Ինչո՞ւ,— հարցրինք մենք:

— Կարգ է: Հաջին կվախենա ռուսներու արկածներեն: Երբ քուրդերը կուգան, մենք ալ մեր տներ թուրքերի պաշտպանությանը կհանձնենք:

Հաջին խելացի ու նիհար դեմքով մի ծերունի էր, երկայն հինայած մորուքով: Քուրդերի վերջին հարձակման ժամանակ նա իր տանը պատսպարել էր տասնումեկ հայ ընտանիքներ և նրանց ազատել կոտորածից:

— Վալլահ, բիլլահ,— ասաց նա, վառարանի քով նստած, տաշեղներ մանրացնելով,— մենք հանգիստ կապրեինք մեր տներում, եթե ալմանը ջուրը չպղտորեր և Անվերը չլրբանար:

Ալմանը գերմանացին էր, Անվե՛րը — էնվեր փաշան: Հաջին, ձեռքերը դեպի վեր բարձրացնելով, անիծեց երկուսին էլ, կանչելով երկնքի բոլոր չարիքները նրանց վրա:

Մեզ ծառայում էր Նիզամադդին անունով մի քուրդ պատանի: նրա ծնողները փախել էին լեռները, իրանց զավակին հանձնելով հայերի պահպանությանը:

Սենյակը լցվեց այցելուներով: Պարզվեց, որ մեր լսած հրաձգությունը տեղի է ունեցել մերձավոր ինչ-որ հայաբնակ գյուղի մոտ: Քուրդերի մի մեծ բազմություն հարձակվել է հայերին կողոպտելու ու կոտորելու: Ալաշկերտցի մի խումբ երիտասարդներ գնացել են գյուղը պաշտպանելու, բայց չեն կարողացել դիմադրել քուրդերի քանակությանը: Օգնության են հասել կազակները և, քուրդերի մի մասը կոտորելով մյուսներին ստիպել են փախչեր: Հայերից սպանվել են ընդամենը երկու հոգի:

-— Սակայն եթե չըլլար կազակների օգնությունը, գյուղն ամբողջովին պիտի ջնջեին,— խոստովանում էին ալաշկերտցիները, նույնիսկ նրանք, որոնք…

Մեզ խնդրեցին միջամտել, որ կազակներ ուղարկեին, հայերի օգնությամբ, սպանված երիտասարդների դիակները բերկլու ու հողին հանձնելու: Մերձավորները կարող էին կրել նրանց մահվան վիշտը: Բայց դիակների կորստյան կսկիծը — ոչ:

Կոմենդանտը իսկույն հարդեց մեր միջամտությունը: Մի քանի ժամ անցած՝ դիակները բերվեցին այլանդակ վիճակում:

## XV

Մենք շրջապատել ենք մի թարմ գերեզմանի, որի հողը շաղախված է արդար արյունով: Նրա կաթիլները դեռ չեն անհետացել Ալաշկերտի սառած փողոցներում:

Ներսիսյան դպրոցի մի նախկին սան, Հովսեփ Տեր-Մինասյան անունով, քահանա է ձեռնադրվում իր հայրենակիցների տառապանքները թեթևացնելու նպատակով: Ի՞նչ է անում նա: Այն, ինչ որ պարտավոր էր անել մի հոգևոր հովիվ, որի զենքը աստծու խոսքն է միայն: Եկեղեցում նա քարոզում է — համբերություն, սեր, խաղաղություն: Եկեղեցուց դուրս նա տարածում է իր ուսուցիչներից ներշնչված գաղափարը ազգերի և ժողովուրդների համերաշխություն: Նա աշխատում է թուրքին և քրդին հասկացնել, թե չկա մարդու համար կյանք փոխադարձ ատելության և թշնամության մեջ:

— Ինչո՞ւ համար իրարու խանգարենք աստծու բարիքները վայելելու,— հիշում են ալաշկերտցիները դառը հառաչանքով նրա անպաճույճ խոսքերը,— երկինքն անսահման է, երկիրը ընդարձակ, ամենիս համար օդ կա շնչելու, տեղ կա ապրելու:

Եվ նա իր անձնական օրինակով ցույց է տալիս, թե ինչպես է մարդը պարտավոր ապրելու: Նա օգնում է ամենքին՝ և՛ քրիստոնեին, և՛ մահմեդականին: Նա չի վարանում իր չնչին վաստակը խլել սեփական զավակներից և բաժանել կարոտյալներին, տալ իր վերջին շապիկը:

Բայց նա հայ է, մի հալածված ժողովրդի զավակ, չի կարող զսպել իր սրտի վիշտը: Եվ ահա Թիֆլիսի լրագրներում երևում են նրա մի շարք թղթակցությունները, ուր նկարագրված է մայրենի ժողովրդի քաղաքական ողբալի կացությունը:

Ասացին ինձ, թե հենց այդ թղթակցություններն են գրգռել թուրքերին Հովսեփ քահանա Տեր-Մինասյանցի դեմ, բայց չասացին, ով է նրանց համար թարգմանել հանգուցյալի գրածները…

Ռուս զորքերի հաղթական արշավանքի լուրը Ալաշկերտ հասնելուն պես գազանության առաջին զոհը դառնում է ապաբախտ հայրենասերը: Կարծես մի խեղճ հայ քահանա է եղել այդ արշավանքի սկզբնապատճառը: Թուրքերը բռնում են նրան, ծեծում, անարգում, տանջանքների ենթարկում: Այնուհետև կտրում են նրա գլուխը, աչքերը հանելուց հետո, տնկում են մի ցցի վրա և երեք օր, երեք գիշեր շրջեցնում Ալաշկերտի փողոցներում:

Հայերը ահաբեկվում են:

Մինչև տեր-Նիկոլի «ի վերջին՝ Երուսաղեմը» արցունքներ էր կորզում հանդիսականների աչքերից, մի մարդկային մարմին սփռվեց երեսն ի վար գերեզմանի վրա և գրկեց նրան ինչպես կենդանի տապանաքար:

— Ո՞վ է այդ ողորմելին:

— Սպանվածի հորեղբայրը:

— Հայր չունի՞:

— Ունի, Ղարսում քահանա է:

— Չ՞ի տեսել իր որդու դիակը:

— Ոչ:

— Գերեզմա՞նը:

— Ոչ:

— Ինչո՞ւ:

— Ճանապարհի ծախս չունի գալու:

— Իսկ ընտանի՞քը սպանվածի:

— Չորս փոքրիկ զավակներ է թողել, առանց որևէ ապահովության:

— Ի՞նչ են անում նրանք:

— Թափառում են դռնեդուռ իրենց մոր ձեռքը բռնած…

## XVI

Ալաշկերտից տասնուհինգ վերստ հեռու կա Խասթիր անունով մի գյուղ, բաղկացած 160 տներից, որոնց կեսը լուսավորչական է, մյուս կեսը կաթոլիկ:

Երբ մոտենում էինք այդ գյուղին, երկու վերստ մնացած ճանապարհը կորցրինք և մի քանի րոպե թափառում էինք աջ ու ձախ: Իսկապես ճանապարհներ կային մի քանիսը, բայց չգիտեինք որն ընտրել:

Դիմացի բլուրի վրա երևացին մի խումբ մարդիկ, հետո հանկարծ չքացան և ձյունի վրա մնացին ինչ-որ սև կետեր: Կազակ օֆիցերը ձին քշեց առաջ, ասելով.

— Պետք է իմանալ ովքեր են: Մենք հետևեցինք նրան հանգիստ: Երբ հասանք բլուրին, օֆիցերը ծիծաղում էր:

— Երևակայեցեք, քիչ էր մնացել, որ այդ հիմարները մեզ վրա կրակ բացեին,— ասաց նա, ցույց տալով մի խումբ զինվորների, որ, հրացանները կրծքներին սեղմած, դուրս էին գալիս խրամատի միջից:

— Ինչո՞ւ:

— Կարծում էինք քուրդեր եք,— պատասխանեց պահակի գլխավորը, հրացանի ոտը ցած բերելով:

— Ունեն իրավունք,— ասաց օֆիցերը,— մենք պետք է սպիտակ դրոշակ բարձրացնեինք: զգուշացնում եմ ձեզ, Դայարին մոտենալիս մի թաշկինակ կապեցեք ձեռնափայտի ծայրին և բարձրացրեք, այլապես ձեզ չեն ճանաչիլ և...

Եթե պահակը խրամատից կրակեր, անշուշտ առաջինը Հովսեփ Խունունցը պիտի գլորվեր: նա ամենից առաջ էր գնում՝ խոշոր նշանն էր իր վիթխարի փափախով: Նրանից հետո, իմ հաշվով, պիտի օդը ցնդվեր Հովհաննես Թումանյանի ականջավոր մաշկյա գդակը, որ նմանվում էր թևատարած ագռավի: Կկամենայի իմանալ այն ժամանակ ի՞նչ դեր պիտի խաղար նրա սոսկալի արկղը, որ այնպես դղրդում էր նրա կողքի վրա:

Գալով ինձ ես ապահով էի, վասնզի իմ իմաստուն երիվարը ինչպես սկզբից ևեթ վճռել էր, այնպես էլ արավ— մինչև վերջը մնաց ամենից ետ, չնայելով գավազանիս ու ոտքերիս կատաղի հարվածներին և թևերիս հուսահատական թափահարումին:

Ինչ վերաբերում է տեր-Նիկոլին, որ Խունունցի մրցակիցն էր, կարծում եմ, որ նա կարող էր միանգամայն հանգիստ լինել: Գոնե ինձ թվում էր, որ գնդակը նրա որ կողմին էլ դիպչեր, պիտի սահեր և ընկներ ձյունի վրա: Գնդակն ի՞նչ է ռումբի դեմ:

Մտանք Խասթիր մեր ձիերին հանգստություն ու կեր տալու և Դայարի մասին տեղեկություններ հարցնելու:

Զարմանալի բան: Ոչ ոք չգիտե, թե մի քանի քայլ հեռու ինչ է կատարվում այս երկրում: Նույնիսկ նրանք, որ պարտավոր են իմանալ:

— Մի զարմանաք, — ասաց կազակ գնդապետը, — ինձ համար ձեր հաղորդածներն էլ Դայարի մասին նորություն են:

Այցելեցինք կաթոլիկ և լուսավորչական եկեղեցիները Ժողովուրդ տեսնելու համար: Առաջինն այնքան ողորմելի դրության մեջ չտեսա, որքան երկրորդը:

Առհասարակ կաթոլիկ եկեղեցիների և նրանց համայնքների վիճակն այնքան թշվառ չէ այդ երկրում, որքան լուսավորչականների: Պատերազմից առաջ նրանք գտնվել են եվրոպական հյուրանոցների հովանավորության տակ: Այժմ է միայն, որ թուրքերն ու քուրդերը խտրություն չեն անում կաթոլիկի ու լուսավորչականի մեջ և երկուսին էլ հալածում են հավասար:

Ահա ինչու հալածանքները համեմատաբար քեզ սովր կաթոլիկի համար ներկա դրությունն ավելի է զգալի, քան լուսավորչականի համար: Եվ գուցե այդ է պատճառը, որ առաջինն ավելի լալկան է, քան երկրորդը, Ղարա-Քիլիսայում մի ինչ-որ կաթոլիկ քահանա ամուր բռնել էր Խորենի փեշերը և բաց չէր թողնում: Արտասուքը աչքերին ողբում էր, որ եկեղեցուց անհետացել է մի արծաթյա սկիհ և ընկել կազակների ձեռքը: Կազակները սկիհը ծախել են ութ ռուբլով մի հայի, և այժմ հայը չի ուզում սրբազան անոթը վերադարձնել եկեղեցուն առանց իր ութ ռուբլին ստանալու: Եվ կաթոլիկ հոգևորականը եպիսկոպոսի փեշերը բաց չթողեց, մինչև որ հայը գտնվեց, սկիհը մեր դրամով գնվեց և հանձնվեց լալկանին:

Մինչև մեր ձիերը կերակրվում էին, մեզ հրավիրեցին թեյի:

Տեղացիների խուռն բազմությունը լցվեց խրճիթն այնպես, որ օդի պակասությունից և անասելի կեղտի հոտից զգացի սրտխառնուց և գլխացավ:

Մարդիկ միմյանց հրում էին, բոթում արմունկներով, հայհոյում, բարձրանում իրարու ուսերի վրա, մեզ ավելի մոտիկից տեսնելու և մեզ ավելի պարզ լսելու համար: Իսկ մեր խոսքի տերն համարում էինք իրեն, Խորեն եպիսկոպոսին: Մի արտոնություն, որը նրանից խլելու ոչ մի ցանկություն չունեինք, մանավանդ ես:

Մի շարք շտապ հարց ու պատասխանից պարզվեց, որ Խասթիրի վիճակն այնքան թշվառ չէ, որքան մյուս հայ գյուղերի: Մուստաֆա աղա անունով քուրդ աշիլեի որդի Հասան աղան իր չորս եղբայրների հետ գյուղը պաշտպանել և ազատել է կոտորածից ու կողոպուտից:

Եկավ Հասան աղան իր եղբայրների հետ: Ողորմելի արարածներ— կատարյալ նման այն մուրացկան եզդիներին, որ թափառում են Կովկասում: Տպավորությունն այնքան խղճուկ է, որ ես ապշում եմ, թե ինչպես 160 տնից և յուրաքանչյուր տուն 25—35 հոգուց բաղկացած մի բազմություն չի ամաչել իր ճակատագիրը հանձնել այդ որդերին: Մեզ շրջապատող բազմության մեջ կային հսկաներ, որոնք իրենց հուժկու բազկով կարող էին հինգ եղբայրներին միասին խեղդել: Եվ այդ մարդիկ չէին քաշվում նույնիսկ մեր ներկայությամբ վիզները ծռած և ձեռքները ծոցը դրած շոյել ու շողոքորթել քուրդերին:

Հասան «աղան» և իր եղբայրները չունեցան բարերարողների տարրական վեհանձնությունը և պարծեցան ոչ ինչպես «աղաներ»: Երբ բարերարությունը բարերարվողի երեսին է տրվում, թքիր բարերարողի երեսին: Հասանն ու իր եղբայրներն ավելի առաջ գնացին: Նրանք չթաքցրին իրենց զղջումը: Պարզվեց, որ մարդիկ ինչ ինչ ակնկալություն են ունեցել և այժմ հուսախաբված են: Զինվորական իշխանությունը հաշվի չի առնում նրանց պաշտպանությունը:

Իսկ հայերը ի՞նչ կարող էին անել, ինչո՞վ վարձատրել քուրդ «ազնվականներին»: Նյութականով միայն, հարկավ: Այն ինչ նրանք իրենց ունեցածը տալիս էին ռուս զորքերին և տալիս էին ձրի. ու դեռ կողոպտվում էին:

Երբ ձի էի նստում, մոտեցան մի երիտասարդ և մի պատանի ձիուս ասպանդակը բռնելու:

Երիտասարդը լսելի ձայնով շշնջաց իմ անունը: Գիտեմ,— պատասխանեց պատանին:

— Ի՞նչ գիտես, սիրելիս,— հարցրի ես հետաքրքրված:

— Ձեր երկերը,— պատասխանեցին միասին երիտասարդն ու պատանին: — Կարդացել ենք ամենքս:

Այդ ինձ համար անսպասելի էր:

— Մի՞թե դուք գրագետ եք,— հարցրի ես:

— Մեր գյուղում ամենքը գրագետ են:

— Ամե՞նքը:

— Այո:

— Կանայք նո՞ւյնպես:

— Կանայք, ծերերը, մեր մեջ չկան անգրագետներ:

— Ուրեմն դպրո՞ց ունիք:

— Հարկավ: Այժմ փակ է պատերազմի պատճառով, բայց եղել է միշտ...

— Ո՞վ է պահում:

— Պոլսո Միացյալ Ընկերությունը:

Երբ մեր ընկերներից չգիտեմ որին հայտնեցի այս մասին, նա ասաց.

— Տեղական կոմենդանտն ինձ հավատացրեց, որ այդ գյուղում գրեթե ամենքը գիտեն ֆրանսերեն…

## XVII

Զեթկանումն ենք:

Չեմ կարող առանց սարսուռի հիշել այդ անունը: Այժմ նա գոյություն չունի: Իննսուն ընտանիքներից էր բաղկացած թշվառ գյուղն ու յուրաքանչյուր ընտանիք քսանից մինչև երեսուն հոգի:

Մնում են նրա ավերակները և, ով գիտե, գուցե և նրանց վրա ոռնող շները:

Եվ ե՞րբ կոտորեցին խեղճերին: Ընդամենը մի քանի օր անցած այն երջանիկ հույսերից, որ մենք ներշնչել էինք նրանց մեր ապաբախտ այցելությամբ:

Երեկոյան հինգ ժամն էր, երբ մտանք տրագիկական փոսի մեջ: Բնորոշ երևույթ: Մի ազգաբնակություն, որ շարունակ ենթարկված է նոմադների արշավանքներին, ինքն է իր ձեռքով ստեղծել հարմարությունը այդ արշավանքների համար: Չտեսա մի հայի գյուղ այդ երկրում, որ ունենար քրդական գյուղերի ընդհանուր դիրքը — բարձր լեռների վրա կամ անմատչելի ժայռերի մեջ: Բոլոր հայի գյուղերը տեղավորված են կամ տափարակների վրա, կամ ձորերում: Եվ այդ կողմից Զեթկանը, բլուրներով շրջապատված, մի գեղեցիկ նշանակ էր թշնամական հարձակումների համար:

Կանգ առանք գյուղի ծայրում մի քարաշեն ամայի տան առջև: Ասացին, որ ուսումնարանի շինությունն է: Դռները խորտակված էին, լուսամուտների ապակիները ջարդված:

Մի խումբ կանայք մերձակա աղբյուրից կժերով ջուր էին տանում իրենց ուսերի վրա: Խնդրեցինք նրանց կանչել գյուղական քահանային:

— Մեր գյուղը քահանա չունե,— ասացին նրանք,— կուզեք, վարդապետ մը կա:

— Կանչեցեք նրան:

Եկավ մի բարձրահասակ, նիհար մարդ, սև մորուքով, վաղաժամ մոխրագունված քունքերով, գիշերային խավարի պես մռայլ դեմքով:

Սեղմելով երկայն ոսկորոտ ձեռները կրծքին, նա գլուխ խոնարհեցրեց իր հոգևոր մեծավորի առջև, կանգ առավ և անիմաստ աչքերը հառեց նրա երեսին: Նրա հնամաշ ֆարաջայի տակից մեջքի լայն թիկունքները ցցվել էին ինչպես տաշեղներ:

— Հայր սուրբ, ռուսահայ հյուրեր ենք, տեղ կտա՞ք մեզ գիշերելու:

Հայր սուրբն ինչ-որ մրթմրթաց քթի տակ և, երեսը դարձնելով դեպի գյուղ, քայլեց ջայլամի քայլերով: Մենք հետևեցինք նրան: Իրիկնադեմի մթության մեջ, ձյունի կաթնագույն սավանի վրա այդ մարդն իր լռությամբ թվում էր մի հսկայական սև խաչվառ, որ թափորն առաջնորդում է դեպի մեռելների օթևանը:

Նա կանգ առավ գյուղի կենտրոնում մի օդայի առջև և նորից գլուխ խոնարհեցրեց, միշտ լուռ:

Այնտեղ խմբված էին մի քանի գյուղացիներ:

— Բարի գալուստ, — դիմավորեց մեզ մի ծերունի,— շնորհ ըրեք իմ հյուրերն ըլլալու: Հոգ չէ, որ ավերված եմ քրդերեն ու... Հոգ չէ Պողոս Մուրադյանին տանը ձեզի նման մեծարժեք հյուրերին համար բան չի պակսիր... Գալո, տար ձիեր գոմ, լավ կերակրե...

Եվ առաջնորդեց մեզ օդայի ներսը: Անցանք մի մութ անցք, որի հատակը ծածկված էր կեղտոտ հարդով, ապա երկրորդը և մտանք ծերունու կացարանը: Մի մութ սենյակ հողյա հատակով և ծխից սևացած առաստաղով: Աջ ու ձախ գտնվող գոմերից նա բաժանված էր կավյա ցածր միջնորմներով: Խորքում օջախի մեջ մխում է չորացած աթարը, միակ վառելիքն այդ երկրում: Ձյունի փափուկ քուլաները թափվում էին ներս առաստաղի մի մեծ ծակից, որ սենյակի միակ լուսատուն էր: Մեկը վազեց, բարձրացավ կտուրը և աթարը կափարիչը ձգեց լուսամուտի վրա: Մի ուրիշը ծուլորեն վառեց պատից քարշ արած թիթեղյա լամպարը, և սենյակը ավելի խավարեց:

Անմիջապես դռների առջև ժողովվեց գյուղացիների բազմությունը, որոնց թվում և մի երկու-երեք ծեր կանայք, բերանները ծածկած:

Սպասում էի, որ վարդապետը պատմե վերջին անցքերը: Բայց նա լուռ էր: Նստեց ծալապատիկ մի անկյունում և լռեց մինչև վերջը, անիմաստ աչքերը չհեռացնելով եպիսկոպոսի դեմքից:

Խոսում էր մեծ մասամբ Պողոս Մուրադյանը և խոսում էր ազատ, մաքուր արևմտյան դրական բարբառով: Հայտնվեց, որ այդ գյուղացին ոչ միայն գրագետ է, այլև ընթերցասեր: Ավելի քան քառասուն տարի է նա կարդում է Պոլսո լրագիրները:

— Կցավիմ, որ «Բյուզանդիոն» չի գար: Փոստային հաղորդակցություն Պոլսո հետ խափանած է: Մասնավոր լուրեր ալ չունինք: Սակայն գիտեմ Վիլհելմին ըրածը: Այն եղավ հեղինակ այս սոսկալի պատերազմին: Աշխարհ հրդեհեց իր փառքին համար: Շատ պիտի զղջա: Ձեր կողմերեն եկած կամավորները կսեն էնվեր խելքը կորսնցուց: Սուլթան ալ չկրցավ դիմադրել Ապուշ մըն է: Համիդ դիպլոմասի գիտեր: Խորամանկ այ էր: Իթթիհատ չկրցավ փրկել Թուրքիա: Պիտի կործանվե մեզի ըրած չարիքներուն մեղքով... ճշմարիտ կսեն:

Ապա ծերունին պատմեց վերջին անցքերը: Երրորդ ռուս-թուրքական պատերազմի աղետն էր տեսնում նա: Ներկայինն էր նա համարում ամենաաղետավորը: Առաջ էլ կողոպտում էին, կոտորում, բռնաբարում, բայց առաջվա թուրքի ախորժակը չափ ուներ և քուրդի դաժանությունը սահման: Թուրքը այլասերվել է: Նա ոչ առաջվա պես քաջ է և ոչ բարի: Իսկ քուրդը լրբացավ այն օրից, երբ Սուլթան-Համիդը նրան դարձրեց քաղաքական զենք, կաշառելով ցեղապետներին: Սակայն հայը դարձյալ կկարողանար նրա հետ հաշտ ապրել, եթե չլինեին արյունռուշտ աշայիրները և մոլեռանդ շեյխերը:

— Ճիշտ է, որ քուրդը քաջ է,— հարցրի ես ծերունու կարծիքն իմանալու համար:

Նա հեգնորեն ժպտաց:

— Քա՛ջ,— գոչեց ծերունին, ընդունելով իմ առաջարկած ծխախոտը,— անոր քաջությունը անզեններուն, կանանց ու ծծկեր մանուկներուն համար է: Թող ռուս տա ինձ քառասուն հրացանակիր կազակներ, քանի՛ մը օրեն ամբողջ Ալաշկերտի շրջան կմաքրեմ քրդերեն:

Ես չվիճեցի ծերունու հետ: Գուցե նրա ասածը սնոտի պարծենկոտություն չէր, գուցե նա քառասուն հրացաններով քրդերի հազարավոր խմբերը կվաներ, բայց մի բանում ես ճիշտ, խորապես համոզված էի, որ մյուս օրն ևեթ նա հրացանները կշպրտեր դեն արհամարհանքով: Որքան կարողացել եմ դիտել, հայն առհասարակ զենք չի սիրում: Նրա հոգեբանությունը հաշտվում է սրի հետ միայն բացառիկ դեպքերում, երբ հարկադրված է: Չկան այդ դեպքերը, չկա և զենք:

Ապացույց Կովկասյան հայ-թրքական ընդհարումների նախօրյակն և հաջորդ օրը...

Խոսվեց Զեթկանի մասին: Հայտնվեց, որ այդ, արտաքուստ այնքան խղճուկ, դյուզն ամենահարուստն է Ալաշկերտի շրջանում: Հարուստ մանավանդ վարելահողով: Յուրքանչյուր տուն ունի առնվազն 300 դեսյատին: Կան այնպիսի ընտանիքներ, որ ունեն 5—6 մինչև 7—8 հարյուր և ավելի:

Ծերունի Պողոսն իր հինգ որդիների հետ 1000 դեսյատին Աքի՛ տանի հողի տեր է: Բացի երկրագործությունից, գյուղը պարապում է և խաշնարածությամբ: Ներկայումս գյուղում ապրանք չի մնացել: Քուրդերը բոլորը քշել են լեռն. ռուսների գալուց մի քանի օր առաջ միայն Պողոս Մուրադյանից նրանք խլել են 100 գլուխ եզներ ու կովեր և 400 ոչխար:

— Էհ,— ավելացրեց ծերունին,— հոգ չէ: Թող պատերազմ դադարե, երկիր խաղաղվե, իմ զավակներ նորեն կվաստակեն: Անոնց կյանքի ապահովությունն է, որ զիս մտահոգություն կպատճառե: Ըսեք, սրբազան, ռուս երկու անգամ մեր երկիր գրավեց ու ձգեց, գնաց. նորե՞ն պիտի ձգե:

Պատասխանն եղավ նույնը, ինչ որ ամենուրեք, անհամության հասած թութակի երգ:

— Դարեր եք համբերել, համբերեցեք մի փոքր էլ, ազատությունը հեռու չէ...

Ծերունու ձեռները դողացին ուրախ հուզմունքից: Նա գոչեց:

— Ահ, կաղաչեմ աստծուն: Այն ատեն կմոռնանք բոլոր աղետներ…

— Հարկավ, հարկավ,— ձայնակցեցին մյուս գյուղացիները ուրախությունից իրարու բոթելով:

Մի պառավ կին, որ կուչ էր եկել դռների մոտ, ծանր հառաչեց և ջլուտ ձեռքերը բարձրացրեց վեր:

Մի ութ տարեկան մանուկ, որ կպած էր նրա փեշերից, վազեց դուրս, երևի, ուրախ լուրը մյուս կանանց հայտնելու:

Նույնիսկ լուռ ու մռայլ վարդապետն իր ոսկրոտ կոկորդից արձակեց ուրախության հնչյունի պես մի բան և փոխեց իր երկայն ծնկների անշարժ դիրքը:

Մարդիկ ցրվեցին ապագա դրախտի հույսերով ներշնչված:

Իմ հուշատետրում այդ օրվա համար կարդում եմ: «Ուշ գիշեր է: Ընկերներս քնած են: Երանի նրանց: Մի ծանր նախազգուշացում պաշարել է ինձ և քունս փախցրել: Լսվում է շների միապաղաղ ոռնոցը գիշերային լռության մեջ: Ի՞նչ են գուշակում նրանք: Զգում են ինչ-որ անբացատրելի սարսափ: Թվում է ինձ, որ մենք փակված ենք գերեզմանատան մեջ: Այդ թշվառները, որ ցրվեցին, թողին իրենց հետևում դիակների հոտ»…

## XVIII

Առավոտյան տեղական կոմենդանտը մեզ հայտնեց, որ գեներալ Ա..վից երկու նամակ է ստացել մեր վերաբերմամբ: Մեկով գեներալը խորհուրդ է տալիս մեզ գնալ Դայար կազակների հետ, մյուսով, հաղորդելով, որ Դայարն ընկել է քուրդերի ձեռքը, զգուշացնում է մեզ և առաջարկում սպասեք տրանսպորտին կամ վերադառնալ Ղարա-Քիլիսա:

Եպիսկոպոսն ազդարարեց, թե նա չի կարող սպասել տրանսպորտին և իսկույն և եթ պիտի արշավե «այդ Դայար կոչված անիծյալ վայրը, թեկուզ ամբողջ Քուրդստանը նրա դեմ դուրս գա»:

Խունունցը, որ ինքնագլուխ իրան շտաբի գլխավոր էր հռչակել, բաց արավ քարտեզը, մատը դրեց նրա վրա, փափախը սեղմեց գլխին և հանդիսավոր արտասանեց.

— Պետք է գնալ:

Ես ասացի.

— Ոչ չպետք է գնալ:

Սմբատ Խաչատրյանցը, որ զբաղված էր իր ցուրտը տարած ոտին տաք մոխիր փաթաթելով, ասաց.

— Իհարկե, չպիտի գնալ:

Հովհաննես Թումանյանը գերադասեց բազմախորհուրդ լռությունը (միակ ձեռնտվությունը այդպիսի վեճերում), բայց և այնպես սոսկալի արկղը նորից քարշ արավ կողին:

Տեր-Նիկոլը բացակա էր: Վարդապետը նրան տարել էր չգիտեմ ուր գաթա ուտելու:

Եվ այսպես, ոչ մի կողմը ձայների մեծամասնություն չստացավ:

Այն ժամանակ Հովհաննես Թումանյանը, ըստ սովորության քորեց իր երկայն վիզը և այնտեղից դուրս բերեց մի շատ սրամիտ անեկդոտ, որ դժբախտաբար, մոռացել եմ:

Կազակները գնացին Դայար առանց մեզ:

— Պարոններ,— ասացի ես,— ես գուշակում եմ, որ նրանք Դայարում կենթարկվեն քուրդերի հարձակմանը:

— Տեսնե՞նք:

Օրն անցկացրինք ձանձրալի, տխուր, ետ ու առաջ պտտվելով աղբով ու շներով լի Ձեթկանում և լսելով գյուղացիների գանգատները:

Եկավ մի աղքատ կին և պատմեց, որ դրացին իրեն խաբել է: Կամավորներից մեկը, գյուղով անցնելիս, նրան նվիրել էր մի ձի: Կինը ամեն օր ջրաղաց ցորեն էր տանում այդ ձիով և վաստակում իր յոթ զավակների պարենը: Դրացին առաջարկում է նրան ձին ծախել իրեն: Կինը համաձայնվում է և փոխարենը ստանում երեք ռուբլի, չհասկանալով ռուսական դրամի արժեքը:

— Հիմա կսեն, որ երեք ռուբլին քառասուն ղռուշ ալ չըներ:

Գյուղացին գտնվեց, բայց չկամեցավ ձին վերադարձնել: Եպիսկոպոսը մեր դեմ պատրաստած թույնը թափեց նրա գլխին, գոռաց և, երեք ռուբլի շպրտելով, հրամայեց իսկույն ևեթ ձին վերադարձնել: Մեզ ուղեկցող կամավորներից մեկը բռնեց գյուղացու օձիքից, քաշեց դուրս եպիսկոպոսի հրամանը կատարելու:

Ճաշից հետո Հովհաննես Թումանյանն իր համար զբաղմունք գտավ: Կանչել տվեց երկու հեքիաթախոս գյուղացիների և պատվիրեց, որ պատմեն «Հազարան Բյուլբյուլը»:

Հիշեցի մանկությունս, պառավ տատիս և նիրհս եկավ:

Երկար, երկար ժամանակ կիսաքուն և կիսարթուն լսում էի:

«Անկե ետո, էֆենդիմ, ելավ, գացավ» և այլն…

Հետևյալ առավոտ հայտնվեց, որ երեկ կազակների բազեզդը Դայար չի կարողացել մտնել: Հանդիպել է քուրդերի ահագին բազմության և կրակի ենթարկվելով… նահանջել է:

— Տեսա՛ք, պարոններ,— ասացի ես ոչ առանց չարախնդության, եթե գնացած լինեինք, մեր ձիերը մեզ չէին փրկիլ:

Կամ պիտի ընկնեինք քուրդերի ձեռքը, կամ գիշերեինք բաց երկնքի տակ որևէ կիրճում, սառնամանիքի մեջ:

— Դաա՛,— արտասանեց եպիսկոպոսը:

— Դաա՛,— ավելի երկարացրեց Խունունցը և քարտեզը բաց արավ և խորասուզվեց նրա մեջ:

Քիչ անցած՝ նա ասաց.

— Պարոններ, այժմ միայն մի ճանապարհ է մնում՝ Դելի-Քեոյ:

— Գնում ենք,— գոչեց քաջարի հոգևորականը:

— Եթե միայն ճանապարհը բաց է,— ասացի ես, որ արդեն մտել էի հաղթողի դերի մեջ:

— Էէէ՛, էլի սկսեց,— տրտնջաց Խունունցը: — Ես այս րոպեիս կգնամ կոմենդանտի մոտ և կխնդրեմ, որ մեզ կազակներ տա:

— Անպատճառ,— պնդեց եպիսկոպոսը:

Խունունցը գնաց: Շատ չանցած ետ եկավ քիթը քաշ:

Դելի-Քեոյն էլ պաշարված էր քուրդերով:

— Մնացինք փոսի մեջ,— ասաց եպիսկոպոսը, ընկղմվելով փափուկ բարձերի մեջ:

— Մնացինք փոսի մեջ,— կրկնեց Խունունցը և քարտեզը ծալեց, դրեց ճամփարկղի մեջ և այդ օրից այլևս դուրս չբերեց այնտեղից:

Միակ ելքը վերադարձն էր: Այն, ինչ որ պետք է անեինք և կանեինք հինգ օր առաջ, եթե չլինեին Խունունցի քարտեզը և եպիսկոպոսի «գնում եմ»-ը:

Որոշվեց Մոսունի բարձունքներով վերադառնալ սահմանագլուխ և Սարիղամիշի վրայով գնալ աջ ֆրոնտը:

Երբ մենք դուրս էինք գալիս Զեթկանից, գյուղի ծայրում հանդիպեցինք մի խումբ անզեն քուրդերի: Եկել էին մեզ խնդրելու, որ թույլ տանք իրենց մեզ հետ մինչև Չիլկան ցնալու: Նրանք ճանապարհին վախենում էին հայերից ու կազակներից:

— Տեսնո՞ւմ եք այն կարմիր բաճկոնավորին, որ ահեն ու ցրտեն կդողա,— ասաց Պողոս Մուրադյանի որդիներից մեկը:— Պատերազմեն քանի մը օր առաջ եկավ իր զինված խմբին հետ և մեզ հրամայեց ոչխար մորթել ու փլավ պատրաստել: Ես էի, որ ծառայում էի անոր՝ ձեռներս կրծքիս դրած որպես ռայա:

— Այժմ հերթը ձերն է,— ասաց մեզնից մեկը, չեմ հիշում ով:

Ավա՜ղ, այդպես չեղավ: Քուրդը դեռ չէր վերջացրել իր դերը: Ճակատագիրը Զեթկանի և նրա հարևան Մոլլա-Սուլեյման նույնպես հայաբնակ գյուղի համար պատրաստել էր հարվածներից ամենասոսկալին:

Հազիվ մեր այցելությունից մի շաբաթ անցած էր, երբ ռուս զորքը հրաման ստացավ ձգել Ալաշկերտի հովիտը և նահանջել դեպի սահմանագլուխ:

Ահաբեկված հայ ազգաբնակությունը թողեց ամեն ինչ և շտապեց իր կյանքը միայն ազատելու, հետևելով ռուս զորքին: Սկսվեց մի գաղթականություն, որի նմանը Շահ-Աբասի օրերն էին միայն տեսել:

Զեթկանն ու Մոլլա-Սուլեյմանը, ընկած լինելով Ալաշկերտի խորքում, չկարողացան միանալ գաղթականների հոսանքին և կործանվեցին:

Ահա ինչպես է նկարագրում մի ականատես միայն Մոլլա-Սուլեյմանի պատկերը, երբ ռուս զորքերը նորից գրավում են հովիտը:

«Առաջին օրը մեր կազակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին տասնևյոթ ծերերի, տասնուինը կանանց և քսանուհինգ երեխաների դիակներ: Եվ ի՜նչ դրության մեջ, աստված իմ: Անարգված, հոշոտված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ ոտքեր ու ձեռներ: Այստեղ կանանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բազուկները կտրտած, երևի, մայրերի փեշերից պոկելու համար:

Եվ պետք է տեսնենք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թևերով: Մարդիկ, որոնց զգացումները բովվել էին արյան և կրակի մեջ, փափկել էին ինչպես երեխաներ:

Ինչ վերաբերում է ինձ, չկարողացա կթել տեսարանի կսկիծը և հեռացա:

Զեթկան չկարողացա մտնել: Արդեն տեսածս բավական էր, որպեսզի հավիտյան չմոռանամ: Բայց ընկերս պատմեց, որ նույնն է եղել և այնտեղ»...

Այժմ ես զգում եմ խղճի սուր խայթոց, երբ մտաբերում եմ այն սնոտի հույսերը, որ մենք ներշնչեցինք այդ թշվառներին մեր այցելությամբ և մեր քիչ մտածված խոսքերով.

«Դարեր եք համբերել, համբերեք մի փոքր էլ, ազատությունը հեռու չէ…

Այո, նա հեռու չէ,— ազատությունը կյանքի անիրավություններից…

## XIX

Հազիվ Զեթկանից մի քանի վերստ հեռացել էինք, երբ հանդիպեցինք մի խումբ ձիավորների:

Արմեն Գարոն էր, մեր կամավորների երկրորդ խմբի պետը իր մի քանի ընկերների հետ, որոնցից մեկը քահանա էր:

Թուրքահայ հեղափոխականների մեջ Արմեն Գարոն է, որ ինձ վրա թողել է լավագույն տպավորությունը և ինձ համար հաճելի էր այդ ամայի անապատում հանդիպել մի քաղաքակիրթ եվրոպացու ու մի-երկու ժամ վայելել նրա ընկերությունը:

— Ի՞նչպես են տղերքը:

— Շատ լավ,— պատասխանեց Գարոն ուրախ-զվարթ:

— Կնշանակե գործերն հաջող են ընթանում:

— Անպայման: Մի քանի օր առաջ ունեցանք մի նոր ընդհարում քուրդերի հետ: Մաքուր գործ էր: Ցավում եմ, որ չեկաք տեսնելու:

Ես նկատեցի, որ անսովոր պատերազմական կյանքը բավական քայքայել է մարդու երկաթյա կազմվածքը:

— Չե՞ք հոգնել, Գարո,— Հարցրի ես, նայելով նրա նիհարած և խորշերով ծածկված երեսին և արդեն մոխրագունած մազերին:

— Պիտի գամ Թիֆլիս մի քանի օր հանգստանալու:

— Հետո՞:

— Հետո, իհարկե, դարձյալ դեպի գործ:

— Լա՞վ են կռվում տղերքը:

— Ոմանք լավ, ոմանք անփորձ, ընդհանրապես անձնվեր, — պատասխանեց Գարոն, ըստ սովորության, խույս տալով չափազանցություններից:

Եվ մի քանի վայրկյան լռելուց հետո, շոյեց իր նժույգի բաշն ու ավելացրեց.

— Պայմանները շատ դաժան են:

— Բայց կարողանո՞ւմ են ընտելանալ:

— Ինչո՞ւ չէ, միայն ռուսահայերն ավելի դժվարությամբ, քան թուրքահայերը:

— Ինչի՞ն եք վերագրում այդ:

— Կենցաղների տարբերությանը: Թուրքահայի կյանքն ավելի դաժ-ան է եղել, քան ռուսահայինը: Բացի դրանից, նա ավելի է ծանոթ երկրի պայմաններին:

— Հա՞շտ են վարվում իրարու հետ:

— Այո, թեև երբեմն իրարու խայթում են: Բայց դիսցիպլինա ճանաչում են և ենթարկվում:

— Ի՞նչ կասեք քրդերի մասին:

— Դաժան են, բայց ոչ քաջ:

— Եվ դիմացկուն,— ավելացրի ես և ցույց տալով այն մի խումբ քրդերին, որ գնում էին մեր առջև և մեր հովանավորության տակ, շարունակեցի.— տեսնում եք ինչպես են քայլում այդ նոմադները: Մի արշին ձյուն, իսկ իրենք կիսամերկ, կիսաբոբիկ: Ահա դրա մեջ է քուրդի առավելությունը:

— Այդ ճիշտ է,— պատասխանեց Գարոն:

Արդարև, մի առավելություն, որ ռուս զորավարները չէին նախատեսել իրենց ասելով: Ասիական Թուրքիայում պատերազմի կեսը բնության դեմ է: Եվ ոչ ոք չի կարող նրա արհավիրքներին դիմանալ այնպես, որպես քուրդը: Դաշտերի ձյունը, լեռների բուքն ու բորանը, ժայռերի սուր բարձունքները, կիրճերի խորդուբորդերը, սրանք են քուրդի մայրենի տարերքը: Նրա համար ոչինչ է և՛ քաղցը, և՛ մերկությունը, և՛ խոնջությունը, երբ հարկավոր է կռվել բնության դեմ:

— Իսկ ի՞նչ կասեք թուրք զինվորի մասին,— հարցրի ես:

— Թուրքը,— պատասխանեց Գարոն, ըստ սովորության կանխապես խորհելով,— նա այլ բան է: Թուրքը զինվոր է և գիտե կռվել: Հրացանաձգության մեջ կան վիրտուոզներ, որոնք կարող են մարդու ականջը թռցնել առանց գլխին վնասելու: Մի բանից է թուրքը վախենում— սրամարտից: Այստեղ արդեն առաջնության դափնին ռուս կազակին է պատկանում, ինչպես և սուսերամարտերի մեջ ռուս հետևակ զինվորին:

Ինչպես տեսնում եք, հայ խմբագետի կարծիքը թուրքերի և քուրդի մասին գրեթե ոչնչով չի տարբերվում ռուս զինվորականների կարծիքից:

Մի ժամ հանգստանալով Խասկեր և Չիլկան գյուղերում, անցանք Ղարա-Քիլիսա, ամբողջ հինգ օր զուր կորցնելուց հետո: Այնտեղ հանդիպեցինք մի խումբ հայ ուսանողների, որ եկել էին կամավորների երկրորդ խմբին միանալու:

Փորձեցինք համոզել նրանց, որ կռվի դաշտը գնալու փոխարեն մի-մի հոգի մնան հայ գյուղերում և վարեն թարգմանի ու քաղաքացիական միջնորդի պաշտոն ռուս զորաբանակի և տեղական հայ ազգաբնակության հարաբերությունների մեջ:

Նրանք դրականապես մերժեցին:

Գիշերեցինք Ղարա-Քլիսայում:

Առավոտյան, երբ պատրաստվում էինք ճանապարհ ընկնելու, Հովհաննես Թումանյանը վերջին անգամ ասպարեզ հանեց իր սոսկալի զենքը:

— Օհո, —գոչեց Գարոն, ապշելով բանաստեղծի ռազմական կերպարանքից,— այդ ի՞նչ թաբաղա է: Հովհաննես Թումանյանը ձեռը զարկեց թաբաղին և ասաց.

— Եթե իմանայիր ինչ կա սրա մեջ, կճանաչեիր ով եմ ես:

— Գիտեմ,— ժպտաց Գարոն մեղմիկ,— մաուզեր է: Տուր ինձ, նա քեզ համար ավելորդ բեռ է:

— Խլիր ձեռքից, ի սեր աստծո,— ասացի ես,— հոգիներս հանեց ամբողջ ճանապարհը իր թախկաթխկով:

Բայց…— փորձեց պաշտպանվել բանաստեղծը:

Բայց-մայց չկա, բաց արա գոտիդ:

Թումանյանը դես նայեց, օգնություն չգտավ, դեն նայեց նույնպես թևերը թափահարեց օդի մեջ, մի անգամ էլ փորձեց մեզ խաբել Լոռվա անեկդոտներով— չեղավ: Գարոն նրան փառավորապես զինաթափ արավ:

— Վերջապես,— արտասանեց Սմբատ Խաչատրյանցը, ցուրտը տարած ոտին փաթաթելով թվով տասնմեկերորդ դեղը (կարծեմ այս անգամ սագի ճարպ):

Թաշլի Չայում նորից տեսանք փոքրահասակ Բադոյի Հուդա ուրբաթ կերպարանքը և գիշերեցինք մորթասծ և փետրած հավ բերող օֆիցերի սենյակում:

Այս անգամ Բադոն մեզ հայտնեց, որ քուրդերն իրեն պարտական են... 40000 ռուբլի և հարցրեց, արդյոք Ռուսիան, երկիրը տիրելուց հետո, հանձն կառնի՞ երաշխավորել նրա ստանալիքը: Խաչատրյանց և Խունունց իրավաբանները միջազգային օրենսդրության կողմից հանդիսավոր ապահովեցին Բադոյի ստանալիքը:

— Տեսնո՞ւմ եք էդ լածիրակին,— գոչեց տեր-Նիկոլը, ձեռը ձեռին զարկելով,— հազարներ է ունեցել, ու ես չեմ իմացի…

Մյուս օրը նորից անցանք Դիադին և նորից հանդեպիցինք մեդալակիր ստարշինային, նախկին Մելքոն էֆենդուն: Մարդը եկավ իբր թե մեզ օգնելու, խանգարեց: Տեր-Նիկոլը մի ռուբլի տվեց նրան, որ հաց ու պանիր գնե մեզ համար, գնաց կորավ…

Մեր ձիերը հոգնել էին, իսկ իմ յաբուն միանգամայն ուժասպառ էր եղել և, կազակների ասելով, մոտ էր վերջին շունչը փչելուն: Միևնույն ժամանակ սաստիկ ցավ էի զգում ոտիս մեջ: Առաջարկեցի Խորեն եպիսկոպոսին գիշերել Դիադինում, որպեսզի հանգստանանք և ստիպված չլինենք գիշերով ճամփորդել:

— Չեմ ուզում,— ասաց քրիստոսի խոնարհ պաշտոնյան, նայելով հեռավոր հորիզոնին, որ չգիտեմ ինչեր էր տեսնում նա…

Եվ անմիջապես նստեց իր առողջ, ամուր երիվարի վրա, որ կարծեմ թվով երրորդն էր, որ գնվել էր նորին սրբազանության համար:

Ես լռեցի և, սոսկալի ցավից ատամներս կրճտելով, նստեցի բեռնակիր ձիերից մեկը, իմ ձին տալով կամավորներից մեկին:

Ոչ մի բանում մարդկանց բնույթն այնպես շուտ և այնպես ճիշտ չի որոշվում, որպես թղթախաղի և ճամփորդության մեջ: Թե՛ այնտեղ և թե՛ այստեղ պահանջվում է փոխադարձ զիջողություն: Նա, որ թղթախաղի մեջ ռեմիզ չի դնում, կարող է, իհարկե, մի անգամ տածել, բայց երկրորդ անգամ նրա հետ չեն խաղում, իրենց բարեկամներին էլ զգուշացնում են չխաղալու...

## XX

Ա.—ոս գյուղում, որի բնակիչները Թուրքիայի հպատակություն ընդունած կովկասյան թուրք գաղթականներն էին, պատահեց մի անախորժ դեպք, որ մեզ վրա թողեց շատ ծանր տպավորություն: Մեզ ուղեկցող կամավորներից մեկը, այն ժամանակ, երբ մենք գյուղից անցել էինք, այնտեղ վեճի է բռնվում մի խումբ թուրքերի հետ և նրանցից երկուսին սպանում է ու մեկին ծանր վիրավորում:

Երկար ժամանակ մարդասպանը չէր համարձակվում երևալ մեզ: Երբ, վերջապես, մոտեցավ, նրա փոքրիկ խոր ընկած աչքերը տակավին լի էին արյունով և հաստ բեղերի տակ կապտած շրթունքները դողում էին:

— Ի՞նչպես հանդգնեցիր այդ անել,— գոչեցի ես մինչև հոգուս խորքը վրդովված:

— Եթե չանեի, իրենք պիտի սպանեին ինձ:

Դիադինի վերելքը բարձրանալով, իջանք մի ձոր, ուր մեզ առաջնորդող դազորը այլևս չերևաց: Մենք կորցրեցինք նրանց ձիերի հետքը ձյունների մեջ, որոնց բարձրությունը հասնում էր մինչև ասպանդակները մեր ձիերի:

Երկար ժամանակ գնում էինք մոլորության մեջ, Հանի միապաղաղ ճերմակությունը թաքցրել էր երկրի խորշերը: Թվում էր, որ մեր առջև տարածված է հարթ-հավասար մի անապատ, անվերջ, անեզր, որպես օվկիանոս: Այն ինչ՝ շարունակ իջնում ենք փոսերի մեջ և բարձրանում բլուրների վրա, որպես ալիքների հաճույքին ձգված նավակների քարավան:

Մեր խումբն այս անգամ բաղկացած էր ավելի քան հիսուն ձիավորներից: Երկու երրորդականը կազակներ էին: Գնում էինք իրարու հետևից, ինչպես կռունկների երամ, քայլ առ քայլ, աշխատելով չխոտորվել ձիերի ոտքերի հետքից, որ ամեն վայրկյան ծածկվում էր բուքիդ հալածվող ձյունի փոշիով: Թվում էր, որ ճերմակ տարածության վրա դալարվում է մի վիթխարի սև վիշապ, գլուխը ծռելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ և պոչը շարժելով բլուրների վրա:

Մարդկային հետքի և ոչ մի նշույլ: Ո՛չ մի գյուղ, ոչ մի ավերակ ավեր երկրում, ո՛չ մի ծառ կամ մացառ: Միայն հեռու նշմարվում էին անմատչելի ժայռերի պղնձագույն լանջերը, որոնց ուղղահայաց թեքվածքի վրա ձյունը ապաստան չէր կարողացել գտնել:

Դուրս եկանք մի բարձրավանդակ, ուր ձյունը թեև նոսր էր, բայց սառած, քարացած:

— Այժմ ճանաչեցի այս անիծյալ տեղերը,— ասաց մեզ առաջնորդող երկու օֆիցերներից մեկը:— Ձյունը ամեն ինչ ծածկել է: Ահա այն ձորում մենք ընդհարվեցինք թուրքերի և քուրդերի հետ:

— Մե՞ծ կռիվ էր:

— Ոչինչ, միջակ,— պատասխանեց օֆիցերը ռուսին հատուկ անփութությամբ,— բայց բավական զբաղեցրեց մեզ: Գիտե՞ք, հարկավոր է շտապել, ապա թե ոչ օրն արդեն անցել է,— ավելացրեց նա և ձին մտրակեց:

Ես հետևեցի նրան որքան թույլ էին տալիս ձիուս ուժը և ոտիս ցավը:

Նորից իջանք մի ձոր, նորից բարձրացանք:

Երկինքը պարզվեց, և մեր առջև բացվեց Արարատը, այս անգամ մի ուրիշ կողմից: Իրիկնադեմի արեգակի ճառագայթները նրա հսկա կրծքի վրա ձգել էին գույների մի քմահաճ հյուսվածք: Քանի ճառագայթները մարում էին, այնքան հյուսվածքը նրբանում էր: Շուտով նա չքացավ, և մնաց մի թեթև ոսկեգույն պսակ Արարատի գագաթին: Չքացավ այն էլ, և մնաց բիբլիական հսկայի կաթնագույն սիլուետը դժգույն հորիզոնի վրա:

Չհավատաք, եթե բանաստեղծները ձեզ ասեն, թե գեղեցկությունը կարող է մոռանալ տալ ամեն բան: Համենայն դեպս նա անզոր է քաղցի և մանավանդ մարմնավոր ցավի դեմ: Այն պահին, երբ երկինք ու երկիր պարզել էին մեկն իրենց բյուրավոր հրաշալիքներից, ես ուժասպառ ձիուս վրա գալարվում էի ոտիս սոսկալի ցավից և անիծում բնությունը, որ ոչնչով մեղսակից չէր մի եպիսկոպոսի անզգայությանը, մտանք պղնձագույն ժայռերի ցանցերի մեջ, և ես հիշեցի մանկության օրերի Պղնձե Հազարը: Երկար ժամանակ պտտում էինք ոլորապտույտ անցքերի մեջ: Երբ վերջապես դուրս եկանք ցանցի միջից, իջանք մի նոր ձոր, և այդտեղից սկսվեց Մոսունի զառիվարը: Մեր հոգնած ձիերը գերբնական ճիգեր էին անում հաղթելու գրեթե ուղղահայաց թեքվածքը լեռան, որի մի կողմը խորը ձոր էր: Թվում էր, որ բավական էր նրանց կողմից մի անզգույշ քայլ, և մենք կգտնենք մեր հավիտենական օթևանը խավար անդունդների մեջ:

Մութն արդեն սկսվել էր, երբ բարձրացանք զառիվարի գլուխը: Այժմ պիտի իջնենք: Իմ ողորմելի ձին հազիվհազ քայլում էր, ով գիտե, ինչպես անիծելով ինձ, որ մեղավոր չէի բնավ:

Ես այլևս գրեթե ոչինչ չէի տեսնում, բացի մեր քարավանի սև գծից, որ քարշ էր ընկել ուղղահայաց կաթնագույն զառիվերի վրա, ինչպես պարանը պատի վրա: Նկատեցի, որ իմ առջև գնացողները ձիերից իջան: Կնշանակե, վտանգավոր է ձիով գնալը:

— Խորհուրդ եմ տալիս չիջնել, ես էլ չեմ իջնելու,— ասաց իմ առջև գնացող օֆիցերը:

Բայց շատ չանցած նա ավելացրեց.

— Անհնարին է, ձիերը չեն կարող մեզ պահել, պետք է իջնել:

Հարկավոր էր բավական ժամանակ սպասել անշարժ, որպեսզի ոտիս ջիլերը ուղղվեն, և ես կարողանամ ձիուց իջնել: Բայց հենց որ իջա, թաղիքյա կոշիկներիս սրոցի պես հղկված ներբանները սլկվեցին, և ես, ձիու սանձը բաց թողնելով, ընկա մեջքիս վրա: Ձյունը ծածկված էր սառույցի թաղանթով, ուստի սահեցի բնական սահնակի վրա և թվաց ինձ, որ պիտի սահեմ մինչև ձորի խորքը: Բայց հանդիպեցի քարերի, որոնք պահեցին ինձ: Կանգնեցի ոտքի, նորից ընկա: Դժբախտաբար, Դիադինում ձեռափայտս փոխարինել էի մտրակով, որի կարճ կոթը չէր կարող ծառայել ինձ իբրև հենարան: Նորից ընկա, նորից պահեցի, այս անգամ փորիս վրա, դարձյալ քարերը բռնեցին ինձ: Եվ այսպես գուցե երեսուն անգամ: Երևակայում եմ ինչ կոմիկական պատկեր կներկայացնեի, եթե մեկն այդ ժամանակ դուրս բերած լիներ իմ լուսանկարը և ցույց տար սինեմատոգրաֆում:

Նայում էի առջևս ձգված պարանին և անհամբեր հետևում, երբ պիտի նա փոխե իր ուղղահայաց դիրքը: Բայց այդ գիծը շարունակ թեքված էր գլխիվար:

Ահ, վերջապես, նա ուղղվեց: Կնշանակե մենք արդեն ձորումն ենք:

Մթության մեջ չգիտեի ինչ դրության մեջ են իմ ընկերները: Բայց զգում էի, որ նրանք էլ ինձ նման անիծում են այդ օրվա դանքիշոտյան ճամփորդությանը, որ որքան երեխայական ու ծաղրելի էր, նույնքան և վտանգավոր:

Այժմ կարելի էր ձի նստել, դժբախտաբար նստեցին: Երկիրը սառած էր ու քարքարոտ: Ուժասպառ կենդանին, հազիվ մի հիսուն քայլ արած, ընկավ գլխի վրա և ինձ էլ գցեց: Աջ ոտս, որ առանց այդ էլ երջանիկ վիճակում չէր, մնաց ձիու տակ: Բարեբախտաբար անբան կենդանին շուտով ոտքի կանգնեց, այսպիսով ցույց տալով ավելի ջենտլմենություն, քան բանավոր կենդանիները:

Երբ Մոտուն հասանք, տեր-Նիկոլն ասաց.

— Լավ էր, ձիս ընկավ և մեջքը կոտրեց:

Եպիսկոպոսը ծիծաղեց: Նա սիրում էր ծիծաղել:

Նույն գիշեր տեր-Նիկոլի ձին սատկեց…

## XXI

Մոսուն զուտ հայաբնակ գյուղ է. նրա ճակատագիրը նույնն էր, ինչ-որ մյուս բոլոր հայ գյուղերինը: Կողոպուտ, սպանություններ, բռնաբարումներ, իսկ այժմ միմիայն կողոպուտ, այս անգամ, հարկավ, ոչ քուրդերի կողմից…

Ուշ գիշեր է, անքուն եմ: Դարձյալ շների հարատև, միապաղաղ ոռնոցը սկսվեց: Ասում են ամբողջ երկրում զգայուն չորքոտանիների այդ չարագուշակ ողբը սկսվել է պատերազմից մի քանի օր առաջ է մինչև այժմ շարունակվում է ամեն գիշեր:

Մի միտք համառությամբ ինձ հալածում է: Լավ, մենք ունեինք մի որոշ հանձնարարություն, որի համար սկսեցինք այս ճամփորդությունը: Մենք պարտավոր էինք մտածել նախ և առաջ նրա մասին: Ինչո՞ւ եկանք այս կողմերը, ուր չկան հայ զինվորներ: Ի՞նչ հաշիվ պիտի ներկայացնենք այն մարդկանց, որոնք մեզ ուղարկել են որոշ հույսերով:

Երեք շաբաթ է թափառում ենք: Ինչ ենք արել, բացի ամեն օր առավոտյան ձի նստելուց և երեկոյան իջնելուց: Ամենուրեք լսել ենք նույն աղիողորմ գանգատները, տեսել ենք նույն դառն արցունքները: Կարողացե՞լ ենք արդյոք մի կաթիլ արցունք սրբել: Ոչ: Խոսել ենք, միմիայն խոսել և… քաջալերել շաբլոն խոսքերով:

Այդքան, իհարկե, կարող էինք անել, բայց ի՞նչ իրավունքով մենք հույսեր ներշնչեցինք ապաբախտ ժողովրդին: Հույսեր, որոնց իրագործման մեջ մենք ինքներս դեռ համոզված չենք: Մի՞թե մենք մեզ վրա չենք վերցրել մի մեծ բարոյական պատասխանատվություն: Այդ թշվառ ժողովրդի կյանքը քարշ է ընկած մի բարակ թելի վրա: Մի թեթև շարժում ռուս բանակի հետ կամ առաջ, և նա պիտի նորից դառնա քավության նոխազ: Ի՞նչ պիտի մտածե նա մեր գրեթե թեթևամիտ խոստումների մասին այն պահին, երբ քուրդի սուրը պիտի ցցվի նրա սրտին:

Ոչ չպիտի խոսեինք, չպիտի քարոզեինք, չպիտի մանավանդ հանդգնեինք մեր անզոր ձեռքով ապագայի վարագույրը շոշափել: Մենք միայն ունեինք իրավունք ասելու, միայն մի բան, ուրիշ ոչինչ:

— Հայ ժողովուրդ, ես խոնարհվում եմ քո տանջանքների առջև: Դու կրել ես քո ծանր խաչը, շարունակիր կրել նույն անսպառ համբերությամբ: Իսկ ապագա՞ն… Նա թանձր խավարի մեջ է, և մեր աչքերն այնքան սուր չեն, որ տեսնեն նրան… Ո՞վ գիտե, գուցե շների այդ սոսկալի ոռնոցն ավելի է գուշակում, քան մենք…

Մոսունից դուրս եկանք հետևյալ օրն առավոտյան կանուխ և նույն օրն իրիկնադեմին հասանք Իգդիր: Ճանապարհը գրեթե նույնն էր, ինչ-որ Դիադինից մինչև Մոսուն, բայց ոչ առանց երեկվա նեղությունների, քանի որ գնում էինք լուսով:

Իգդիրի հայերի շատ խորը թաղված, շատ փոքրիկ և շատ խելոք աչքերը, պղնձագույն (եթե չասեմ սև) դեմքերի վրա, մեզ դիմավորեցին նույն տարակուսանքով, որով ճանապարհ էին դրել:

«Այդ մարդիկ ո՞ւր գնացին, ինչո՞ւ վերադարձան…»:

Տեր-Նիկոլն ասաց.

— Ես գնում եմ Թիֆլիս:

Եվ գնաց:

Անցանք Էջմիածին, երկու օր հանգստացանք: Նորից վայելեցի իմ բարեկամ Բաբկենի հյուրասիրությունը:

Գնացինք Երևան, նորընտիր քաղաքագլխին ողջ և առողջ երկու օրով հանձնելով երևանցիներին, ուղևորվեցինք Ալեքսանդրապոլ:

Վերադարձանք Ալեքսանդրապոլ: Մնում էր ամենագլխավորը: Դրա մասին նոր պիտի մտածեինք: Սակայն չար լուրերն արդեն կորցրել էին իրենց սրությունը: Բանսարկությունները անզոր էին եղել հայ զինվորի հավատարմության և քաջության հռչակը նսեմացնելու, և շատ բանսարկուներ իրենք էին խոստովանել իրենց սխալը: Այլևս ավելորդ էր մեր միսիան:

Այնուամենայնիվ, իմ ընկերները կամեցան գնալ Սարիղամիշ և այնտեղից դեպի աջակողմյան բանակի առաջին դիրքերը: Ես համաձայնեցի գնալ: Ինչո՞ւ չօգտվել դեպքից և չգնալ այն տեղերը, ուր շատ քչերին է թույլ տրվում գնալու:

Անձամբ ես ունեի և մի ուրիշ նպատակ — տեսնել որդուս, որ հրամանատար Բ.-ի շտաբումն էր:

Ուղևորվեցինք Վարս:

— Ի՞նչպես,— ասացին մեզ այդտեղ,— դուք գնում եք դիրքերը դատարկ ձեռքո՞վ: Այդ անկարելի է, մենք թույլ չենք տա:

Բանն այն է, որ ինչ որ Թիֆլիսում մեզ տվել էին, արդեն բաժանել էինք կամավորներին և ռուս զինվորներին: Այժմ ոչինչ չունեինք:

Անմիջապես տեղական բյուրոն գնեց կես միլիոն ծխախոտ, 100 տուփ շաքար, 3-4 տուփ թեյ և այլն, մասամբ յուր և մասամբ Թիֆլիսի բյուրոյի հաշվին: Հանդիպեցինք Ռումինիայից եկած կամավորներին, որոնց թիվը երեք թե չորս հարյուր էր: Ինչ-որ պատճառներով նրանց մեջ երկպառակություն էր ծագել և խումբը բաժանվեք էր երկու կուսակցությունների: Հայ ազգի օֆիցեր Ջ-ցը աշխատում էր նրանց հաշտեցնել և պատրաստ էր խմբի ղեկավարությունն իր վրա ընդունելու: Կարծեմ այդպես էլ եղավ:

Դեկտեմբերի տասնմեկն էր, երբ մենք հասանք Սարիղամիշ:

Ճիշտ նախընթաց օրն այն նշանավոր կռվի, որ տևեց մոտ երկու շաբաթ և որ այնքան ճակատագրական եղավ էնվեր փաշայի հանդուգն ավանտյուրայի համար:

Երեք հոգի, որոնց թվում և ես, օթևան գտանք տեղական վաճառական Մատթևոս Տեր-Ստեփանյանցի մաքուր բնակարանում: Մնացյալ մեր ընկերները հյուրընկալվեցին մի ուրիշ վաճառականի մոտ: Այդ օրը Սարիղամիշը միանգամայն հանգիստ էր: Պարզ էր, որ ոչ ոք չէր սպասում, որ շուտով խեղճ ավանը դառնալու է կատաղի կռիվներից մեկի ասպարեզը: Շուկան ու փողոցները լիքն էին զինվորներով, որոնք անզեն, անգործ պտտում էին դեսուդեն, զրուցելով խաղաղ տեղացիների հետ:

Եկավ տեղական հայ քահանան և նկարագրեց գաղթականների դրությունը: Շարժումը սկսվել էր ռուս զորքերի Քեփրի-Քյոլից նահանջելու միջոցին, կեսգիշերին: Կազակներն ահագին օգնություն էին ցույց տվել կանանց և մանավանդ երեխաներին, տալով նրանց իրենց ձիերը, տաք վերնազգեստները և շատերին կերակրելով: Մի շարք կազակներ երեք, չորս օր պահել ու կերակրել էին երեխաներին մինչև նրանց ծնողների գտնվելը:

Գաղթականների ընդհանուր թիվն էր այդ ժամանակ ոչ ավելի քան 8000 հոգի: Սարիղամիշն էր գլխավոր կենտրոնը և այդտեղից էին նրանց ցրում շրջակա գյուղերը:

Այցելեցինք թշվառներին և վկա եղանք, տեղական նպաստամատույց հանձնաժողովի եռանդուն գործունեությանը:

Քահանան գանգատվեց գաղթականների ծուլության վրա: Զինվորական իշխանությունն առողջ տղամարդկանցից առաջարկում է ոչ զինվորական գործ՝ օրական 1ռ 40կ, վարձով, հրաժարվում են աշխատելու, գերադասելով մուրացկանությունը:

Տեղեկացանք, որ Սարիղամիշումն է գտնվում գլխավոր հրամանատարի օգնական գեներալ Մ.-կին: Բարվոք համարեցինք դիրքերն ուղևորվելուց առաջ ներկայացնալ նրան: Մեր ընկերներից մեկը գնաց և լուր բերեց, թե գեներալը չափազանց զբաղված է և վաղն ինքը կհայտնի, թե որ ժամին կարող է մեզ ընդունել:

Պարզ էր, որ գեներալի Սարիղամիշ գալը և երկաթուղու գնացքում մնալն ունի լուրջ պատճառներ, հետևաբար, մեր այցելությունն էլ շատ հարմար չէ…

## XXII

Չեմ հիշում առավոտյան որ ժամն էր, համենայն դեպս դրսում տակավին մութն էր, երբ սենյակիս դռները դղրդալով բացվեցին, և ես լսեցի.

— Վերկացեք, թուրքերը գալիս են:

Խաչատրյանցն ու Խունունցն էին, որ գիշերել էին այն մյուս վաճառականի տանը:

Ինձ թվաց, որ նրանք կատակ են անում: Սակայն, երբ լամպը վառելով տեսա Խունունցի փափախի առանձին դիրքը, իսկույն հասկացա, որ իրերի վիճակն այս անգամ բացառիկ է:

— Դուք ո՞րտեղից իմացաք թուրքերի գալը,— հարցրի ես:

— Այն բնակարանում, ուր մենք գիշերեցինք, կենում է մի գնդապետ,— պատասխանեց Խաչատրյանցը:— Սրանից կես ժամ առաջ սուրհանդակ եկավ և լուր հաղորդեց նրան:

Խունունցը քաջ գիտենալով, որ նման դեպքերում անվեհեր մարդիկ չպիտի կորցնեն իրենց սառնասրտությունը, ձեռքերը խոթեց վարտիքի գրպանները, փորը դուրս ցցեց և արտասանեց.

— Մեր ճամփորդությունը դառնում է հետաքրքրականն:

Մյուս սենյակից լսվեց Հովհաննես Թումանյանի ձայնը.

— Ափսոս իմ մաուզեր, որ Գարոն խլեց...

Ինչ վերաբերում է Խորեն եպիսկոպոսին, նա երեսը շուռ տվեց պատին, ասելով.

— Գալիս են թուրքերը, թող գան:

Այսպես թե այնպես, ամենքն էլ քաջ էին, բացի ինձնից:

Ես ուղղակի վախենում էի թուրքերից:

Հարցնում եմ՝ հրացան ունե՞ս:

— Ունեմ:

— Բեր այստեղ:

Մատթևոս Տեր-Ստեփանյանցը, որի ծանրությունը համենայնդեպս ութ փթից պակաս չէր լինի, գնաց և բերեց մի ժանգոտած բերդան: Հովհաննես Թումանյանը հմուտ զինագետի խորհրդավոր դեմքով զննեց հրացանը, մի քանի անգամ կոթը հենեց ուսին, դեսուդեն նշան գրեց և վերջն ասաց.

— Անպետք բան է: Ախ իմ մաուզեր...

Ներս մտավ օֆիցեր Ջ-ցը, որ մեզ հետ Սարիղամիշ էր եկել, և ասաց.

— Բարդուսը թուրքերը գրավել են երեկ ցերեկվա ժամը երեքին: Այստեղից մինչև Բարդուս ընդամենը 25 վերստ է: Իմ հաշվով թուրքերն այստեղ կլինեն մի քանի ժամից հետո, եթե, իհարկե, խոշոր դիմադրության չհանդիպեն: Այսպես թե այնպես, ձեր այստեղ մնալը ավելորդ է: — Իսկ ես կմնամ,— արտասանեց եպիսկոպոսը, որ տակավին պառկած էր:

— Սրբազա՛ն:

— Կմնամ:

Մինչև մենք վիճում էինք, ներս մտավ մի կամավոր մի հսկա մարդու հետ, որ հագած էր կարճ պիջակ և չափազանց լայն վարտիք:

— Թուրքերը ութ վերստի վրա են,— ասաց կամավորը:

— Ի՞նչ գիտեք:

— Բարդուսիցն եմ գալիս: Քեռիի խմբիցն եմ:

— Կռվեցի՞ք:

— Այո:

— Ո՞րտեղ է այժմ խումբը:

— Ցարդվեց: Մի մասը կտրվեց մեզանից ու մնաց ձորում, մյուս մասը փախավ այստեղ 23 հոգով, Ք.-ին 150 մարդով բարձրացավ լեռները:

— Շա՞տ մարդ սպանվեց խմբից:

— Բավական:

— Էդ անիծվածները գալիս են Չաթախի վրա,— մեջ մտավ կարճ պիջակով և չափազանց լայն վարտիքով հաստափորը:— Գալիս են, որ երկաթուղին քանդեն:

Չաթախը Սարիղամիշից առաջին կայարանն է դեպի Ղարս:

Արդարև, հետևյալ օրը թուրքերը ավերեցին այն:

Որոշեցինք գնալ կայարան: Այնտեղ միայն կարելի էր նորություններ իմանալ:

Մեր տրամադրության տակ կար միայն մի կառք, այնինչ մենք յոթ հոգի էինք, իսկ կայարանը չորս վերստի վրա էր:

Երբ անցնում էինք շուկայով, չնկատեցի ոչ մի իրարանցում: Ավանը հանգիստ էր: Պարզ էր, որ ազգաբնակությունը դեռ ոչինչ չգիտե:

Կայարանը լիքն էր ամեն աստիճանի օֆիցերներով ու բժիշկներով: Բայց այդտեղ էլ ամեն ինչ հանգիստ էր: Մարդիկ բուֆետի երկար սեղանի քով նստած, խմում էին առավոտյան թեյք, ուրախ ու զվարթ զրուցելով գթության քույրերի հետ, որոնցից չորսին վիճակված էր շուտով գերի ընկնել թուրքերի ձեռքը երկրորդ սանիտարական գնացքի հետ:

Օրը պարզ էր, արեգակնային, սառնամանիքը դուրեկան: Ավանը շրջապատող ձյունապատ բլուրների վրա եղևնիի մուգ կանաչագույն անտառները սփռվել էին ինչպես կախարդական գորգեր: Հատ-հատ ծառերը թվում էին վիթխարի պահապաններ, որ հսկում էին ավանի ապահովությանը: Նորեկ ձյունի մակերևույթը պայծառ արեգակի տակ փայլում էր միլիարդավոր ադամանդներով:

Ո՞վ կարող էր ասել, որ բնության այդ անապական զգեստը շուտով պիտի ներկվի մարդկային արյունով և այդ սքանչելի անտառները պիտի թնդան գնդացիրների որոտից: Ո՞վ կարող է գուշակել, որ այդ հարուստ ավանը մի քանի օրում պիտի դառնա քսան հազար մարդկային էակների գերեզման…

Պատահեցինք Պետական Դումայի անդամ Միքայել Պապաջանյանցին մի խումբ բաքվեցիների հետ: Նրանք գալիս էին Միջինկերտից, ուր գտնվում էր այդ ժամանակվա հրամանատար գեներալ Բ.-նի շտաբը: Նրանք ոչինչ չէին լսել թուրքերի արշավանքի մասին:

Երկաթուղու գծի վրա կանգնած էր միայն մի մարդատար գնացք: Այնտեղ էր գլխավոր հրամանատարի այն ժամանակվա օգնական գեներալ Մ.-կին: Օֆիցերները հերթով մտնում էին նրա վագոնը և դուրս գալիս մտազբաղ դեմքով: Դա միակ նշանն էր, թե սպասվում է ինչ-որ արտակարգ բան: Մնացյալը սովորական էր: Աջ ու ձախ լսվում էր

խոսակցություն առօրյա դեպքերի մասին: Մի խումբ երիտասարդ օֆիցերներ շրջապատել էին մի քանի էլեգանտ տիկինների, որ չգիտեմ ինչպես էր, որ գտնվում էին այդտեղ: Շատերը օֆիցերներից անբեղ, անմորուս պատանիներ էին:

Կայարանից մի փոքր հեռու մի օֆիցեր զինվորներին փամփուշտ էր բաժանում: Դա այն դրուժինան էր, որ այն պատմելի հերոսություն ցույց տվեց Սարիղամիշի առաջին պաշտպանության ժամանակ:

Դիմացի լեռան ստորոտում երևաց մի երկայն և սև գիծ, որ վիթխարի վիշապի պես գալարվում էր դեպի ձախ:

— Թուրքե՛րը,— գռչեց, չգիտեմ ով, երևի կատակով:

— Ոչ, մերոնք են:

Դա մի բատալիոն էր, որ գնում էր դեպի Վերին Սարիղամիշ: Շուտով վիշապը թաքնվեց ձախակողմյան կիրճում: Դրսում մնաց նրա լայն պոչը: Դրանց բատալիոնի մթերակիր սայլերն էին, որ մինչև երեկո մնացին միևնույն տեղում:

Ժամի չորսն էր, երբ մերձավոր լեռների հետևից լսվեց ռաջին համազարկը:

Կայարանի հասարակությունը դուրս թափվեց և բոլորի հայացքները դարձան Վերին Սարիղամիշի կողմը, որ գտնվում է երեք վերստի վրա, բլուրների մեջ:

Պլատֆորմի վրա երևաց գեներալ Մ.-կին՝ ձեռին մի ահագին հեռադիտակ, շրջապատված գլխավոր շտաբի օֆիցերներով:

Հրացանաձգությունը քանի գնում սաստկանում էր: Պարզ էր, որ կռիվը հետզհետե մոտենում էր Սարիղամիշին:

Պլատֆորմով անցկացրին մի խումբ թուրք գերիներ, որոնք բերում էին Միջինկերտից: Ասացին, որ գերիներից յոթը հայեր են: Զինվորները նրանց քշեցին և թափեցին ապրանքատար վագոնների մեջ:

— Տեսնո՞ւմ եք վիրավորյալներին,— դարձավ ինձ մի սրատես:

— Ո՞ւր են:

— Այ, դիմացի լեռան վրա: Նրանց իջեցնում են թևերից բռնած:

Ամբոխի միջից լսվեց կանացի հեկեկանք: Նայեցի էլեգանտ տիկիններից մեկն էր, մայրը թե քույրը մի անբեղ անմորուս օֆիցերի, որ կանգնած էր նրա առջև գունատ, ինչպես կտավ:

— Հանգստացիր,— քաջալերում էր պատանին ավելի իրեն, քան տիկնոջը բռնազբոսիկ ժպտալով,— մենք առայժմ պահեստումն ենք: Դե լավ, բավական է: Դեռ, փառք աստծու, կենդանի եմ: Դատարկ բան է, ավազակների խումբ է, իսկույն կցրենք դեսուդեն:

Տիկինը շարունակ հեկեկում էր: Պատանի օֆիցերը, արագ գրկելով նրան՝ համբուրեց և չքացավ ամբոխի մեջ:

Օրը մթնում էր: Միակ մարդատար գնացքն արդեն պատրաստվում էր ուղևորվելու: Ով գիտե, գուցե վերջինն է, մտածեցինք մենք և սկսեցինք հոգալ տեղերի մասին: Գեներալ Մ.-կին բարին եղավ մեզ և բաքվեցիներին հատկացնել առանձին վագոն:

Այնինչ խուճապն արդեն կատարում էր իր գործը: Ամբողջ Սարիղամիշը դիմում էր դեպի կայարան: Պլատֆորմն արդեն լիքն էր կանանցով ու երեխաներով:

— Պապա,— լսեցի հանկարծ ամբոխի միջից:

Որդիս էր, որ ամբոխը ճեղքելով մոտենում էր ինձ: Լսելով իմ Սարիղամիշում գտնվելու մասին, նա շտապել էր Միջինկերտից գալ ինձ հետ տեսնվելու համար:

Հանդիպումն ինձ այնքան չուրախացրեց, որքան տրտմեցրեց: Նախազգում էի, որ շուտով թուրքերը պիտի Սարիղամիշը կտրեն Միջինկերտից, այսինքն գեներալ Բ.-ի զորաբանակից, որ այդ ժամանակ գտնվում էր Միջինկերտից էլ 25 վերստ հեռու, թուրքական հողի վրա:

— Դու պիտի վերադառնա՞ս,— հարցրի ես սրտատրոփ:

— Պարտավոր եմ:

— Իսկո՞ւյն:

— Ոչ, վաղն առավոտյան կանուխ:

— Բայց լսո՞ւմ ես հրացանների որոտը:

— Օթոմոբիլը մի ժամում ինձ Միջինկերտ կհասցնե, և ես կլինեմ շտաբում:

— Եթե միայն թուրքերը ճանապարհ տան: Մենք բաժանվեցինք: Երբ նա անհայտացավ իրիկնային մթության մեջ, արցունքը խեղդեց կոկորդս, և ես չկարողացա ինձ զսպել: Անողոք է պատերազմը…

Իմ չար նախազգացումն արդարացավ. մեր դուրս գալու երեկո թուրքերը Սարիղամիշը կտրեցին Միջինկերտից: Վերադառնալով Թիֆլիս, ամբողջ երեք շաբաթ ես լուր չունեի որդուս մասին: Բոլոր իմ հեռագիրները մնացին անպատասխան: Միայն ամբողջ երեք շաբաթ անցած լուր ստացա որդուցս: Հայտնվեց. որ նա տասներկու օր գտնվել է մի կողմից ռուս, մյուս կողմից թուրք ռումբերի ու շրապնելների տարափի տակ մի գեներալի և երկու գնդապետների հետ փակված Սարիղամիշի տնակներից մեկում:

Այսպես, ուրեմն, մենք վերադարձանք Թիֆլիս, հնարավորություն չունենալով կատարել մեր վրա դրված պարտականությունը…